

Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ  
ԳԱՏԱՐԱՆ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆ**

Խմբագրական  
խորհուրդ՝

Ն. Թովմասյան  
Ա. Գյուլումյան  
Ֆ. Թոխյան  
Ա. Թունյան  
Ա. Խաչատրյան  
Ն. Նազարյան  
Ա. Պետրոսյան

Խմբագրության հասցեն՝  
Երևան, Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 011-58-81-81(189)

**ՏԵՂԵԿԱԳԻՐ**

3(95)  
2019

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## • ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1466-1478)

- \* 2018 թվականի Դեկտեմբերի 4-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1466, 2 հուլիսի 2019 թվականի).....5
- \* ԱՇՈՏ ԿՈՒՅՈՒՄՁՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 16-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 172-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1467, 2 հուլիսի 2019 թվականի).....10
- \* 2019 թվականի Հունվարի 30-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԻՋԵՎ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1468, 9 հուլիսի 2019 թվականի).....22
- \* 2018 թվականի Նոյեմբերի 8-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «2002 թվականի Հոկտեմբերի 7-ի ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐՐՈՐԴ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1469, 9 հուլիսի 2019 թվականի).....26
- \* 2018 թվականի Նոյեմբերի 8-ին ԱՍՏԱՆԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «2002 թվականի Հոկտեմբերի 7-ի՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԿՐՈՐԴ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1470, 9 հուլիսի 2019 թվականի).....30

- \* 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «1992 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 15-Ի՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԿՐՈՐԴ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1471, 9 հուլիսի 2019 թվականի).....34
  
- \* 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐՈՒՄԱՂԵՄԻ ՍԲ. ՀՈՎՀԱՆՆԵՄԻ, ՀՌՈՂՈՍԻ ԵՎ ՄԱԼԹԱՅԻ ԻՆՔԻԻՇԽԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԲԱՐԵԽՆԱՄ ՈՒԽՏԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾՄԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1472, 9 հուլիսի 2019 թվականի) .....37
  
- \* 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԱՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾՄԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1473, 9 հուլիսի 2019 թվականի).....42
  
- \* 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-ԻՆ ԿՈՊԵՆՀԱԳԵՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՅԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՏԻԱՅՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1474, 9 հուլիսի 2019 թվականի).....46
  
- \* ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇՄԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 20-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1475, 12 հուլիսի 2019 թվականի).....51
  
- \* ՌՈՒՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 35-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՎ 135-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1476, 4 սեպտեմբերի 2019 թվականի) .....64

* ՍԵՎԱԿ ՀԱՃԻ ՀԱԿՈՔՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԲԱՐ՝ 368-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝ «ԲՈՂՈՔԸ ԳՈՐԾԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՆՁԱՆՑ... ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ» ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ 371-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝ «ԿՐԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔՈՒՄ ԱՌԿԱ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ...» ԴՐՈՒՅԹԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1477, 24 սեպտեմբերի 2019 թվականի).....	120
* 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՎԻՋԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԴՅՈՒՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1478, 24 սեպտեմբերի 2019 թվականի).....	136

**• ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

* ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԵՎ «ԿՈՆՐԱԴ ԱԴԵՆԱՈՒԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՑՈՒՂԻ ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՓՈԽԸՄԲՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ .....	140
* ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ԳՈՇԱՎԱՆՔ .....	140
* ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱԿ-Ի ՋԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ .....	142
* ՀԱՆԴԻՊՈՒՄ «ԿՈՆՐԱԴ ԱԴԵՆԱՈՒԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԵՏ .....	143
* ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ՓԱՐԻՉՈՒՄ .....	144
* ՀՀ ՄԴ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՍԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ .....	145



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵԼԳԻԱՅԻ  
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ  
ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ  
ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 հուլիսի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Ա. Ադոնցի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների, դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի դեկտեմբերի 4-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության

և Բելգիայի Թագավորության միջև դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անձնակազմի ընտանիքի անդամների վարձատրվող աշխատանքի վերաբերյալ» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի մայիսի 14-ին Սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր Բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. «Հայաստանի Հանրապետության և Բելգիայի Թագավորության միջև դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անձնակազմի ընտանիքի անդամների վարձատրվող աշխատանքի վերաբերյալ» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի դեկտեմբերի 4-ին Բրյուսելում:

2. Համաձայնագրով փոխադարձության սկզբունքի, միջազգային իրավունքի սահմանված նորմերի ու սկզբունքների և իրենց պետությունների ներպետական օրենսդրության հիման վրա Կողմերը համաձայնվում են թույլատրել ուղարկող Պետության դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անձնակազմի ընտանիքի համապատասխան անդամներին՝ ընդունող Պետության տարածքում կատարել վարձատրվող աշխատանք (հոդվ. 1):

3. Ըստ Համաձայնագրի՝ վարձատրվող աշխատանքով զբաղվելու թույլտվությունը տրվում է ընդունող Պետության իշխանությունների կողմից՝ համաձայն այդ պետության օրենքների ու կանոնակարգերի և Համաձայնագրի դրույթներին համապատասխան (հոդվ. 3, կետ 1): Միաժամանակ, նույն Համաձայնագրի համաձայն՝ այդպիսի թույլտվությունը չի տարածվում ընդունող Պետության քաղաքացիների կամ նրա տարածքում մշտական բնակություն ունեցող

անձանց վրա (հոդվ. 3, կետ 2): Թույլտվությունը պետք է գործի այն ժամկետի ընթացքում, որով դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի անձնակազմը նշանակված է ընդունող Պետության տարածքում ուղարկող Պետության դիվանագիտական ներկայացուցչությունում կամ հյուպատոսական հիմնարկում մինչև լիազորությունների ժամկետի ավարտը (հոդվ. 3, կետ 4):

4. Համաձայնագրով նախատեսված այն դեպքերում, երբ վարձատրվող աշխատանք կատարելու թույլտվություն ունեցող շահառուն ՄԱԿ-ի 1961 թվականի «Դիվանագիտական հարաբերությունների մասին» և 1963 թվականի «Հյուպատոսական հարաբերությունների մասին» Վիեննայի կոնվենցիաների (այսուհետ՝ Վիեննայի կոնվենցիաներ) կամ ցանկացած այլ կիրառելի միջազգային փաստաթղթի դրույթների համաձայն, օգտվում է ընդունող Պետության քաղաքացիական և վարչական իրավագործության անձեռնմխելիությունից, այսպիսի անձեռնմխելիությունը չի տարածվում վարձատրվող աշխատանքի ընթացքում կատարված ցանկացած գործողության վրա, և նրա վրա տարածվում է ընդունող Պետության քաղաքացիական կամ վարչական օրենսդրությունը (հոդվ. 5):

5. Համաձայնագրով նախատեսված այն դեպքերում, երբ վարձատրվող աշխատանք կատարելու թույլտվություն ստացած շահառուն Վիեննայի կոնվենցիաների կամ ցանկացած այլ կիրառելի միջազգային փաստաթղթի դրույթների համաձայն, օգտվում է ընդունող Պետության քրեական իրավագործության անձեռնմխելիությունից.

ա) ուղարկող Պետությունը պետք է հրաժարվի վարձատրվող աշխատանքի թույլտվություն ստացած շահառուի քրեական իրավագործության անձեռնմխելիությունից վարձատրվող աշխատանքից բխող ցանկացած գործողության կամ անգործության նկատմամբ բացի այն հատուկ դեպքերից, երբ ուղարկող Պետությունը գտնում է, որ նման հրաժարումը կարող է հակասել իր շահերին,

բ) քրեական իրավագործության անձեռնմխելիությունից նման հրաժարումը չպետք է մեկնաբանվի որպես դատավճռի իրականացումից անձեռնմխելիության վրա տարածում, որի համար կպահանջվի հատուկ հրաժարում: Նման հարցում ստանալու դեպքում ուղարկող Պետությունը պետք է լրջորեն դիտարկի ընդունող Պետության խնդրանքը (հոդվ. 6):

6. Ըստ Համաձայնագրի՝ Վիեննայի կոնվենցիաների կամ ցանկացած այլ կիրառելի միջազգային փաստաթղթի դրույթների համաձայն՝ վարձատրվող աշխատանք կատարելու թույլտվություն ստացած շահառուները ընդունող Պետությունում ենթակա են հարկման և սոցիալական ապահովության ռեժիմներին այդ Պետությունում իրենց վարձատրվող աշխատանքի հետ կապված բոլոր առումներով (հոդվ. 7):

7. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

ա) որպես ընդունող Պետություն՝ տալ վարձատրվող աշխատանքով զբաղվելու թույլտվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքների, կանոնակարգերի և Համաձայնագրի դրույթներին համապատասխան (հոդվ. 3, կետ 1),

բ) որպես ուղարկող Պետություն՝ ապահովել, որ վարձատրվող աշխատանք կատարելու թույլտվության բոլոր դիմումները շահառուի անունից ՀՀ դեսպանության կողմից ուղարկվեն Բելգիայի Թագավորության արտաքին առևտրի և զարգացման համագործակցության արտաքին գործերի դաշնային, հանրային ծառայության արարողակարգի բաժին (հոդվ. 4, կետ 1),

գ) որպես ընդունող Պետություն՝ Բելգիայի Թագավորության դիվանագիտական ներկայացուցչության և հյուպատոսական հիմնարկների անձնակազմի ընտանիքի անդամ լինելը հավաստելուց և պաշտոնական հարցմանն ընթացք տալուց հետո Բելգիայի Թագավորության դեսպանությանը ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից տեղեկացնել, որ ընտանիքի անդամն ունի վարձատրվող աշխատանք կատարելու իրավունք (հոդվ. 4, կետ 2),

դ) որպես ուղարկող Պետություն՝ հրաժարվել դատարանի ցանկացած վճռի կատարման անձեռնմխելիությունից՝ կապված այն դեպքերի հետ, երբ ընդունող Պետության քաղաքացիական և վարչական իրավագործության անձեռնմխելիությունը չի տարածվում այդ պետությունում վարձատրվող աշխատանքի ընթացքում կատարված ցանկացած գործողության վրա (հոդվ. 5),

ե) ապահովել, որ Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված ցանկացած տարաձայնություն լուծվի Կողմերի միջև խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով (հոդվ. 9):



8. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրում հղում է կատարվում մի շարք միջազգային փաստաթղթերի, մասնավորապես՝ ՄԱԿ-ի 1961 թվականի «Դիվանագիտական հարաբերությունների մասին» Վիեննայի կոնվենցիային (Հայաստանի Հանրապետությունը կոնվենցիային միացել է Գերագույն Խորհրդի 06.10.1992 թ. Հ.Ն-0703-Ի որոշմամբ), 1963 թվականի «Հյուպատոսական հարաբերությունների մասին» Վիեննայի կոնվենցիային (Հայաստանի Հանրապետությունը կոնվենցիային միացել է Գերագույն Խորհրդի 06.10.1992 թ. Հ.Ն-0700-Ի որոշմամբ):

9. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին, մասնավորապես՝ նպատակաուղղված են պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2018 թվականի դեկտեմբերի 4-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Բելգիայի Թագավորության միջև դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անձնակազմի ընտանիքի անդամների վարձատրվող աշխատանքի վերաբերյալ» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

2 հուլիսի 2019 թվականի  
ՄԴՈ-1466



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԱՇՈՏ ԿՈՒՅՈՒՄՁՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 16-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ  
2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 172-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 հուլիսի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի ներկայացուցիչ՝ փաստաբան Կ. Մեժլումյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ Ա. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Աշոտ Կույումջյանի դիմումի հիման վրա Հայաստանի Հանրապետության

3(95)2019

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ

քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի և 172-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի «**Դատական վարույթի հրապարակայնությունը**» վերտառությամբ 16-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Քրեական դատավարությանը մասնակցող անձանց մասնավոր կյանքի, պատվի և արժանապատվության, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության, վարույթի մասնակիցների կամ նրանց մերձավոր ազգականների պաշտպանության նպատակով դատարանը դատավարության մասնակիցների միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ գործը կամ դրա մի մասը կարող է քննել դռնփակ դատական նիստում: Դատարանը դռնփակ դատական նիստում քննություն իրականացնում է նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում»:

Օրենսգրքի հիշյալ հոդվածը ենթարկվել է փոփոխությունների և լրացումների համապատասխանաբար՝ 25.05.2006 թ. ՀՕ-91-Ն, 17.03.2010 թ. ՀՕ-33-Ն, 16.01.2018 թ. ՀՕ-69-Ն, 23.03.2018 թ. ՀՕ-211-Ն օրենքներով:

Օրենսգրքի «**Ծառայողական և առևտրային գաղտնիքի ստացումը և պահպանումը**» վերտառությամբ 172-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է.

«5. Ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցներն այն անձանց պահանջով, որոնց սպառնում է նշված տեղեկությունների հրապարակումը, կարող են հետազոտվել դռնփակ դատական նիստում»:

Օրենսգրքի հիշյալ հոդվածը ենթարկվել է փոփոխությունների և լրացումների համապատասխանաբար՝ 14.12.2004 թ. ՀՕ-28-Ն, 27.02.2007 թ. ՀՕ-114-Ն, 22.10.2008 թ. ՀՕ-196-Ն, 24.06.2010 թ. ՀՕ-103-Ն, 21.06.2014 թ. ՀՕ-115-Ն օրենքներով:

Գործի քննության առիթը Աշոտ Կույումջյանի՝ 2019 թվականի մայիսի 2-ին Սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև Օրենսգիրքը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

### **1. Դիմողի դիրքորոշումները**

Դիմողը նշում է, որ իր գործով առաջին ատյանի դատարանում քրեական գործի դատաքննությունն ամբողջությամբ իրականացվել է դռնփակ, առևտրային գաղտնիքի պահպանման պատրվակով, ինչով խախտվել է իր գործի հրապարակային քննության՝ Սահմանադրության 63-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը:

Դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 16-րդ և 172-րդ հոդվածներն այնքանով, որքանով քրեական գործի ամբողջ դատաքննությունը դռնփակ իրականացնելու հնարավորություն են տալիս Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասով չնախատեսված դեպքերում, մասնավորապես՝ առևտրային գաղտնիքի պաշտպանության համար, հակասում են Սահմանադրության 63-րդ հոդվածին, քանի որ նշված նորմում որևէ խոսք չկա առևտրային գաղտնիքի պաշտպանության մասին, որը, փաստորեն, ստորադասվում է անձի արդար և հրապարակային դատաքննության իրավունքին:

Ելնելով վերոգրյալից՝ դիմողը խնդրում է Օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը և 172-րդ հոդվածի 5-րդ մասը՝ առևտրային գաղտնիքի և Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասով չնախատեսված այլ դեպքերում գործը դռնփակ քննելու հնարավորության մասով, ճանաչել Սահմանադրության 63-րդ հոդվածին հակասող և անվավեր:

### **2. Պատասխանողի դիրքորոշումները**

Պատասխանողը, վկայակոչելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ «յուրաքանչյուր ոք .... ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից .... հրապարակային դատաքննու-

թյան իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ դրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի, կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը»:

Հղում կատարելով Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասին՝ պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի վիճարկվող դրույթները բխում են հիշյալ սահմանադրական պահանջներից, ուստի վերջիններիս կարգավորման շրջանակները ինքնին չեն կարող չհամապատասխանել Սահմանադրությամբ ամրագրված հիշյալ դրույթին:

Պատասխանողը նաև նշում է, որ դիմողի վերաբերյալ 22.09.2017 թ. կայացված դատավճռի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հիշյալ քրեական գործով դոնփակ պայմաններում տեղի է ունեցել ընդամենը մեկ դատաքննության փուլ:

Պատասխանողը գտնում է, որ դիմողի մատնանշած իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված չէ վիճարկվող նորմերի սահմանադրականությամբ, այլ բացառապես վիճարկվող նորմերի կիրառման իրավաչափության հարց է: Պատասխանողի կարծիքով՝ դիմողը համապատասխան հիմնավորումներ չի ներկայացրել վիճարկվող դրույթների հակասահմանադրականության վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պատասխանողը կարծում է, որ Օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը և 172-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում են Սահմանադրությանը, ուստի գործի վարույթն ենթակա է կարճման:

### **3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները**

Սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը որոշելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում քննել միայն առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցների հետազոտումը դոն-

փակ դատական նիստում անցկացնելու հարցը՝ հաշվի առնելով դիմողի նկատմամբ այդ դրույթը միայն հիշյալ մասով կիրառված լինելու հանգամանքը, ինչպես նաև այն, որ Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով դռնփակ դատական նիստ անցկացնելու իրավաչափությունը կախված է օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկատվության կոնկրետ տեսակից:

Ելնելով վերոգրյալից՝ վիճարկվող դրույթների սահմանադրականությունը որոշելու համար Սահմանադրական դատարանը կարևոր է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- արդյո՞ք առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցների հետազոտումը դռնփակ դատական նիստում համապատասխանում է Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պահանջներին,

- արդյո՞ք առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցների դռնփակ դատական նիստում հետազոտումը որպես դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունքի սահմանափակման համար ընտրված միջոց, պիտանի և անհրաժեշտ է Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված նպատակներից որևէ մեկին հասնելու համար, արդյո՞ք այն համարժեք է գործի հրապարակային քննության իրավունքի նշանակությանը (Սահմանադրության 78-րդ հոդված), ինչպես նաև արդյո՞ք այն համապատասխանում է իրավական որոշակիության սկզբունքին (Սահմանադրության 79-րդ հոդված):

**4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

4.1. Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է դատական վարույթի կամ դրա մի մասի՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ դռնփակ անցկացնելու հնարավորությունը՝ ելնելով հետևյալ սահմանադրական նպատակների իրականացման անհրաժեշտությունից.

- 1) վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի պաշտպանություն,
- 2) անչափահասների շահերի պաշտպանություն,
- 3) արդարադատության շահերի պաշտպանություն,
- 4) պետական անվտանգության պաշտպանություն,
- 5) հասարակական կարգի պաշտպանություն,
- 6) բարոյականության պաշտպանություն:

Սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է արդար դատաքննության հիմնական իրավունքի բաղադրատարր հանդիսացող հրապարակային քննության իրավունքի կարևորությանը՝ հայտնելով, ի թիվս այլնի, հետևյալ սկզբունքային իրավական դիրքորոշումները.

1. «ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու համար անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: Այդ իրավունքը երաշխավորված է նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա), որի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Ընդ որում, այդ իրավունքի իրացման նվազագույն և կարևոր երաշխիքներն են՝ **հրապարակային դատաքննությունը** (մասնավորապես՝ գործը քննող դատարանի, քննության առարկա գործի, քննության վայրի, ժամանակի, դատաքննության կարգի և այլնի մասին հրապարակային տեղեկությունները), ինչպես նաև **դատական ակտի պարտադիր հրապարակումը:**

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածին համապատասխան, ինչպես նաև ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում պետության խնդիրն է օրենսդրությամբ ապահովել արդարադատության իրականացումն ընթացակարգային այնպիսի կանոններով, որոնցով երաշխավորվեն հրապարակային դատաքննության իրավունքի իրացման անհրաժեշտ իրավական պայմաններ, այդ թվում՝ նաև դատարանում գործերի քննության դատավարական ձևերի բազմազանության կիրառմամբ, ելնելով քննվող գործերի առանձնահատկություններից և դրանց արդար, արագ ու արդյունավետ լուծման անհրաժեշտությունից»: (11 ապրիլի 2012 թ. ՄԴՈ-1020),

2. «...Սահմանադրական դատարանն իրավաչափ է համարում քննչական գործողություններ կատարելու և դատավարական հարկադրանքի միջոցներ (այդ թվում՝ կալանավորում) կիրառելու մասին միջնորդությունները դռնփակ դատական նիստում քննելու կարգը:

...Դատավարական ընթացակարգերի հրապարակայնության սահմանափակումն ուղղակիորեն պայմանավորված է վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության` ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասում նախանշված պայմաններով»: (2 սեպտեմբերի 2016 թ. ՄԴՈ- 1295):

Սույն սահմանադրաիրավական վեճին վերաբերող իրավական ակտերի ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ Օրենսգրքի 172-րդ հոդվածի 5-րդ մասն ամրագրում է, ի թիվս օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների, առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցները դոնփակ դատական նիստի շրջանակներում հետազոտելու հնարավորություն:

Օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասության շրջանակներում օրենսդիրը, ըստ էության, վերարտադրելով Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասի հրապարակային դատաքննության իրավունքի սահմանափակման հիմքերը, նախատեսել է դատարանի կողմից դոնփակ դատական վարույթ անցկացնելու հնարավորություն ինչպես դատավարության մասնակիցների միջնորդությամբ, այնպես էլ` դատարանի նախաձեռնությամբ: Մինչդեռ Օրենսգրքի 172-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված իրավակարգավորման շրջանակներում օրենսդիրն ամրագրել է դատարանի կողմից դոնփակ դատական վարույթ անցկացնելու հնարավորություն այն անձանց պահանջով, որոնց սպառնում է օրենքով պաշտպանվող տեղեկությունների հրապարակումը:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոգրյալ օրենսդրական կարգավորումներից հետևում է, որ դոնփակ դատական նիստի շրջանակներում օրենքով պաշտպանվող գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցների հետազոտման նպատակը այն անձանց շահերի պաշտպանությունն է, որոնց սպառնում է նշված տեղեկությունների հրապարակումը:

Միննույն ժամանակ Սահմանադրական դատարանը փաստում է, որ առևտրային գաղտնիքի պաշտպանությունը նյութական իրավունքում հիմնականում իրականացվում է քաղաքացիական, քրեական, ինչպես նաև աշխատանքային օրենսդրության շրջանակներում:



Այսպես՝ առևտրային գաղտնիքի պաշտպանության վերաբերյալ իրավակարգավորումներ առկա են Քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածում, Քրեական օրենսգրքի սեփականության, տնտեսության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ բաժնի 21-րդ գլխում ամրագրված 199-րդ հոդվածում, ինչպես նաև Աշխատանքային օրենսգրքի 122-րդ հոդվածում:

Դիտարկելով սույն սահմանադրաիրավական վեճի առարկան դատավարական օրենսգրքերի համատեքստում՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ըստ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի՝ դատավարության մասնակիցների **մասնավոր կյանքի, ներառյալ՝ առևտրային գաղտնիքի**, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ գործը կամ դրա մի մասը կարող է քննել դռնփակ դատական նիստում:

Նույնաբովանդակ իրավակարգավորում առկա է նաև Վարչական դատավարության օրենսգրքում, մասնավորապես՝ Վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ **վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, ներառյալ՝ առևտրային գաղտնիքի**, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով դատարանը վարչական դատավարության մասնակցի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ գործը կամ դրա մի մասը կարող է քննել դռնփակ դատական նիստում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առևտրային գաղտնիքը դատավարական օրենսդրության շրջանակներում ենթակա է պաշտպանության հիմնականում որպես վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի բաղադրատարր, քանի որ առևտրային գաղտնիքը, ունենալով իրական կամ պոտենցիալ տնտեսական նշանակություն (առևտրային արժեք), ներառում է որևէ մասնավոր անձի առնչվող այնպիսի տեղեկություններ, որոնք հանրամատչելի չեն, հասանելի չեն այլ անձանց, իսկ դրանց գաղտնիությունն օրենքով երաշխավորված է և պաշտպանվում է տվյալ մասնավոր անձի

կողմից: Ընդամին, Քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ այն տեղեկությունները, որոնք չեն կարող լինել առևտրային գաղտնիք, սահմանվում են օրենքով:

Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով այն, որ սույն գործի շրջանակներում չեն վիճարկվում առևտրային գաղտնիքը սահմանող իրավակարգավորումները, այնուամենայնիվ փաստում է, որ առկա է դատավարական շրջանակներում առևտրային գաղտնիքի՝ որպես որևէ դատավարության մասնակցի՝ մասնավոր կյանքին առնչվող տեղեկություններ պաշտպանելու՝ Սահմանադրության տեսանկյունից արդարացված անհրաժեշտություն:

Հետևապես, Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարության վարույթի մի մասը՝ առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցների հետազոտումը, դռնփակ դատական նիստում անցկացնելու անհրաժեշտությունը միանգամայն համահունչ է վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի պաշտպանության նպատակին:

Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի պաշտպանության սահմանադրական նպատակն իր մեջ ներառում է նաև առևտրային գաղտնիքի պաշտպանությունը, այսինքն՝ պետությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել մասնավոր կյանքի մաս կազմող առևտրային գաղտնիքի պաշտպանության համար:

Ի լրումն վերոգրյալի՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների հրապարակումը կարող է բացասական հետևանք ունենալ ոչ միայն կոնկրետ անձի շահերի պաշտպանության տեսանկյունից, այլ նաև մի շարք սահմանադրական արժեքների պաշտպանության, մասնավորապես՝ տնտեսական կարգի հիմք հանդիսացող ազատ տնտեսական մրցակցության տեսանկյունից, ինչպես նաև խոչընդոտել տնտեսական ոլորտում պետության՝ Սահմանադրությամբ ամրագրված քաղաքականության հիմնական նպատակների իրականացմանը:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև «առևտրային գաղտնիք» եզրույթը Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասում ուղղակիորեն ամրագրված չէ, սակայն այն անձանց մասնավոր կյանքի և տնտեսական գործու-

նեության համար հիմնարար նշանակություն ունի, և դրա պաշտպանությունը իրավաչափ հիմք է հրապարակային քննության հիմնական իրավունքը սահմանափակելու համար:

Այդ առումով Օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով և 172-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված դրույթներն այնքանով, որքանով ամրագրում են դոնփակ դատական նիստում առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցների հետազոտման հնարավորություն, համապատասխանում են Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասին:

**4.2.** Անդրադառնալով իրավունքների սահմանափակման համաչափության և որոշակիության սկզբունքների պահպանվածության հարցին Սահմանադրական դատարանը փաստում է, որ վիճարկվող կարգավորումներն առնչվում են առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցները դոնփակ դատական նիստում հետազոտելուն, այսինքն՝ սահմանափակումը վերաբերում է գործի մաս կազմող կոնկրետ դատական նիստին, որի ընթացքում առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցները պետք է հետազոտվեն:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատական նիստը՝ ապացույցների հետազոտման մասով, դոնփակ անցկացնելը պիտանի միջոց է, քանի որ հնարավոր է դարձնում վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի պաշտպանության նպատակի կենսագործումը, անհրաժեշտ է այդ նպատակին հասնելու համար, քանի որ պիտանի միջոցներից նվազագույն կերպով է միջամտում հրապարակային քննության հիմնական իրավունքին, ինչպես նաև, կանխելով առևտրային գաղտնիք պարունակող տվյալների՝ լայն հասարակությանը հայտնի դարձնելը և դրանով ապահովելով նաև տնտեսական կարգի բաղադրատարր հանդիսացող ազատ տնտեսական մրցակցության հիմնարար սկզբունքի իրացումը, համարժեք է սահմանափակվող հրապարակային քննության հիմնական իրավունքի նշանակությանը:

Սահմանադրական դատարանը նաև փաստում է, որ առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցները դոնփակ դատական նիստում հետազոտելու կարգը հրապարակային քննության իրավունքի սահմանափակման հիմքերի և ծավալի առումով որոշակի է, և այդ իրավունքի կրողներն ի վիճակի են իրենց վարքագիծը համապատասխանեցնել վիճարկվող իրավակարգավորումների պահանջներին:

Այսպիսով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցները դռնփակ դատական նիստում հետազոտելը որպես հրապարակային քննության հիմնական իրավունքի սահմանափակման համար ընտրված միջոց, սույն գործի շրջանակներում համապատասխանում է համաչափության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքներին:

**4.3.** Անդրադառնալով առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցների դռնփակ դատական նիստում հետազոտելու խնդրին՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում այն դիտարկել նաև միջազգային իրավական պրակտիկայում հաստատագրված սկզբունքների պահպանման տեսանկյունից (Սահմանադրության 81-րդ հոդված):

Այս առումով Սահմանադրական դատարանը կարևորում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) կողմից արտահայտված հետևյալ իրավական դիրքորոշումները.

1. Դատական քննության հրապարակայնության սկզբունքը ժողովրդավարական հասարակությունում արդարադատության իրականացման հիմնարար սկզբունքներից է, որի դերն ու նշանակությունն այն է, որ այս սկզբունքը լուրջ երաշխիք է դատարանի օրինական գործունեության ապահովման համար, հասարակության և զանգվածային լրատվամիջոցների ներկայությունը դատական գործի քննությանը զսպիչ գործոն է դատարանի համար: Ըստ ՄԻԵԴ-ի՝ այդ սկզբունքը դատավարության կողմերին պաշտպանում է գաղտնի, հանրության հսկողությունից զուրկ արդարադատության իրականացումից, ինչպես նաև ապահովում է վստահությունը դատարանների նկատմամբ: Արդարադատության հրապարակայնությունը և թափանցիկությունը նպաստում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի նպատակների, մասնավորապես, արդարացի դատաքննության իրականացմանը: (**Gautrin and Others v. France, Judgment of 20 May 1998, Pretto and Others v. Italy, Judgment of 8 December 1983, Krestovskiy v. Russia, Judgment of 28 October 2010**),

2. Սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում քննարկվող հարցի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունները հանրության համար չբացահայտելու նպատակով քրեական գործով դատաքննության դռնփակ անցկացնելն ինքնին

արդար դատաքննության իրավունքի տեսանկյունից Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից խնդրահարույց չի դիտարկվում:

Այսպես, օրինակ՝ *Shenoyev v. Russia* գործի շրջանակներում ՄԻԵԴ-ը թեև հաստատել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված հրապարակային դատաքննության իրավունքի խախտման փաստը, սակայն հիմնավոր է համարել ներպետական դատարանի առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունները չհրապարակելու նպատակով դատաքննությունը հասարակության համար փակ դարձնելը (**Shenoyev v. Russia, Judgment of 25 September 2018**):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցների դռնփակ դատական նիստում հետազոտելը համահունչ է ՄԻԵԴ-ի պրակտիկային:

Ելնելով գործի քննության արդյունքներից, հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 170-րդ հոդվածը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածների՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. Քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը՝ առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցների հետազոտումը դռնփակ դատական նիստում անցկացնելու մասով, համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 5-րդ մասը՝ առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցների հետազոտումը դռնփակ դատական նիստում անցկացնելու մասով, համապատասխանում է Սահմանադրությանը:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

2 հուլիսի 2019 թվականի  
ՍԴՈ-1467



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԻԶԵՎ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ  
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ»  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

9 հուլիսի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (գեկուցող), Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Ա. Ապիտոնյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 23 և 74-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի հունվարի 30-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության

կառավարության և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջև՝ Հայաստանի Հանրապետությունում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կարգավիճակի մասին» համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի մայիսի 20-ին Սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով քննության առարկա արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջև՝ Հայաստանի Հանրապետությունում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կարգավիճակի մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 1993 թվականի նոյեմբերի 5-ին: Համաձայնագրի 19-րդ հոդվածի համաձայն՝ այն ուժի մեջ է մտել ստորագրման պահից: Հետագայում՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու կարգը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով՝ 2000 թվականի հուլիսի 19-ին ստորագրվել է Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությունը: Համաձայնագիրը և դրա անբաժանելի մաս կազմող Արձանագրությունը օրենքով սահմանված կարգով վավերացվել և ուժի մեջ են մտել 2001 թվականի մայիսի 31-ից (տես Սահմանադրական դատարանի 2001 թվականի փետրվարի 9-ի ՍԴՈ-284 և ՀՀ Ազգային ժողովի 2001 թվականի մայիսի 14-ի Ն-178-2 որոշումները): Համաձայնագրով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (այսուհետև՝ ԿԽՄԿ) գործունեության պայմանները, ԿԽՄԿ և դրա պատվիրակների կարգավիճակը:

2. «2019 թվականի հունվարի 30-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջև՝ Հայաստանի Հանրապետությունում Կարմիր խաչի

միջազգային կոմիտեի կարգավիճակի մասին» համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ Համաձայնագրի 6-րդ հոդվածը լրացվել է նոր՝ 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով, իսկ 10-րդ հոդվածի 11-րդ կետը և 11-րդ հոդվածը շարադրվել են այլ բովանդակությամբ:

Արձանագրության հիման վրա Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- ապահովել, որ ԿԽՄԿ փոստը և փաթեթները օգտվեն այնպիսի արտոնություններից և անձեռնմխելիություններից, որոնք նախատեսված են դիվանագիտական փոստի համար՝ պայմանով, որ դրանք ունենան իրենց բնույթը նշող տեսանելի արտաքին նշաններ և պարունակեն միայն պաշտոնական օգտագործման համար նախատեսված փաստաթղթեր, տեղեկատվություն կամ առարկաներ (1-ին հոդվածի 4-րդ մաս),

- ապահովել ԿԽՄԿ զեկույցների, նամակների և այլ գրագրության բովանդակության և գրառումների գաղտնիությունը: Երաշխավորել, որ այդ բովանդակությունը և գրառումները չեն բացահայտվի դրանց հասցեատեր չհանդիսացող անձանց համար, ինչպես նաև չեն բացահայտվի կամ չեն օգտագործվի դատական կամ վարչական վարույթների ընթացքում՝ առանց ԿԽՄԿ նախնական գրավոր համաձայնության (1-ին հոդվածի 5-րդ մաս),

- պատվիրակության՝ ՀՀ քաղաքացի (ռեզիդենտ աշխատակից) հանդիսացող անդամների համար երաշխավորել իրենց ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրականացված գործողությունների հետ կապված դատական գործընթացների նկատմամբ անձեռնմխելիություն, այդ թվում՝ ձերբակալման, կալանքի, որպես վկա ներգրավման անձեռնմխելիությունը, նույնիսկ այն դեպքում, երբ այլևս չեն աշխատում ԿԽՄԿ պատվիրակությունում (2-րդ հոդված),

- ժամանակավոր առաքելությամբ Հայաստանի Հանրապետություն ժամանած ԿԽՄԿ ներկայացուցիչների ու աշխատակիցների համար երաշխավորել ԿԽՄԿ պատվիրակության անդամների համար Համաձայնագրում ամրագրված հիմնական արտոնությունները և անձեռնմխելիությունները (3-րդ հոդված):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությունում ամրագրված պարտավորությունները բխում են Հայաստանի



Հանրապետության արտաքին քաղաքականությունը միջազգային իրավունքի հիման վրա իրականացնելու մասին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածի պահանջից և համապատասխանում են Սահմանադրությանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Թ**.

1. 2019 թվականի հունվարի 30-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջև՝ Հայաստանի Հանրապետությունում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կարգավիճակի մասին» համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

9 հուլիսի 2019 թվականի  
ՄԴՈ-1468



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ  
«2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ՀԱՎԱՔԱԿԱՆ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐՐՈՐԴ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

9 հուլիսի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմայանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Շ. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 23 և 74-րդ հոդվածների,

դրնքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի նոյեմբերի 8-ին ստորագրված «2002 թվականի հոկտեմբերի 7-ի Հա-

վաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության կանոնադրությունում փոփոխություններ կատարելու մասին» երրորդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի մայիսի 20-ին Սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2018 թվականի նոյեմբերի 8-ին՝ Կազմակերպության անդամ չհանդիսացող պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության հետագա զարգացման համար «2002 թվականի հոկտեմբերի 7-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության կանոնադրությունում» (այսուհետ՝ Կանոնադրություն) փոփոխություններ կատարելու նպատակով:

2. Սահմանադրական դատարանը հայտնում է, որ Արձանագրությամբ փոփոխություն է կատարվում Կանոնադրության VII գլխում, մասնավորապես՝ 21-րդ հոդվածում, որը վերաբերում է Կազմակերպության անդամ չհանդիսացող պետությունների և միջազգային կազմակերպությունների՝ առանց Կազմակերպության գործնական միջոցառումներին մասնակցության պարտավորության Դիտորդի կարգավիճակին, ինչպես նաև Կանոնադրության VII գլուխը լրացվում է 21<sup>1</sup> հոդվածով, որը վերաբերում է Կազմակերպության անդամ չհանդիսացող պետությունների և միջազգային կազմակերպությունների՝ Կազմակերպության գործնական միջոցառումներին մասնակցության պարտավորությամբ Կազմակերպության գործընկերոջ կարգավիճակին:

Սահմանադրական դատարանը հայտնում է նաև, որ Կազմակերպության Դիտորդի և Գործընկերոջ կարգավիճակները, դրանք

ստանալու կարգը և դադարեցումը կարգավորվում են Խորհրդի կողմից հաստատված համապատասխան կանոնակարգով:

3. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է Արձանագրությամբ սահմանված բովանդակությամբ փոփոխել Կանոնադրության VII գլխի 21-րդ հոդվածը, ինչպես նաև Կանոնադրության VII գլուխը լրացնել 21<sup>1</sup> հոդվածով՝ Արձանագրության 1-ին կետով սահմանված բովանդակությամբ:

4. Սահմանադրական դատարանը հայտնում է, որ «Հավաքական անվտանգության մասին» 1992 թվականի մայիսի 15-ին ստորագրված պայմանագիրը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 1992 թվականի հուլիսի 28-ին Գերագույն խորհրդի Հ.Ն-0676-I որոշմամբ, իսկ 2002 թվականի հոկտեմբերի 7-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության կանոնադրությունը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2003 թվականի սեպտեմբերի 10-ին Ազգային ժողովի Ն-018-3 որոշմամբ (ՄԴՈ-415):

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2018 թվականի նոյեմբերի 8-ին ստորագրված «2002 թվականի հոկտեմբերի 7-ի Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության կանոնադրությունում փոփոխություններ կատարելու մասին» երրորդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

9 հուլիսի 2019 թվականի  
ՍԴՈ-1469



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ԱՍՏԱՆԱՅՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի՝  
ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ»  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ» ԵՐԿՐՈՐԴ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

9 հուլիսի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Շ. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 23 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի նոյեմբերի 8-ին Աստանայում ստորագրված՝ «2002 թվականի հոկ-

տեմբերի 7-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության իրավական կարգավիճակի մասին» համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» երկրորդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի մայիսի 20-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. «2002 թվականի հոկտեմբերի 7-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության իրավական կարգավիճակի մասին» համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» երկրորդ արձանագրությունը (Արձանագրություն) ստորագրվել է 2018 թվականի նոյեմբերի 8-ին Աստանայում:

2002 թվականի հոկտեմբերի 7-ին ստորագրված՝ «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության իրավական կարգավիճակի մասին» համաձայնագիրը (Համաձայնագիր) վավերացվել է Հայաստանի Հանրապետության կողմից Ազգային ժողովի 2003 թվականի սեպտեմբերի 10-ի Ն-020-3 որոշմամբ:

2. Արձանագրությամբ Համաձայնագրի, մասնավորապես, 1-ին հոդվածի 7-րդ և 8-րդ պարբերությունները շարադրվում են նոր խմբագրությամբ, հիշյալ հոդվածը լրացվում է 18-րդ պարբերությամբ, 11-րդ հոդվածը շարադրվում է նոր խմբագրությամբ, ինչպես նաև 1-ին, 23, 24, 27-33-րդ հոդվածներում «Լիազոր ներկայացուցիչ» բառերը փոխարինվում են «Մշտական ներկայացուցիչ» բառերով:

3. Արձանագրությամբ Համաձայնագրում կատարվող փոփոխություններով՝ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է պարտավորություններ, մասնավորապես.

- Կազմակերպությանն առընթեր մշտական և լիազոր ներկայացուցիչը (Մշտական ներկայացուցիչ) Կազմակերպության անդամ պետության կողմից իր ազգային օրենսդրությանը համապատաս-

խան նշանակվող ներկայացուցիչն է, որն ուղարկող պետության կողմից օժտվում է լիազորություններով՝ Կազմակերպության հարցերով գործունեության և Կազմակերպության կանոնադրության IV գլխին համապատասխան հիմնադրված Մշտական խորհրդում աշխատանքի համար,

- Գլխավոր քարտուղարի տեղակալը Կազմակերպության բարձրագույն վարչական պաշտոնատար անձի տեղակալն է, պաշտոնատար անձ է Քարտուղարությունում այն պաշտոնների յուրաքանչյուր անդամ պետության համար ամրագրված քվոտաներին համապատասխան սահմանված կարգով հաստատվող անձանց թվից, որոնց ցանկը սահմանում է Խորհուրդը,

- եթե Գլխավոր քարտուղարը, Գլխավոր քարտուղարի տեղակալները, նրանց ընտանիքների իրենց հետ ապրող անդամները, գտնվելու վայրի պետության քաղաքացիներ չեն, արտոնություններից և անձեռնմխելիություններից օգտվում են այնքան, որքան «Դիվանագիտական կապերի մասին» 1961 թվականի ապրիլի 18-ի Վիեննայի կոնվենցիայով նախատեսված է դիվանագիտական գործակալի և նրա ընտանիքի անդամների համար:

4. Արձանագրությունով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին և, ի թիվս այլնի, նպատակաուղղված են բարձրացնելու Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության գործունեության արդյունավետությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2018 թվականի նոյեմբերի 8-ին Աստանայում ստորագրված՝ «2002 թվականի հոկտեմբերի 7-ի Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության իրավական կարգավիճակի մասին» համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» երկրորդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:



2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

9 հուլիսի 2019 թվականի  
ՍԴՈ-1470



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «1992  
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԿՐՈՐԴ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

9 հուլիսի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Շ. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի նոյեմբերի 8-ին ստորագրված «1992 թվականի մայիսի 15-ի՝ Հավաքական անվտանգության մասին» պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» երկրորդ արձանագրությունում ամրագր-

ված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի մայիսի 20-ին Սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «1992 թվականի մայիսի 15-ի՝ «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) փոփոխություններ կատարելու մասին» երկրորդ արձանագրությամբ (այսուհետ՝ Արձանագրություն) նախատեսվում է փոփոխություններ կատարել Պայմանագրում՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններով: Պայմանագրի փոփոխության արդյունքում ՀՀ կառավարության ղեկավարը հնարավորություն է ստանում լինել մասնակից պետությունների կողմից ձևավորված Հավաքական անվտանգության խորհրդի կազմում, ինչպես նաև հնարավորություն է ստանում մասնակից պետությունների ղեկավարների հետ որոշում կայացնել Հավաքական անվտանգության համակարգի ուժերի և միջոցների կիրառման վերաբերյալ:

2. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2018 թվականի նոյեմբերի 8-ին ստորագրված «1992 թվականի մայիսի 15-ի` Հավաքական անվտանգության մասին» պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» երկրորդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն` սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

9 հուլիսի 2019 թվականի  
ՍԴՈ-1471



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍԲ.  
ՀՈՎՀԱՆՆԵՄԻ, ՀՌՈՂՈՍԻ ԵՎ ՄԱԼԹԱՅԻ ԻՆՔՆԻՇԽԱՆ  
ՄԱՐՏԱԿԱՆ ԲԱՐԵԽՆԱՍ ՈՒԽՏԻ ՄԻՋԵՎ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

9 հուլիսի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Ա. Ադունցի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի ապրիլի 5-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Երուսաղեմի Սբ. Հովհաննեսի, Հռոդոսի և Մալթայի ինքնիշխան

մարտական բարեխնամ ուխտի միջև համագործակցության համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի մայիսի 20-ին Սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. Հայաստանի Հանրապետության և Երուսաղեմի Մբ. Հովհաննեսի, Հռոդոսի և Մալթայի ինքնիշխան մարտական բարեխնամ ուխտի միջև համագործակցության համաձայնագիրը (այսուհետ՝ Համագործակցության համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի ապրիլի 5-ին Հռոմում, որով Կողմերը ցանկանում են էլ ավելի զարգացնել բարեկամական հարաբերությունները և համագործակցությունը Հայաստանի Հանրապետության և Երուսաղեմի Մբ. Հովհաննեսի, Հռոդոսի և Մալթայի ինքնիշխան մարտական բարեխնամ ուխտի (այսուհետ՝ Մալթայի ինքնիշխան ուխտ) միջև և նպաստել Մալթայի ինքնիշխան ուխտի մարդասիրական աջակցության իրականացմանը Հայաստանի Հանրապետության տարածքում:

2. Համագործակցության համաձայնագրի նպատակն է Կողմերի միջև ձևավորել համագործակցության ընդհանուր շրջանակ և սահմանել ուղենիշներ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության տարածքում Մալթայի ինքնիշխան ուխտի կողմից իրականացվող հիվանդների խնամակալության, սոցիալական և առողջապահական գործողությունների խթանմանը՝ Կողմերի օրենքների, ներքին կանոնակարգերի, համապատասխան քաղաքականության համաձայն, հավասարության և ինքնիշխան փոխադարձ հարգանքի սկզբունքների հիման վրա (հոդվ. 1):

3. Համագործակցության համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- աջակցել սոցիալական, հումանիտար և առողջապահական համագործակցությանը նպաստելուն, զարգացնելուն և բազմազանեցնելուն, ինչպես նաև մարդասիրական և բնական աղետների ժամանակ օգնություն տրամադրելուն ուղղված միջոցառումների իրականացմանը և իրականացնել այդպիսի միջոցառումներ (հոդվ. 3, կետ 4),

- Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ ազատել մաքսային վճարներից և հարկերից, ինչպես նաև այլ տեսակի վճարներից ու պարտավորություններից Մալթայի ինքնիշխան ուխտի կողմից կամ նրա անունից ուղղակիորեն կամ իր նշանակած կազմակերպությունների կողմից բարեգործական նպատակներով, ներառյալ Համագործակցության համաձայնագրում սահմանված սոցիալական, հումանիտար և առողջապահական նպատակներով, Հայաստանի Հանրապետություն բերվող սարքավորումները (առաքելությունների իրականացման համար նախատեսված հիվանդանոցների, հաշմանդամների, շտապօգնության մեքենաների, դեղորայքի կամ բժշկական-վիրաբուժական գործիքների համար նյութերը, ներառյալ գեներատորները) (հոդվ. 3, կետ 6),

- երաշխավորել Մալթայի ինքնիշխան ուխտին պատկանող կամ որևէ իրավական հիմքով նրա կողմից տնօրինվող շինությունների անձեռնմխելիությունը, ինչպես նաև ապահովել դրանց ամբողջականությունն ու մուտք գործելու անվտանգությունը (հոդվ. 3, կետ 7),

- ապահովել, որ Համագործակցության համաձայնագրի շրջանակներում նախագծեր և ծրագրեր նախատեսող փաստաթղթերը կնքվեն Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների և Մալթայի ինքնիշխան ուխտի Նշանակված կազմակերպությունների միջև՝ Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությանը համապատասխան (հոդվ. 4, կետ 2),

- երաշխավորել, որ «Դիվանագիտական հարաբերությունների մասին» Վիեննայի կոնվենցիայով դիվանագիտական գործակալներին տրված առավելությունները, արտոնությունները և անձեռնմխելիությունը կիրառվեն Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված Մալթայի ինքնիշխան ուխտի դեսպանության Համաձայնագրի շրջանակներում իրականացվող ծրագրերում ներգրավված դիվանագիտական անձնակազմի նկատմամբ (հոդված 5, կետ 1),

- ՀՀ ազգային օրենսդրության համաձայն՝ ցուցաբերել աջակցություն ՀՀ տարածքում սույն Համագործակցության համաձայնագրի շրջանակներում Մալթայի ինքնիշխան ուխտի ծրագրերի, նախագծերի կամ գործողությունների իրականացման մեջ ներգրավված՝ Մալթայի ինքնիշխան ուխտի կողմից նշանակված անձնակազմի և իր Նշանակված կազմակերպությունների անձնակազմին (հոդվ. 5, կետ 2),

- Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրության համաձայն՝ դյուրացել Մալթայի ինքնիշխան ուխտի կամ իր Նշանակված կազմակերպությունների՝ սույն Համագործակցության համաձայնագրով սահմանված՝ սոցիալական, առողջապահական, հումանիտար գործունեության իրականացման մեջ ներգրավված ողջ անձնակազմին և նրանց ընտանիքի անդամներին մուտքի արտոնագրերի և կացության թույլտվության տրամադրումը (հոդվ. 5, կետ 3) և այլն:

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համագործակցության համաձայնագրում հղում է կատարվում ՄԱԿ-ի 1961 թվականի ապրիլի 18-ի՝ «Դիվանագիտական հարաբերությունների մասին» Վիեննայի կոնվենցիային (Հայաստանի Հանրապետությունը կոնվենցիային միացել է Գերագույն Խորհրդի՝ 1992 թվականի հոկտեմբերի 6-ի՝ Հ.Ն-0703-Ի որոշմամբ):

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համագործակցության համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:



1. 2018 թվականի ապրիլի 5-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Երուսաղեմի Սբ. Հովհաննեսի, Հռոդոսի և Մալթայի ինքնիշխան մարտական բարեխնամ ուխտի միջև համագործակցության համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

9 հուլիսի 2019 թվականի  
ՍԴՈ-1472



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

2018 թվապահի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ  
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԱՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ  
ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

9 հուլիսի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմայանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Գ. Բալայանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի դեկտեմբերի 27-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև զինվորական սուրհանդակափոխության կապի ոլորտում համագործակցության մասին համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի մայիսի 21-ին Սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Արձանագրությունը ստորագրվել է 2018 թվականի դեկտեմբերի 27-ին Մոսկվայում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև զինվորական սուրհանդակափոխության կապի ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) կատարումն առավել դյուրին դարձնելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, Արձանագրությամբ ստանձնում է մասնավորապես հետևյալ պարտավորությունները.

- երաշխավորել Համաձայնագրին համապատասխան առաքվող զինվորական նամակագրության անձեռնմխելիությունը, և որ այդ նամակագրությունը չի կարող բացվել և չի կարող պահվել, ինչպես նաև երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության սահմանապահ մարմինները կապահովեն սուրհանդակների (ցրիչների և թղթատարների) պետական սահմանի անարգել հատումը Համա-

ձայնագրի 6-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթեր ներկայացնելու դեպքում, կցուցաբերեն աջակցություն զինվորական նամակագրության օպերատիվ առաքման կազմակերպմանը և կտրամադրեն անհրաժեշտ օգնություն նրանց կողմից իրենց իրավասության շրջանակներում իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս (հոդված 4),

- չթույլատրել այնպիսի զինվորական նամակագրության առաքումը Ռուսաստանի Դաշնություն, որի պարունակությունը, Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն, դասվում է արգելված վտանգավոր բեռների և իրերի (այդ թվում՝ զենքի, թմրանյութի և դրանց կիրառման ու պատրաստման հարմարանքների) շարքին (հոդված 6),

**3.** Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ Համաձայնագրում հղում է կատարվել հետևյալ միջազգային փաստաթղթերին.

- 2013 թվականի դեկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև զինվորական սուրհանդակափոխության կապի ոլորտում համագործակցության մասին» համաձայնագրին (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է Ազգային ժողովի կողմից՝ 24.02.2015 թ. ԱԺՈ-147-Ն որոշմամբ (15.04.2014 թ. ՍԴՈ-1146),

- 2014 թվականի հոկտեմբերի 10-ի՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրին (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է Ազգային ժողովի կողմից՝ 04.12.2014 թվականի ԱԺՈ-132-Ն որոշմամբ (14.11.2014 թ. ՍԴՈ-1175),

**4.** Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2018 թվականի դեկտեմբերի 27-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև զինվորական սուրհանդակափոստային կապի ոլորտում համագործակցության մասին համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

9 հուլիսի 2019 թվականի

ՍԴՈ-1473



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 թվականի ՄԱՐՏԻ 14-ԻՆ ԿՈՊԵՆՀԱԳԵՆՈՒՄ  
ՍՈՆՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ  
ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՅԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ  
ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՏԻԱՅՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

9 հուլիսի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Պողոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի մարտի 14-ին Կոպենհագենում ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Դանիայի Թագավորության միջև եկամուտների և

3(95)/2019

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ

գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի հունիսի 6-ին Սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով կոնվենցիան և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության և Դանիայի Թագավորության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ստորագրվել է 2018 թվականի մարտի 14-ին Կոպենհագենում, որի նպատակը Հայաստանի Հանրապետության և Դանիայի Թագավորության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելն է և այդպիսով՝ եկամտային և գույքային հարկերի հետ կապված խոչընդոտների բացասական ազդեցությունը միջազգային առևտրի և ներդրումների նկատմամբ նվազեցնելն ու բարենպաստ հարկային ռեժիմ, ինչպես նաև կանխատեսելի և կայուն հարկային միջավայր ստեղծելն է:

2. Կոնվենցիայի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

- Դանիայի Թագավորության իրավասու մարմինն ծանուցել Հայաստանի Հանրապետության հարկային օրենքներում կատարված ցանկացած էական փոփոխության մասին (հոդված 2, կետ 4),

- հարկել Հայաստանի Հանրապետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում նավերի կամ օդանավերի շահագործումից ստացված շահույթը (հոդված 8, կետ 1),

- չհարկել Դանիայի Թագավորության ռեզիդենտ ընկերության կողմից վճարված շահաբաժիններն այն դեպքերում, երբ ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում Հայաստանի Հանրապետությունից, բացառությամբ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված դեպքերի (հոդված 10, կետ 5),

- չհարկել կամ հարկել նվազեցված դրույքաչափերով Դանիայի Թագավորության ռեզիդենտների կողմից Հայաստանի Հանրապետությունում ստացված որոշ տեսակի եկամուտներ, մասնավորապես անշարժ գույքից ստացվող եկամուտը (հոդված 6), ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող շահույթը (հոդված 7), տոկոսները (հոդված 11), ռոյալթիները (հոդված 12), գույքի արժեքի հավելածր (հոդված 13), եկամուտը վարձու աշխատանքից (հոդված 14),

- չհարկել Դանիայի Թագավորության ռեզիդենտ հանդիսացող ուսանողին կամ ստաժորին, որը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում՝ բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով (հոդված 19),

- ազատել հարկումից այն պրոֆեսորին կամ հետազոտողին ուսուցման կամ հետազոտության դիմաց ստացած վարձատրության համար, որը ժամանել է Դանիայի Թագավորությունից ոչ ավել քան վեց ամիս ժամկետով՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող համալսարանում կամ այլ նմանատիպ հաստատությունում ուսուցման կամ հետազոտությամբ զբաղվելու նպատակով, և որը անմիջապես մինչ այդ ժամանումը հանդիսացել է Դանիայի Թագավորության ռեզիդենտ՝ պայմանով, որ այդպիսի վարձատրությունը հարկվում է Դանիայի Թագավորությունում (հոդված 20, կետ 1),

- չհարկել կապիտալը, որը ներկայացված է Դանիայի Թագավորության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավերով ու օդանավերով և շարժական գույքով և վերաբերում է նման նավերի և օդանավերի շահագործմանը (հոդված 22, կետ 3),

- բացառել կրկնակի հարկումը Կոնվենցիայի 23-րդ հոդվածին համապատասխան, մասնավորապես, երբ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտն այնպիսի եկամուտ է ստանում կամ գույք է տնօրինում, որոնք Կոնվենցիայի դրույթներին համապատասխան կարող են հարկվել Դանիայի Թագավորությունում, ինչպես նաև թույլ տալ, որ այդ ռեզիդենտի եկամտից գանձվող հարկը նվազեցվի Դանիայում վճարված եկամտահարկին հավասար գումարով, և այդ ռեզիդենտի գույքից գանձվող հարկի վճարը նվազեցվի Դանիայի Թագավորությունում վճարված գույքից գանձվող հարկին հավասար գումարով,



բացառել խտրականությունը Կոնվենցիայի 24-րդ հոդվածին համապատասխան, մասնավորապես, Դանիայի Թագավորության ազգային անձանց Հայաստանի Հանրապետությունում չենթարկել այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված չսահմանել որևէ պարտավորություն, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց նույն հանգամանքների դեպքում, մասնավորապես՝ կապված ռեզիդենտության հետ, ենթակա են կամ կարող են ենթակա լինել Հայաստանի ազգային անձինք,

- երաշխավորել, որ Դանիայի Թագավորության ձեռնարկության մշտական հաստատության հարկումը Հայաստանի Հանրապետությունում չլինի պակաս բարենպաստ, քան համանման գործունեություն իրականացնող Հայաստանի Հանրապետության ձեռնարկության հարկումը (հոդված 24, կետ 3),

- Դանիայի Թագավորության իրավասու մարմնին տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն Կոնվենցիայի 26-րդ հոդվածի համաձայն, մասնավորապես, փոխանակել այնպիսի տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են Կոնվենցիայով նախատեսված հարկերի վերաբերյալ ներպետական օրենքների կառավարումը կամ կիրառումը իրականացնելու համար, քանի դեռ հարկումը չի հակասում Կոնվենցիային (հոդված 26, կետ 1),

- երաշխավորել, որ Կոնվենցիայի 26-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից ստացված ցանկացած տեղեկություն բացահայտվի միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք առնչվում են բոլոր տեսակի հարկերի գնահատման կամ գանձման, հարկադիր բռնագանձման կամ դատական հետապնդման, բողոքարկումների քննման կամ նշված նպատակներով վերահսկողության գործընթացներին, ինչպես նաև երաշխավորել, որ այդ անձինք կամ մարմինները տեղեկությունը օգտագործեն միայն այդպիսի նպատակների համար (հոդված 26, կետ 2),

- օգնություն ցուցաբերել եկամտային հայցերի հավաքագրման գործում (հոդված 27, կետ 1):

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Թ**.

1. 2018 թվականի մարտի 14-ին Կոպենհագենում ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Դանիայի Թագավորության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

9 հուլիսի 2019 թվականի  
ՍԴՈ-1474



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 20-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 հուլիսի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ Ա. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ և 71-րդ հոդվածների,

3(95)/2019  
◆ ՍՏԳԵԿԿԱԳԻՐ  
◆ ՏԵՂԵԿԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
51

դոնրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ նաև Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2010 թվականի դեկտեմբերի 30-ին, ուժի մեջ է մտել՝ 2011 թվականի հունվարի 1-ից:

Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված զինծառայողին, եթե իրավասու պետական մարմինը զինվորական ծառայության ընթացքում կամ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ հինգ տարվա ընթացքում, սահմանել է (որոշել է) զինվորական ծառայության հետ հաշմանդամության (հիվանդության, խեղման, վնասվածքի) պատճառական կապ: Եթե զինծառայողի հաշմանդամության առաջացման պատճառը կապված է զինվորական ծառայության ժամանակ՝ մինչև զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելն ստացած վնասվածքի հետ, ապա զինծառայողին հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակվում է անկախ հաշմանդամության պատճառական կապը սահմանելու (որոշելու) ժամկետից»:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 22-ին Սահմանադրական դատարանում մուտքագրված ՀՀ վարչական դատարանի՝ 2019 թվականի ապրիլի 18-ի դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունները, ինչպես նաև վերլուծելով Օրենքի համապատասխան դրույթները և գործում առկա փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

### 1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը, վերլուծելով «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը, հայտնում է, որ նշված իրավանորմը պայմանականորեն կարելի է

բաժանել երկու մասի: Առաջին մասը կիրառելի է, երբ համապատասխան իրավասու մարմինը զինվորական ծառայության ընթացքում կամ ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ 5 տարվա ընթացքում, որոշում է զինվորական ծառայության հետ հաշմանդամության պատճառակալ կապը, որը պետք է առաջացած լինի հիվանդության, խեղման, վնասվածքի հետևանքով (հաշմանդամության առաջացման հիմք), իսկ երկրորդ մասը կիրառելի է, երբ զինծառայողի հաշմանդամության առաջացման պատճառը կապված է զինվորական ծառայության ժամանակ՝ մինչև դրանից սահմանված կարգով արձակվելն ստացած վնասվածքի հետ, որի դեպքում որևէ ժամկետ սահմանված չէ: Ընդ որում՝ երկրորդ մասում ներառված հաշմանդամության առաջացման պատճառը վնասվածքի հետ կապված լինելու պայմանը ներառված է նաև առաջին մասում:

Դիմողի կարծիքով՝ առկա չէ որևէ իրավաչափ և օրենսդրական հիմք, որով հնարավոր է վնասվածքը մարդու առողջության համար դիտել որպես առավել վտանգավոր, քան հիվանդությունը և խեղումը, քանի որ վտանգավորությունը դասակարգվում է ոչ թե ըստ հաշմանդամության առաջացման հիմքի, այլ միայն ըստ հաշմանդամության կարգի:

Վկայակոչելով Սահմանադրության 29-րդ և 83-րդ հոդվածները, Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 12-ի ՍԴՈ-1443 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը դիմողը գտնում է, որ Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը հակասում է Սահմանադրության հիշյալ հոդվածներին, քանի որ վիճարկվող դրույթով նույն իրավական կարգավիճակի շրջանակում տարբեր խմբերի անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված և խտրական մոտեցում, ինչով էլ այդ անձինք զրկվում են հավասար պայմաններում գտնվող այլ անձանց կենսաթոշակին համարժեք կենսաթոշակ ստանալու իրավունքից:

## 2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը, վկայակոչելով Սահմանադրության 1-ին, 29-րդ և 83-րդ հոդվածները, նշում է, որ ընդհանուր հավասարության և խտրականության արգելքի սկզբունքները երաշխավորվում են ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ մի շարք կարևորագույն միջազգային փաստաթղթերով:

Օրենսդրի կողմից ամրագրված վիճարկվող դրույթի բովանդակությունը, ըստ էության, բխում է պետական կենսաթոշակային քաղաքականության սկզբունքներից և կարգավորման առարկայի շրջանակներից, մասնավորապես, Օրենքը կարգավորում է պետական կենսաթոշակային ապահովության կառավարման և ֆինանսավորմանն առնչվող իրավահարաբերությունները, սահմանում պետական կենսաթոշակների տեսակները, կենսաթոշակ նշանակելու և վճարելու պայմաններն ու կարգը:

Պատասխանողը հայտնում է, որ սոցիալական ապահովության ծավալի և ձևերի, մասնավորապես կենսաթոշակի չափի ընտրությունը պետության հայեցողության սահմաններում է, քանի դեռ այն չի հակասում Սահմանադրության պահանջներին կամ միջազգայնորեն ստանձնած պարտավորություններին:

Վկայակոչելով Սահմանադրական դատարանի 15.01.2008 թ. ՄԴՈ-723, 04.05.2010 թ. ՄԴՈ-881 և 18.09.2018 թ. ՄԴՈ-1426 որոշումները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կենսաթոշակային և սոցիալական ապահովության իրավունքին վերաբերող մի շարք որոշումներ՝ պատասխանողը հայտնում է, որ Հայաստանի Հանրապետությունը, հանդիսանալով սոցիալական պետություն, այդ կարևորագույն սահմանադրական բնութագրի համաձայն ստանձնել է համապատասխան սահմանադրական պարտավորություն, այն է՝ սոցիալական աջակցություն ցուցաբերել իր քաղաքացիներին: Ուստի՝ Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության համակարգի ներկա իրավական կանոնակարգումները պայմանավորված են, ընդհանուր առմամբ, նաև երկրի ֆինանսական, տնտեսական-նյութական հնարավորություններով, որոնք միտված են երաշխավորելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիների սոցիալական ապահովության իրավունքի լիարժեք և արժանապատիվ իրականացումը:

Ելնելով վերոգրյալից՝ պատասխանողը գտնում է, որ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

**3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները**

Սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

արդյո՞ք առկա է հաշմանդամության առաջացման պատճառների (մի կողմից՝ հիվանդության և խեղման, մյուս կողմից՝ վնասվածքի) հիմքով զինվորական ծառայության հետ հաշմանդամության պատճառական կապը հաստատվելուց հետո հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակելու դեպքերի նկատմամբ տարբերակված մոտեցում, եթե՞ այո, ապա արդյո՞ք այն համապատասխանում է Սահմանադրության 29-րդ հոդվածով նախատեսված խտրականության արգելքի սկզբունքին:

Վերոգրյալի հիման վրա՝ Սահմանադրական դատարանը սույն գործով վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականությունը քննում է Սահմանադրության 29-րդ և 83-րդ հոդվածների համատեքստում:

#### **4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1.** Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է: Անձի սոցիալական ապահովության իրավունքն ամրագրված է Սահմանադրության 83-րդ հոդվածում, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք:

Սահմանադրական դատարանն իր՝ 02.04.2014 թ. ՍԴՈ-1142 որոշման մեջ նշել է, որ սոցիալական ապահովությունն անձի իրավունք լինելուց զատ պետության պոզիտիվ պարտավորությամբ պայմանավորված նպատակային գործառույթ է և, ի թիվս այլնի, ուղղված է հասարակության այն խավերի կենսագոյի ապահովմանը, որոնք իրենցից անկախ պատճառներով դա անել չեն կարող:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինծառայողների կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում են զինվորական կենսաթոշակի հետևյալ տեսակները. 1) երկարամյա ծառայության, 2) հաշմանդամության, 3) կերակրողին կորցնելու:

Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ զինվորական կենսաթոշակի իրավունք ունի՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմինների և Հայաստանի փրկարար ծառայության (այսուհետ նաև՝ համապատասխան մարմիններ) համակարգի հրամանատարական և ոչ հրամանատարական (սպայական, ենթասպայական, շարքային) կազմի ծառայողը:

Օրենքի վիճարկվող՝ 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված զինծառայողին, եթե իրավասու պետական մարմինը զինվորական ծառայության ընթացքում կամ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ հինգ տարվա ընթացքում, սահմանել է (որոշել է) զինվորական ծառայության հետ հաշմանդամության (հիվանդության, խեղման, վնասվածքի) պատճառական կապ: Եթե զինծառայողի հաշմանդամության առաջացման պատճառը կապված է զինվորական ծառայության ժամանակ՝ մինչև զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելն ստացած վնասվածքի հետ, ապա զինծառայողին հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակվում է անկախ հաշմանդամության պատճառական կապը սահմանելու (որոշելու) ժամկետից»:

Վերոշարադրյալ իրավադրույթի մեկնաբանությունից հետևում է, որ օրենսդիրը **հաշմանդամության առաջացման պատճառների** (մի դեպքում՝ հիվանդության և խեղման, մյուս դեպքում՝ վնասվածքի) **հիմքով տարբերակել է** զինվորական ծառայության հետ հաշմանդամության պատճառական կապը հաստատվելուց հետո զինծառայողին հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակելու իրավիճակները: Ըստ այդմ՝ երբ հաշմանդամությունն առաջացել է ոչ թե հիվանդության կամ խեղման հետևանքով, այլ՝ վնասվածքի, ապա հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակվում է անկախ զինվորական ծառայության հետ հաշմանդամության պատճառական կապը սահմանելու (որոշելու) ժամկետից: Համապատասխանաբար, այն դեպքերում, երբ հաշմանդամությունն առաջացել է հիվանդության կամ խեղման հետևանքով, հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակելու համար հաշմանդամության պատճառական կապը սահմանելու



(որոշելու) ժամկետը սահմանափակել է հինգ տարով: Դրանով շահառուների այս խմբի համար մյուսի համեմատությամբ սահմանվել են հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունքի իրացման ակնհայտ անհավասար, ոչ բարենպաստ պայմաններ:

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ հաշմանդամ է այն անձը, որը, առողջության խաթարմամբ պայմանավորված, կենսագործունեության սահմանափակումների հետևանքով ունի սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն:

Նույն օրենքի 6<sup>2</sup>-րդ հոդվածի համաձայն՝ «Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինն անձին հաշմանդամ է ճանաչում սույն օրենքի պահանջներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող դասակարգիչներին և հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշներին համապատասխան՝ ելնելով բժշկասոցիալական փորձաքննության արդյունքներից:

Հաշմանդամության պատճառ կարող են լինել՝ .... **զինվորական ծառայության ժամանակ ստացած հիվանդությունը, խեղումը կամ վնասվածքը:**

Սույն հոդվածում նշված համապատասխան պատճառական կապով որևիցե աստիճանի կենսագործունեության սահմանափակման հայտնաբերման դեպքում տվյալ անձը ճանաչվում է հաշմանդամ:

Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված անձին տրվում է հաշմանդամության խումբ (1-ին, 2-րդ և 3-րդ խումբ)»: (Կրճատումը և ընդգծումը՝ Սահմանադրական դատարանի):

Հաշմանդամության խումբը տրամադրվում է «Բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները հաստատելու մասին» Կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 780-ն որոշմամբ սահմանված բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող դասակարգիչներին և հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշներին համապատասխան:

Մեջբերված դրույթները վկայում են օրենսդրության մեջ առկա այն ընդհանուր մոտեցման մասին, ըստ որի՝ հաշմանդամների կարգավիճակները տարբերակվում կամ դասակարգվում են միայն

ըստ խմբերի, այսինքն ըստ անձի կենսագործունեության սահմանափակման և սոցիալական պաշտպանության անհրաժեշտության աստիճանի, այլ ոչ թե հաշմանդամության առաջացման պատճառների (հիվանդություն, խեղում, վնասվածք):

**4.2.** Նկատի ունենալով այն հանգամանքը, որ վիճարկվող դրույթով օրենսդիրը տարբերակված մոտեցում է ցուցաբերել հաշմանդամության առաջացման պատճառով (հիվանդության, խեղման, վնասվածքի) զինվորական ծառայության հետ հաշմանդամության պատճառական կապը հաստատվելուց հետո զինծառայողին հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակելիս, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող իրավակարգավորումները դիտարկել Սահմանադրության 29-րդ և 83-րդ հոդվածներով նախատեսված՝ խտրականության արգելքի և սոցիալական ապահովության վերաբերյալ դրույթների լույսի ներքո:

Սահմանադրության՝ «Խտրականության արգելքը» վերտառությամբ 29-րդ հոդվածով սահմանվում է, որ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Անձի նկատմամբ խտրական վերաբերմունքի վերաբերյալ Սահմանադրական դատարանը հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

1) պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները (ՄԴՈ-731),

2) Սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է այն տարբերակված մոտեցումը, որը գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից (ՄԴՈ-881),

3) խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ (ՄԴՈ-1224):

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ կոնվենցիա)՝ խտրականության արգելքն ամրագրող 14-րդ հոդվածով սահմանվում է, որ կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի համաձայն՝ խտրականության արգելքի խնդիր առաջանալու համար պետք է լինի տարբերություն համադրելի իրավիճակներում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքների միջև: Ըստ ՄԻԵԴ-ի՝ ցանկացած տարբերակում կամ տարբերություն չէ, որ կարելի է խտրականություն համարել: Մասնավորապես, իր վճիռներից մեկում (Andrejeva v. Latvia (GC 18.02.2009, 55707/00, § 81) ՄԻԵԴ-ը նշել է. «...տարբերակումը կամ տարբերությունը համարվում է խտրական, եթե այն չունի օբյեկտիվ և ողջամիտ արդարացում, այսինքն՝ եթե այդ տարբերակումը կամ տարբերությունը չի հետապնդում իրավաչափ նպատակ կամ համաչափ չէ հետապնդվող իրավաչափ նպատակին»:

Թեև Սահմանադրության 83-րդ հոդվածի համաձայն՝ օրենսդրին է վերապահված անձի սոցիալական ապահովության, մասնավորապես՝ կենսաթոշակի իրավունքի բովանդակությունը (օրինակ՝ կենսաթոշակի չափը, նշանակման և վճարման կարգը և այլն) որոշակիացնելու լիազորությունը, այդուհանդերձ, Սահմանադրությունը, ի թիվս այլնի, բացառում է այս իրավունքն ընդհանրապես օրենքով չերաշխավորելը, այսինքն՝ օրենսդիրը պարտավոր է կենսաթոշակի իրավունքը երաշխավորող օրենք ընդունել: Բացի դրանից, նման օրենքը չպետք է խախտի Սահմանադրության պահանջները, մասնավորապես, այն պետք է լինի որոշակի, կանխատեսելի, չհակասի իրավահավասարության, խտրականության արգելքի սկզբունքներին:

Վերոշարադրյալի համատեքստում Սահմանադրական դատարանը փաստում է, որ հաշմանդամ ճանաչված զինծառայողների սոցիալական ապահովության, տվյալ դեպքում՝ հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունքի իրացման օրենսդրական նախադրյալները պետք է համահունչ լինեն հաշմանդամ զինծառայողներին վերաբերող պետության սոցիալական քաղաքականության ընդհանուր սկզբունքներին, իսկ այդ սկզբունքներից ցանկացած շեղում պետք է ունենա օբյեկտիվ հիմք և հետապնդի իրավաչափ նպատակ:

Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանի զեկուցող դատավորի կողմից Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալությանը ներկայացված պահանջի կատարման շրջանակներում տրամադրված պատասխանում գործակալությունը հայտնել է, որ **«բժշկասոցիալական փորձաքննության տեսանկյունից հիվանդության, խեղման նաև վնասվածքի առնչությամբ տարբերակված մոտեցում ցուցաբերելու որևէ օբյեկտիվ հիմքեր չկան, քանի որ ՀՀ կառավարության 13.06.2003թ. «Բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները հաստատելու մասին» N 780-Ն որոշման 1-ին կետում սահմանվում է, որ հաշմանդամությունը հիվանդություններով, վնասվածքներով կամ արատներով պայմանավորված օրգանիզմի ֆունկցիաների կայուն խանգարումների հետևանքով առաջացած սոցիալական անբավարարությունն է, որը հանգեցնում է անձի կենսագործունեության**

սահմանափակման և սոցիալական պաշտպանության անհրաժեշտության, այսինքն անձին հաշմանդամ են ճանաչում՝ հիմք ընդունելով ոչ թե անձի մոտ առկա հիվանդությունը, վնասվածքը կամ խեղումը, այլ երբ անձի մոտ առկա է հիվանդության, վնասվածքի կամ խեղման հետևանքով առաջացած օրգանիզմի ֆունկցիաների կայուն խանգարումներով պայմանավորված կենսագործունեության որևէ տեսակի և որևէ աստիճանի սահմանափակում»:

Ըստ էության, վերոշարադրյալ պատասխանից հետևում է, որ վիճարկվող իրավակարգավորումն առաջացրել է նաև օրենքի առջև ընդհանուր հավասարության՝ Սահմանադրության 28-րդ հոդվածում ամրագրված հիմնական իրավունքի խախտման խնդիր:

Բացի դրանից, Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ վիճարկվող իրավադրույթով, մի դեպքում՝ հիվանդության և խեղման, իսկ մյուս դեպքում՝ վնասվածքի հիմքով տարբերակված մոտեցում ցուցաբերելու համար որևէ օբյեկտիվ հիմք առկա չէ, այն չի վկայակոչել նաև սույն գործով պատասխանողն իր բացատրություններում՝ չնայած այն հանգամանքին, որ իրավաչափ է համարել օբյեկտիվ հիմքով տարբերակված մոտեցում ցուցաբերելու դեպքերը:

**Այսինքն անկախ նրանից, թե ինչ (հիվանդության, խեղման, թե վնասվածքի) հիմքով է սահմանվել (որոշվել) զինվորական ծառայության հետ հաշմանդամության պատճառական կապը, հաշմանդամ ճանաչված զինծառայողներն ունեն նույն կարգավիճակը՝ առողջության խաթարմամբ պայմանավորված, կենսագործունեության սահմանափակումների հետևանքով սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն:**

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրի կողմից հիշյալ տարբերակված մոտեցումը խախտում է խտրականության արգելքի սահմանադրական սկզբունքը, քանի որ, ինչպես արդեն նշվեց, զինվորական ծառայության հետ հաշմանդամության պատճառական կապը հաստատվելուց հետո հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակելիս առկա չէ, մի կողմից՝ հիվանդության և խեղման, իսկ մյուս կողմից՝ վնասվածքի հիմքով տարբերակված մոտեցում ցուցաբերելու որևէ օբյեկտիվ հիմք և իրավաչափ նպատակ:

Սահմանադրական դատարանն իր՝ 2015 թվականի հունիսի 9-ի ՄԴՈ-1213 որոշմամբ հայտնել է, որ «...իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված

իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ **իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:**

Վերոշարադրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը փաստում է, որ անհրաժեշտ է Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասության «հինգ տարվա ընթացքում» բառակապակցությունը և նույն մասի երկրորդ նախադասությունն ամբողջությամբ՝ այդպիսով բոլոր դեպքերի համար սահմանելով միայն մեկ առավել բարենպաստ (զինվորական ծառայության հետ հաշմանդամության (հիվանդության, խեղման, վնասվածքի) պատճառային կապը հաստատելուց հետո **առանց որևէ ժամկետային սահմանափակման** հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ) իրավակարգավորում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 4-րդ մասը, 170-րդ հոդվածը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածների՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը՝ «հինգ տարվա ընթացքում» արտահայտության և «Եթե զինծառայողի հաշմանդամության առաջացման պատճառը կապված է զինվորական ծառայության ժամանակ՝ մինչև զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելն ստացած վնասվածքի հետ, ապա զինծառայողին հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակվում է անկախ հաշմանդամության պատճառական կապը սահմանելու (որոշելու) ժամկետից:» նախադասության մասով, ճանաչել Սահմանադրության 29-րդ հոդվածին հակասող և անվավեր:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

12 հուլիսի 2019 թվականի  
ՍԴՈ-1475



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՌՈՔԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 35-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՎ  
135-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

4 սեպտեմբերի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ա. Դիլանյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի (զեկուցող), մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի ներկայացուցիչ՝ փաստաբան Ա. Վարդևանյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ Ա. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,



դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ռոբերտ Քոչարյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի և 135-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Մահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 01.07.1998 թ., Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 01.09.1998 թ. և ուժի մեջ է մտել 12.01.1999 թ.:

Օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող «Քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ» վերտառությամբ 35-րդ հոդվածը սահմանում է.

«1. Քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝

- 1) բացակայում է հանցագործության դեպքը.
- 2) արարքի մեջ հանցակազմ չկա.
- 3) վնաս պատճառած արարքը քրեական օրենքով համարվում է իրավաչափ.
- 4) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բացակայում է դիմողի բողոքը.
- 5) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ.
- 6) անցել են վաղեմության ժամկետները.
- 7) անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով օրինական ուժի մեջ մտած դատավճիռ կամ դատարանի այլ որոշում, որը հաստատում է քրեական հետապնդման անհնարինությունը.
- 8) անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի չվերացված որոշում.
- 9) անձն արարքը կատարելու պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով նախատեսված տարիքին.
- 10) անձը մահացել է, բացառությամբ այն դեպքերի, երբ գործի վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար.

11) անձը կամովին հրաժարվել է հանցագործությունը մինչև վերջ հասցնելուց, եթե նրա փաստորեն կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում.

12) անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից.

13) ընդունվել է համաներման մասին օրենք:

1<sup>1</sup>. Սույն հոդվածի առաջին մասի 10-րդ կետը չի տարածվում քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով անձին մահացած ճանաչելու դեպքերի վրա: Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով անձին մահացած ճանաչելը հիմք է անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու համար միայն Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի որոշմամբ:

2. Քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, իսկ գործի վարույթը ենթակա է կարճման՝ կատարված հանցագործությանը կասկածյալի կամ մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու արդյունքում, եթե սպառված են նոր ապացույցներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները:

3. Դատախազը, քննիչը, հայտնաբերելով քրեական գործի վարույթը բացառող հանգամանքներ, քրեական գործով մինչդատական վարույթի յուրաքանչյուր փուլում որոշում են կայացնում քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Դատախազն իրավասու է քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնել նաև գործը դատարան ուղարկելուց հետո, բայց մինչև դատական նիստում գործի քննությունն սկսվելը:

4. Մեղադրողը, դատարանում հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, պարտավոր է հայտարարել ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին: Ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին մեղադրողի հայտարարությունը դատարանի համար քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք է:

5. Դատարանը, հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը:

6. Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ և 13-րդ կետերում նշված հիմքերով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով:

Սույն հոդվածի առաջին մասի 13-րդ կետում նշված հիմքով գործի հարուցման մերժում, վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե չի հաստուցվել կամ այլ կերպ չի հարթվել պատճառված վնասը, կամ առկա է վեճ հաստուցման ենթակա վնասի կապակցությամբ: Այս դեպքում ևս գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով: Սույն պարբերությամբ նախատեսված կարգավորումը գործում է, եթե համաներման մասին օրենքով այլ բան նախատեսված չէ»:

Օրենսգրքի սույն գործով վիճարկվող «Խափանման միջոց կիրառելու հիմքերը» վերտառությամբ 135-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ կա հիմնավոր կասկած, որ նա կատարել է այնպիսի հանցանք, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, և կան բավարար հիմքեր ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ գործողություն»:

Գործի քննության առիթը Ռեբերտ Քոչարյանի՝ 2019 թվականի մայիսի 29-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, կողմերի գրավոր բացատրությունները, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև Օրենսգրքի վերաբերելի կարգավորումները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

### 1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը, ինչպես նաև նույն Օրենսգրքի 35-րդ հոդվածը հակասում են Սահմանադրության 27-րդ և 63-րդ հոդվածներին:

Ըստ դիմողի՝ Օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված հիմնավոր կասկածի ինստիտուտը չի կարող հանդիսանալ Հանրապետության նախագահի գործառնությանին անձեռնմխելիության գնահատման մեխանիզմ հաշվի առնելով առհասարակ ան-

ձեռնմխելիության էությունը և դրանով հետապնդվող նպատակները, քանի որ վերջինս ուղղված է նաև այդ երաշխիքից օգտվող անձանց պաշտպանությանը, այդ թվում՝ հիմնավոր կասկածի գնահատման տեսանկյունից:

Մինչդեռ դիմողը կարծում է, որ քննարկման առարկա քրեական գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանի 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ Օրենսգրքի 135-րդ հոդվածով ամրագրված հիմնավոր կասկածի ինստիտուտին տրվել է յուրովի մեկնաբանություն, ըստ որի՝ Օրենսգրքի 135-րդ հոդվածով ամրագրված հիմնավոր կասկածի ինստիտուտը գործառութային անձեռնմխելիության պարտադիր բաղադրիչ է:

Դիմողը նաև ներկայացնում է Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձնական ազատության իրավունքի սահմանափակման՝ օրենքով սահմանված կարգի խախտման հիմնավորումներ: Մասնավորապես, այս կապակցությամբ դիմողը հայտնում է, որ միայն այն հանգամանքը, որ Օրենսգրքի 135-րդ հոդվածը և դրան տրված դատական մեկնաբանությունը չեն անդրադառնում խափանման միջոցի կիրառման կարգին և դրանով սահմանված կարգավորումներին՝ բացառապես գործնականում մեկնաբանելով հիմնավոր կասկածի պայմանին վերաբերող նորմերը, ինքնին վկայում են Սահմանադրության 27-րդ հոդվածով երաշխավորված անձնական ազատության պաշտպանության երաշխիք հանդիսացող օրենքով սահմանված կարգի պահպանման ելակետային պայմանի խախտման մասին:

Բացի դրանից, դիմողը նշում է, որ Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձնական ազատության իրավունքի սահմանափակման՝ օրենքով սահմանված կարգի խախտում է այն, որ Օրենսգրքի 35-րդ հոդվածով սահմանված պայմանների լիարժեք գնահատմանը պետք է հաջորդի կալանքի քննությունը, քանի որ դատարանը նշված հոդվածի ուժով կարող է առհասարակ անդրադարձ չկատարել կալանավորման հարցին՝ պայմանավորված քրեական հետապնդումը բացառող հանգամանքի առկայությամբ: Այս համատեքստում վերլուծելով տարբեր քրեական գործերի շրջանակներում Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները՝ դիմողը գտնում է, որ կալանքը ենթակա չէ կիրառման մինչև անձեռնմխելիության հաղթահարումը կամ դրա առկայության հարցի պարզումը, այսինքն՝ այն պետք է քննարկվի մինչև հիմնավոր կասկածին անդրադառնալը:

Անդրադառնալով Սահմանադրությամբ երաշխավորված՝ պաշտոնաթող Հանրապետության նախագահի գործառնությանն անձեռնմխելիությանը դիմողը նշում է, որ Հանրապետության նախագահի անձեռնմխելիության ինստիտուտին տրված մեկնաբանությունն այնքանով, որքանով անձեռնմխելիության ինստիտուտը դիտարկվում է բացառապես պաշտոնաթող Հանրապետության նախագահի պաշտոնավարման ընթացքում օրինական գործողությունների համատեքստում, չի համապատասխանում ոչ Սահմանադրությանը, ոչ էլ միջազգային փորձին: Դիմողը կարծում է, որ գործառնությանն անձեռնմխելիության բացահայտման համար ելակետային է պաշտոնական կարգավիճակի առկայության կամ բացակայության փաստը պարզելը, և դիմողի վերաբերյալ դատարանները հստակ հաստատել են, որ նրան մեղսագրվող արարքում դիմողը հանդես է եկել որպես Հանրապետության նախագահ, այսինքն՝ իր պաշտոնական կարգավիճակում:

Այս կապակցությամբ դիմողը նաև փաստում է, որ պատահական չէ, որ Սահմանադրությունը պաշտոնաթող Հանրապետության նախագահի գործառնությանն անձեռնմխելիության հաղթահարման մեխանիզմ չի նախատեսում, քանի որ սահմանադրի կամքը *prima facie* հանդիսացել է առհասարակ այդ հարցին անդրադարձ չկատարելը, եթե ենթադրյալ արարքը կատարվել է Հանրապետության նախագահի կարգավիճակից ելնելով. այն քրեական հետապնդումը բացառող հանգամանք է:

Դիմողն արձանագրում է, որ Օրենսգրքի 35-րդ հոդվածում առկա է օրենսդրական բաց, քանի որ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների շարքում չի քննարկվում անձի անձեռնմխելիության հետ կապված գործընթացի չպահպանման հարցը, իսկ Օրենսգրքի մնացյալ հոդվածներում անձեռնմխելիության ինստիտուտը քննարկվում է բացառապես դիվանագիտական անձեռնմխելիության շրջանակներում: Ընդ որում, ըստ դիմողի՝ հիշյալ օրենսդրական բացը հնարավոր չէ հաղթահարել քննարկման առարկա հարցը Օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքերի տեսանկյունից դիտարկելու պարագայում:

Բացի դրանից, դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 135-րդ հոդվածը՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, հակասում է Սահմանադրության 66-րդ հոդվածին:

Ի հիմնավորումն վերագրյալ դիրքորոշման՝ դիմողը հայտնում է, որ Վճռաբեկ դատարանի 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ Օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասի մեկնաբանման և կիրառման արդյունքում առաջ է քաշվել հիմնավոր կասկածի գնահատման ամբողջությամբ նոր չափորոշիչ, որը վերաբերում է գործառությանին անձեռնմխելիության առկայության կամ բացակայության հաստատման հարցին:

Դիմողը նաև առարկություն է ներկայացրել պատասխանողի դիրքորոշումների վերաբերյալ՝ նշելով, որ պատասխանողի կողմից որևէ բովանդակային անդրադարձ չի կատարվել վիճարկվող դրույթների սահմանադրականության հարցին, ինչպես նաև վիճարկվող դրույթներին՝ իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում տրված մեկնաբանության սահմանադրականության հարցին:

**2. Պատասխանողի դիրքորոշումները**

Առավելապես վերարտադրելով տարբեր իրավակարգավորումներ, մասնավորապես, Օրենսգրքի վիճարկվող դրույթները, իրավական պետության (Սահմանադրության 1-ին հոդված), անձնական ազատության (Սահմանադրության 27-րդ հոդված), արդար դատաքննության (Սահմանադրության 63-րդ հոդված) և անմեղության կանխավարկածի (Սահմանադրության 66-րդ հոդված) վերաբերյալ սահմանադրական դրույթները, դիմողի դիրքորոշումները, Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները, հղում կատարելով Հայաստանի Հանրապետության վավերացրած մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկային, ինչպես նաև քրեադատավարական մի շարք կարգավորումների՝ պատասխանողը գտնում է, որ անձնական ազատությունը բացարձակ չէ, և սահմանադրական ու քրեական իրավունքի նորմերն ամրագրում են մարդուն ազատությունից զրկելը՝ հստակ սահմանելով այնպիսի կարգավորումներ, որոնց հիման վրա դա կարելի է անել:

Անդրադառնալով արդար դատաքննության իրավունքի ենթադրյալ խախտմանը՝ պատասխանողը վկայակոչում է Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներ, որոնք, իր կարծիքով, վերաբերում են այդ հարցին: Իսկ անմեղության կանխավարկածի ենթադրյալ խախտման առնչությամբ պատասխանողը նշում է, որ

այն՝ որպես մեղադրյալի օբյեկտիվ կարգավիճակ, չի նշանակում, որ Սահմանադրությունը բացառում է մեղադրյալի մեղավորությունը: Այնուհետև պատասխանողը մեջբերում է Սահմանադրական դատարանի ՄԴՈ-871 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներն անմեղության կանխավարկածի վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պատասխանողը հանգում է հետևության, որ Օրենսգրքի 35-րդ հոդվածով և 135-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված իրավադրույթները համահունչ են անձնական ազատության, արդար դատաքնության և անմեղության կանխավարկածի վերաբերյալ սահմանադրաիրավական պահանջներին:

**3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները**

Սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

արդյոք Օրենսգրքում առկա են Սահմանադրության ուժով անձեռնմխելիությամբ օժտված պաշտոնատար անձանց՝ իրենց լիազորությունների ժամկետում և դրանից հետո իրենց կարգավիճակից կամ գործունեությունից բխող գործողությունների համար հետապնդելուց և պատասխանատվության ենթարկելուց արդյունավետ պաշտպանելու համար անհրաժեշտ օրենսդրական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Դիմումում բարձրացված հարցերի շրջանակներում Սահմանադրական դատարանը 2019 թվականի ապրիլի 16-ի ՄԴՈ-1453 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները հիմնականում կիրառելի համարելով նաև սույն գործով՝ փաստում է, որ դիմողի կողմից վիճարկվող դրույթները քրեական գործով դիմողի մեղքի ապացուցված լինելու առումով դեռևս չեն կիրառվել, և դիմողը դրանց սահմանադրականությունը վիճարկում է իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, որով հնարավոր է դարձել մեղադրանքի առաջադրումը և կալանքի որպես խափանման միջոցի ընտրությունը:

Միաժամանակ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով մեղադրանքի, ուստիև կալանքի իրավաչափության հարցի լուծումը պայմանավորված է պաշտոնաթող Հանրա-

պետության նախագահի անձեռնմխելիության սահմանադրական երաշխիքներով: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դիմողը նաև այս տեսանկյունից է բարձրացնում Օրենսգրքի 35-րդ հոդվածում առկա օրենսդրական բացի հարցը, Սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների շարքում պաշտոնաթող Հանրապետության նախագահի անձեռնմխելիության սահմանադրական երաշխիքների օրենսդրական կենսագործման ենթադրյալ բացակայությունն ուղղակիորեն կարող է հանգեցնել նրա անձնական ազատության, ինչպես նաև դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների՝ Սահմանադրության տեսանկյունից չարդարացված սահմանափակման: Հետևաբար, մեղադրանքի, ուստիև կալանքի իրավաչափության գնահատման համար էական նշանակություն ունի ոչ միայն մեղադրանքի հիմքում դրված քրեական օրենքի, այլև **քրեական հետապնդումը կանոնակարգող քրեադատավարական օրենքի դրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը, ինչը ներառում է նաև քրեադատավարական օրենքում Սահմանադրությանը հակասող օրենսդրական բացեր չլինելը:**

Ելնելով վերոգրյալից՝ սույն գործը դիմումում բարձրացված հարցադրումների շրջանակներում Սահմանադրական դատարանը քննում և լուծում է ոչ թե պաշտոնաթող Հանրապետության նախագահի անձեռնմխելիության սահմանադրական երաշխիքների ենթադրյալ բովանդակային խախտման տեսանկյունից, ինչը դիմումի շրջանակներում և ներկա փուլում՝ հաշվի առնելով անհատական դիմումի թույլատրելիության նախադրյալները, հնարավոր չէ, այլ Սահմանադրության ուժով անձեռնմխելիությամբ օժտված պաշտոնատար անձանց, այդ թվում՝ պաշտոնաթող Հանրապետության նախագահի գործառնության անձեռնմխելիությամբ պայմանավորված՝ մեղադրանքի իրավաչափության ապահովման տեսանկյունից՝ հաշվի առնելով որևէ պաշտոնատար անձի գործառնության անձեռնմխելիության սահմանադրական երաշխիքների ուղղակի ներազդեցությունը նրա՝ որպես մասնավոր անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված վերոգրյալ հիմնական իրավունքների և ազատության վրա, ինչպես նաև այդ առումով վերջնական դատական ակտի առկայության և դատական պաշտպանության միջոցների սպառման փաստերը:



Այսպիսով, Սահմանադրական դատարանը սույն գործով վիճարկվող դրույթները քննության է առնում Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածին համապատասխանության տեսանկյունից:

**4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1.** Սահմանադրությունը կարևորագույն սահմանադրական գործառույթներ իրականացնող մի շարք պաշտոնատար անձանց օժտել է անձեռնմխելիությամբ, որի նպատակը նախևառաջ այդ անձանց բնականոն և արդյունավետ գործունեությունը երաշխավորելն է, ինչպես նաև այդ անձանց պաշտպանելն է նրանց լիազորություններին ոչ իրավաչափ միջամտություններից և անհիմն հետապնդումներից:

Միննույն ժամանակ, սահմանադրական անձեռնմխելիության բովանդակությունը անձեռնմխելիությամբ օժտված պաշտոնատար անձանց համար միասնական կամ միատեսակ չէ, և կախված կոնկրետ պաշտոնատար անձի կարգավիճակից անձեռնմխելիությունն ունի տարբեր ծավալ և հաղթահարման տարբեր ընթացակարգեր:

Այսպես՝ Սահմանադրության 96-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավորն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել պատգամավորական գործունեության շրջանակներում հայտնաձև կարծիքի կամ քվեարկության համար: Անձեռնմխելիության այս իրավունքը տարածվում է նաև Մարդու իրավունքների պաշտպանի վրա (Սահմանադրության 193-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասություն):

Ըստ Սահմանադրության 140-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հանրապետության նախագահն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար:

Սահմանադրության 164-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնաձև կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար, բացառությամբ երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ:

Վերոնշյալ պաշտոնատար անձանց հավելյալ սահմանադրական պաշտպանության տրամադրումը պայմանավորված է նրանց սահմանադրական հատուկ կարգավիճակով, դրանից բխող նրանց գործառույթների բովանդակությամբ (այսուհետ՝ գործառութային անձեռնմխելիություն): Դրան գուգահեռ Սահմանադրությունը նախատեսում է անձեռնմխելիության ևս մեկ երաշխիք, որը որոշակի պաշտոնատար անձանց պաշտպանում է նաև նրանց կարգավիճակի կամ գործունեության հետ չկապված հետապնդումներից (այսուհետ՝ անձնական անձեռնմխելիություն): Սակայն այս հարցում ևս կարգավորումները նույնական չեն:

Վկայակոչված սահմանադրական նորմերից հետևում է, որ Ազգային ժողովի պատգամավորը, Հանրապետության նախագահը և Մարդու իրավունքների պաշտպանն իրենց լիազորությունների ժամկետում օգտվում են *ինչպես գործառութային, այնպես էլ անձնական անձեռնմխելիությունից*, իսկ այդ ժամկետից հետո՝ *միայն գործառութային անձեռնմխելիությունից*: Մինչդեռ դատավորներն օժտված են միայն գործառութային անձեռնմխելիությամբ և անձնական անձեռնմխելիությունից չեն օգտվում: Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքը սահմանադրական օրենքում առկա կարգավորման ուժով (83-րդ հոդվածի 5-րդ մաս) նույնաբովանդակ պաշտպանություն է նախատեսված նաև Բարձրագույն դատական խորհրդի՝ Ազգային ժողովի կողմից ընտրված անդամների համար:

Անդրադառնալով Հանրապետության նախագահի անձեռնմխելիության սահմանադրական երաշխիքներին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հանրապետության նախագահի գործառութային անձեռնմխելիությունն անժամկետ է (Սահմանադրության 140-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր: Նույնական կարգավորումներ առկա էին նաև 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 56.1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերում): Ինչ վերաբերում է Հանրապետության նախագահի անձնական անձեռնմխելիությանը, ապա այն գործում է միայն նրա լիազորությունների ժամկետում և դադարում է այդ ժամկետի ավարտով (Սահմանադրության 140-րդ հոդվածի 3-րդ մաս: Նույնական կարգավորումներ առկա էին նաև 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 56.1-ին հոդվածի 3-րդ մասում):

Հանրապետության նախագահի անձեռնմխելիությունը երաշխավորող սահմանադրական նորմերի համալիր վերլուծությունից հետևում է, որ Սահմանադրությամբ նախատեսված չէ Հանրապե-

տության նախագահի լիազորությունների ժամկետում նրա անձնական անձեռնմխելիությունը հաղթահարելու իրավասություն ունեցող հանրային իշխանության մարմին, ինչպես նաև նախանշված չէ այդպիսի ընթացակարգ: Իհարկե, դա չի նշանակում Հանրապետության նախագահին պատասխանատվության ենթարկելու իրավական հնարավորության բացառում, քանի որ Սահմանադրության 141-րդ հոդվածով նախատեսված Հանրապետության նախագահի պաշտոնանկությունը, որը նրա անձնական անձեռնմխելիության երաշխիքի վաղաժամկետ դադարեցման միջնորդավորված կառուցակարգ է, հանգեցնում է հենց նրա լիազորությունները Սահմանադրությամբ սահմանված ժամկետից շուտ դադարեցնելուն, որն էլ իր հերթին թույլ է տալիս նրա նկատմամբ նախաձեռնել պատասխանատվության ենթարկելու գործընթաց:

Մինևույն ժամանակ Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրությունը չի ամրագրում հատուկ ընթացակարգ, որի շրջանակներում պաշտոնաթող Հանրապետության նախագահին պատասխանատվության ենթարկելու համար հիմք հանդիսացող գործողությունները որևէ պետական մարմնի կողմից կարող են գնահատվել որպես Հանրապետության նախագահի կարգավիճակից բխող կամ չբխող:

**4.2.** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի 35-րդ հոդվածում սպառիչ թվարկվում են մի շարք փաստական և իրավական հանգամանքներ, որոնց հաստատված առկայության հետ անհամատեղելի է կոնկրետ անձի նկատմամբ քրեական հետապնդման իրականացումը կամ քրեական գործի վարույթի շարունակությունը:

Սահմանադրական դատարանը, վերահաստատելով իր՝ 30.03.2010 թ. ՄԴՈ-871 որոշմամբ արտահայտած դիրքորոշումն առ այն, որ Օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում հստակ առանձնացված չեն գործի վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման կամ այդ երկու ինստիտուտների համատեղ կիրառման հիմքերը, միաժամանակ փաստում է, որ հիշյալ հոդվածի 3-5-րդ մասերում ամրագրված կարգավորումների ուժով դրանք քրեական վարույթն իրականացնող մարմնի համար համապատասխան դատավարական որոշում կայացնելու պարտադիր նախադրյալ են: Բացառություն են կազմում միայն Օրենսգրքի 35-րդ

հողվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերը, որոնք լրացուցիչ երաշխիքներ են սահմանում մեղադրյալի և տուժողի իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության համար և որոշակի պայմանով քրեական վարույթն իրականացնող մարմնին արգելում են դադարեցնել քրեական հետապնդումը և ավարտել գործի վարույթը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական գործի վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման ինստիտուտների նպատակը նախևառաջ հանցանքի կատարման մեջ կասկածվող կամ մեղադրվող անձի հիմնական, ներառյալ՝ արդար դատաքննության, անմեղության կանխավարկածի և կրկին չդատվելու իրավունքների իրականացման դատավարական երաշխիքներ ամրագրելն է, ինչպես նաև քրեական վարույթի իրականացման արդյունավետ կազմակերպական կառուցակարգ և ընթացակարգ սահմանելը: *Ուստի դրանց ոչ ամբողջական կամ ոչ պատշաճ իրավական կանոնակարգումներն ուղղակիորեն վտանգում են այդ նպատակի կենսագործումը:*

Անդրադառնալով սույն գործով դիմումում վկայակոչված քրեական գործով դատարանների կողմից Օրենսգրքի 35-րդ հոդվածի կիրառմանը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատարանները, ուղղակիորեն չմեկնաբանելով Օրենսգրքի 35-րդ հոդվածը, ըստ էության կիրառել են այն. մեկնաբանել են Սահմանադրության 140-րդ հոդվածը՝ իրենց ընկալման շրջանակներում կոնկրետացնելով Հանրապետության նախագահի, այդ թվում՝ պաշտոնաթող, գործառութային անձեռնմխելիության նպատակները և ծավալը: Բացի այդ, հարկ է նշել, որ կալանքի՝ որպես խափանման միջոցի, կիրառումն անհնար է առանց քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների առկայությունը պարզելու՝ անկախ նրանից, թե այդ հոդվածը ձևական առումով հիշատակվում է դատական ակտում, թե՛ ոչ: Փաստ է նաև, որ դատարաններն անդրադարձել են Սահմանադրությամբ ամրագրված՝ պաշտոնաթող Հանրապետության նախագահի անձեռնմխելիության՝ որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի, մեկնաբանությանը:

2008 թվականի ապրիլի 4-ի ՄԴՈ-747 որոշման մեջ անդրադառնալով օրենքի դրույթի կիրառման եզրույթին՝ Սահմանադրական դատարանը իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ

այդ եզրույթը չի նշանակում դատական ակտերում օրենքի դրույթի ցանկացած վկայակոչում: Օրենքի կիրառումը **պետք է անձի համար առաջացնի իրավական հետևանքներ**: Դա նշանակում է, որ օրենքի դրույթի ձևական չվկայակոչումը վերջնական դատական ակտում չի ենթադրում, որ այն դիմողի նկատմամբ չի կիրառվել, եթե այն նրա համար առաջացրել է իրավական հետևանքներ: Տվյալ դեպքում՝ առաջադրվել է մեղադրանք և կիրառվել է խափանման միջոց կալանք: **Ընդ որում, օրենսդրական բացի դեպքում որևէ կոնկրետ վկայակոչում դատական ակտում անհրաժեշտ չէ, որ Սահմանադրական դատարանն անդրադառնա այդ օրենսդրական բացի սահմանադրականության հարցին, քանի որ այլ կերպ օրենսդրի կողմից թույլ տրված օրենսդրական բացերը, որոնք կարող են խախտել կամ խախտում են անձի հիմնական իրավունքները և ազատությունները, Սահմանադրական դատարանի կողմից չեն կարող քննվել կամ հաղթահարվել, մինչդեռ Սահմանադրական դատարանն այդ առումով ձևավորել է տևական և հետևողական պրակտիկա՝ արտահայտելով կոնկրետ իրավական դիրքորոշումներ:**

Սույն գործով Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրության մեկնաբանման եղանակով դատարանները փորձել են լրացնել քրեադատավարական օրենքի բացը, ընդ որում՝ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում, ինչը վկայում է, որ նրանք ընդունել և կարևորել են անձեռնմխելիության կանխորոշիչ նշանակությունը մեղադրանքի, հետևապես՝ նաև կալանքի իրավաչափության համար<sup>1</sup>:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատարանները սովորական օրենքում ամրագրված որևէ հիմք չեն ունեցել կիրառելու սահմանադրական անձեռնմխելիության քրեադատավարական հետևանքները, քանի որ Օրենսգիրքն իրենց նման լիազորությամբ չի օժտել:

Այսպիսով գործառությանի անձեռնմխելիությունը **Սահմանադրության ուժով քրեական պատասխանատվությունը, ուստի և քրեադատավարական գործընթացը բացառող հանգամանք է**, հե-

<sup>1</sup> Վերաբերելի մասով տե՛ս, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ԵՂ/0743/06/18 որոշման 19-21-րդ կետերը:

տևապես, այն պետք է իր կոնկրետացումն ստանար նախևառաջ Օրենսգրքի վերաբերելի 35-րդ հոդվածում, որպեսզի իրավասու մարմինները *ընթացակարգային հիմքեր ունենան կիրառելու այն քրեական դատավարության շրջանակներում:*

**4.3.** Ինչ վերաբերում է Օրենսգրքի վերաբերելի այլ կարգավորումներին, ապա դրա 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն քրեական գործով վարույթը դատախազի, քննիչի կամ դատարանի որոշմամբ ամբողջությամբ կամ համապատասխան մասով կարող է կասեցվել, եթե մեղադրյալը կամ այն անձը, որին գործով որպես մեղադրյալ ներգրավելու բավարար հիմքեր կան, օգտվում է քրեական հետապնդման ենթարկվելու անձեռնմխելիությունից: Ըստ Օրենսգրքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի՝ քրեական գործով վարույթը կասեցվում է՝ մինչև այն կասեցնելու հիմք ծառայած հանգամանքները վերացնելը: Դրանց վերացումից հետո այն վերսկսվում է դատախազի, քննիչի կամ դատարանի որոշմամբ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անձի՝ քրեական հետապնդման ենթարկվելու անձեռնմխելիությունից օգտվելու ուժով Օրենսգրքի վերոնշյալ հոդվածը վարույթն իրականացնող մարմինն օժտում է քրեական ընթացակարգը ժամանակավորապես ընդհատելու հայեցողական լիազորությամբ, սակայն չի կոնկրետացնում ո՛չ տվյալ անձի սահմանադրական կարգավիճակը, ո՛չ էլ անձեռնմխելիության տեսակը (գործառությանին, թե անձնական): Հետևաբար, այս կարգավորումը հավասարապես վերաբերում է սահմանադրական անձեռնմխելիությամբ օժտված բոլոր անձանց:

Միաժամանակ Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենսգրքում առկա են քրեական հետապնդման ենթարկվելու անձեռնմխելիությունից օգտվող անձանց վերաբերող նաև այլ ընդհանուր կարգավորումներ, մասնավորապես՝ Օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետը, 136-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը, 295-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքում ընդհանրապես բացակայում են *Սահմանադրությունից բխող* այնպիսի *հատուկ և անհրաժեշտ կարգավորումներ*, որոնք հնարավորություն կտային գործառությանին անձեռնմխելիությամբ

օժտված պաշտոնատար անձանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և իրականացնելու ընթացքում գնահատել, թե արդյոք նրանց վերագրվող գործողությունը կամ անգործությունը բխում է կամ բխել է նրանց ներկա կամ նախկին կարգավիճակից կամ գործունեությունից, թե ոչ:

Հետևաբար, այդ անձանց գործառնության անձեռնմխելիության առկայության հարցը պետք է լուծվի քրեադատավարական ընդհանուր կարգավորումների շրջանակներում՝ մինչդասական վարույթում քննիչի կամ դատախազի, իսկ դատական վարույթներում՝ դատարանի կողմից:

Օրենսգիրքը, սակայն, չի նախատեսում այն իրավական հետևանքները, որոնք կառաջանան, եթե իրավասու մարմինը հանգեր այնպիսի եզրակացության, որ գործառնության անձեռնմխելիությամբ օժտված անձին վերագրվող գործողությունը կամ անգործությունը բխել է նրա կարգավիճակից կամ գործունեությունից: **Ավելին՝ բոլոր այն դեպքերում, երբ կպարզվի, որ այդ անձին վերագրվող արարքը վերաբերում է նրա կարգավիճակից կամ գործունեությունից բխող գործողությանը կամ անգործությանը, կամ կհաստատվի, որ նրա նկատմամբ արդեն հարուցված քրեական հետապնդումն անհամատեղելի է նրա գործառնության անձեռնմխելիության հետ, իրավասու մարմինն օբյեկտիվորեն զրկված կլինի գործառնության անձեռնմխելիության առկայության հիմքով այդ անձի նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու կամ արդեն իսկ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու, ինչպես նաև կալանք չկիրառելու վերաբերյալ օրինական որոշում կայացնելու իրավական հնարավորությունից, քանի որ բացակայում է նման որոշում կայացնելու դատավարական հիմքը:**

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ *քրեադատավարական ընդհանուր կանոնակարգումների* համաձայն՝ անձին որպես մեղադրյալ ներգրավելու հիմքը *նրա կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցությունն է*, և միայն այդ հիմքի առկայության դեպքում քննիչը, դատախազը պատճառաբանված որոշում են կայացնում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին (Օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): Այս առումով Սահմանադրական դատարանը գտնում է, որ **Սահմանադրության ուժով անձեռնմխելիությամբ օժտված և, ըստ**

այդմ՝ հատուկ պաշտպանություն ունեցող անձանց (ներառյալ՝ պաշտոնաթող Հանրապետության նախագահին) ներկայացվելիք մեղադրանքը, այդ թվում՝ հիմնավոր կասկածի տեսանկյունից, պետք է բավարարի իրավաչափության լրացուցիչ և նախնական պարտադիր պահանջը, այն է՝ այդ անձանց մեղսագրվող արարքը, ներառյալ դրա հիմքում դրված փաստերը չպետք է վերաբերեն այնպիսի գործողության կամ անգործության, որը բխում է կամ բխել է նրանց կարգավիճակից կամ գործունեությունից: Հակառակ դեպքում գործառույթային անձեռնմխելիությամբ օժտված անձանց նկատմամբ քրեական հետապնդում չի կարող հարուցվել, իսկ հարուցված քրեական հետապնդումը և դրան հաջորդած բոլոր գործողությունները պետք է ճանաչվեն ոչ իրավաչափ և անհապաղ դադարեցվեն:

Հետևապես, օրենսդիրը պարտավոր է սահմանել հստակ կանոնակարգումներ, որոնք գործառույթային անձեռնմխելիության տեսանկյունից թույլ կտան մինչդատական քրեական վարույթի նկատմամբ իրականացնել արդյունավետ դատախազական հսկողություն և դատական վերահսկողություն, ինչպես նաև, ի հավելումն ընդհանուր պահանջների, գնահատել նաև գործառույթային անձեռնմխելիությամբ օժտված անձանց նկատմամբ հարուցվելիք կամ արդեն հարուցված քրեական հետապնդման, ուստի կալանքի կիրառման իրավաչափությունը:

4.4. Իր բազմաթիվ որոշումներում Սահմանադրական դատարանն անդրադարձել է օրենսդրական բացի հիմնահարցերին (մասնավորապես՝ ՍԴՈ-864, ՍԴՈ-914, ՍԴՈ-922, ՍԴՈ-1020, ՍԴՈ-1056, ՍԴՈ-1143):

Վերահաստատելով և զարգացնելով օրենսդրական բացի վերաբերյալ իր իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է.

1) օրենսդրական բացը Սահմանադրական դատարանի քննության առարկա կարող է դառնալ այն ժամանակ, երբ այն *իրավաչափ կարգավորման թերությունն է*, այլ ոչ թե իրավաստեղծ մարմնի, տվյալ դեպքում՝ օրենսդրի կամքը՝ ձեռնպահ մնալու որպես օրենսդրական բաց ընկալվող իրավական կարգավորումից.

2) ցանկացած թերի օրենսդրական կարգավորում չէ, որը որպես օրենսդրական բաց կարող է Սահմանադրական դատարանի քննու-



թյան առարկա դառնալ, այլ միայն *այնպիսի օրենսդրական բացը, որը հնարավոր չէ հաղթահարել այլ վերաբերելի իրավակարգավորումները մեկնաբանելու և կիրառելու միջոցով*։

3) օրենսդրական բացը պետք է հանգեցրած լինի հակասական իրավակիրառ պրակտիկայի, որը հնարավոր չէ հաղթահարել կամ որը փաստացի չի հաղթահարվել սովորական դատարանների կողմից։

4) օրենսդրական բաց առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքությունն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է **օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը**։

5) այն դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է։ Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, **որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք**։

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության ուժով հատուկ պաշտպանությամբ օժտված պաշտոնատար անձանց գործառութային անձեռնմխելիությամբ պայմանավորված կարգավորումներն անհրաժեշտ ամրագրում չեն ստացել Օրենսգրքում, ինչը հանգեցրել է նրան, որ իրավասու մարմինները որևէ պարտականություն չունեն պարզելու, թե արդյո՞ք այդ անձանց ներկայացված մեղադրանքը՝ նրանց մեղսագրվող արարքի տեսանկյունից, վերաբերում է նրանց կարգավիճակից կամ գործունեությունից բխող գործողությանը կամ անգործությանը, թե ոչ։ Ավելին **դրա հետևանքով դատական վերահսկողություն իրականացնող դատարանն այդ անձանց գործառութային անձեռնմխելիության տեսանկյունից պարտավոր չէ ստուգել մեղադրանքի իրավաչափությունն անգամ նրանց նկատմամբ կալանք կիրառելիս, թեև կալանքն առավել ինտենսիվ միջամտություն է նրանց անձնական ազատությանը**։

Պաշտոնաթող Հանրապետության նախագահի գործառնությանն անձեռնմխելիությանը վերաբերող սահմանադրական դրույթների՝ առանձնահատկություններն Օրենսգրքում կենսագործված չեն՝ հանգեցնելով տարբեր դատարանների կողմից դրա տարաբնույթ մեկնաբանության, ինչը, ի թիվս այլնի, նույնպես վկայում է Օրենսգրքում այդ օրենսդրական բացը լրացնելու այլ իրավական հնարավորությունների բացակայության մասին:

Նման իրավիճակը կարող է հանգեցնել նրան, որ գործառնությանն անձեռնմխելիությամբ օժտված անձանց (ներառյալ պաշտոնաթող Հանրապետության նախագահի) նկատմամբ կարող է հարուցվել և իրականացվել քրեական հետապնդում, ինչպես նաև նրանք կարող են ենթարկվել քրեական պատասխանատվության այնպիսի գործողությունների համար, որոնք բխել է նրանց կարգավիճակից կամ գործունեությունից: Այսինքն՝ այդ անձանց կարող է առաջադրվել ոչ օրինական և չհիմնավորված մեղադրանք, որի դեմ նրանք օժտված չեն լինի նաև գործառնությանն անձեռնմխելիությամբ՝ պայմանավորված արդյունավետ դատական պաշտպանության հնարավորությամբ:

Գործառնությանն անձեռնմխելիության առնչությամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու շրջանակներում իրավասու մարմինը պետք է կրի նաև մեղադրանքի իրավաչափությունը հիմնավորելու հավելյալ պարտականություն: Մինչդեռ դրա օրենսդրական չամրագրվածությունը ներագրում է գործառնությանն անձեռնմխելիությամբ օժտված անձանց (ներառյալ պաշտոնաթող Հանրապետության նախագահի) անձնական ազատության, ինչպես նաև արդար դատաքննության հիմնական իրավունքի վրա գործնականում հնարավոր դարձնելով Սահմանադրության տեսանկյունից ոչ իրավաչափ քրեական հետապնդումը նրանց կարգավիճակից կամ գործունեությունից բխող գործողության կամ անգործության համար, ինչը քրեադատավարական օրենքում անձեռնմխելիության հիմքով քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու հիմքերի բացակայության պայմաններում կարող է հանգեցնել այդ անձանց համար նաև արդյունավետ դատական պաշտպանության հիմնական իրավունքի խախտման:

Հաշվի առնելով սույն գործով նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերաբերելի պրակտիկան՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ հիշյալ դատարանը գտնում

է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան ազատագրկյան «օրինակա- նության» առումով հղում է ներպետական օրենսդրությանը և սահ- մանում, որ այն պետք է համապատասխանի ազգային օրենսդրու- թյան նյութաիրավական և **դատավարական կանոններին**: Սա առաջին հերթին պահանջում է, որ **յուրաքանչյուր ձերբակալում կամ կալանք ներպետական օրենսդրությունում իրավական հիմք ունենա, բայց նաև վերաբերում է օրենքի որակին՝ պահանջելով, որ այն** համապատասխանի օրենքի գերակայությանը հայեցակարգ, որն արտացոլված է Կոնվենցիայի բոլոր հոդվածներում (տե՛ս, մասնավորապես՝ Կաֆկարիսն ընդդեմ Կիպրոսի (Kafkaris v. Cyprus (GC)) 21906/04 գործով 12.02.2008 թ. վճիռ, § 116 և Դել Ռիո Պրադան ընդդեմ Իսպանիայի (Del Rio Prada v. Spain (GC)) 42750/09 գործով 21.10.2013 թ. վճիռ, § 125, ընդգծումը՝ Սահմանադրական դատարա- նի):

Այսպիսով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ **Օրենս- գրքի 35-րդ հոդվածում առկա է օրենսդրական բաց՝ բացակայում է այն իրավական հիմքը, որով Սահմանադրության ուժով հատուկ պաշտպանությամբ օժտված պաշտոնատար անձանց նկատմամբ չի իրականացվի քրեական հետապնդում, և քրեական գործի վա- րույթը կկարճվի բոլոր այն դեպքերում, երբ իրավասու մարմինը պատշաճ իրավական ընթացակարգի արդյունքում կպարզի նրանց գործառությանն անձեռնմխելիության առկայությունը: Իսկ գործա- ռությանն անձեռնմխելիության առկայությունը յուրաքանչյուր դեպ- քում պետք է հաստատվի կամ հերքվի քրեական վարույթն իրա- կանացնող իրավասու մարմնի կողմից պարզված, այդ թվում՝ ան- ձին ներկայացված մեղադրանքի հիմքում դրված փաստերի հա- մակցությամբ:**

4.5. Դիմողի կողմից բարձրացվում է նաև Օրենսգրքի 135-րդ հոդ- վածի 2-րդ մասի՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբա- նությամբ, Սահմանադրությանը, հատկապես՝ Սահմանադրության 66-րդ հոդվածին հակասելու հարցը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չէ, քանի որ այն վերաբերում է կալանավորման ընդհանուր նախադրյալներին և չէր կարող պարունակել հատուկ

կարգավորումներ անձեռնմխելիությամբ օժտված անձանց վերաբերյալ, ուստի դրանում չէր կարող նաև առկա լինել օրենսդրական բաց:

Ինչ վերաբերում է վիճարկվող այս դրույթի՝ Սահմանադրության 66-րդ հոդվածին ենթադրյալ հակասությանը, ապա, նախ՝ այն չի կարող միայն դիմողի կամ գործառությանին անձեռնմխելիությամբ օժտված այլ անձանց մասով ինքնին հակասել անմեղության կանխավարկածին: Բացի դրանից, հաշվի առնելով Օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասի ընդհանուր բնույթը և Օրենսգրքի 35-րդ հոդվածում օրենսդրական բացի առկայությունը՝ դատական պրակտիկան չէր կարող ապահովել այդ դրույթի կիրառումը Սահմանադրության ուժով հատուկ պաշտպանությամբ օժտված պաշտոնատար անձանց նկատմամբ՝ նկատի ունենալով նրանցից յուրաքանչյուրի կարգավիճակի առանձնահատկությունները և դրանով պայմանավորված՝ անձեռնմխելիության բովանդակային տարբերությունները, ինչն անհնար էր բացահայտել հստակ ամրագրված և տարբերակված պոզիտիվ-իրավական ձևակերպումների բացակայության պայմաններում:

Իսկ դատարանների կողմից սուկ սովորական օրենքի մեկնաբանության շրջանակներում վիճարկվող դրույթի ենթադրյալ սխալ կիրառման գնահատումը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 170-րդ հոդվածը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63-րդ, 64-րդ և 69-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածը՝ Սահմանադրության ուժով հատուկ պաշտպանությամբ օժտված պաշտոնատար անձանց գործառությանին անձեռնմխելիությունը՝ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների թվում չնախատեսելու մասով, ճանաչել Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին

մասի 4-րդ կետին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածին հակասող և անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

4 սեպտեմբերի 2019 թվականի  
ՍԴՈ-1476



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԴԱՄ**

**Հ Ա Տ ՈՒ Կ Կ Ա Ր Ծ Ի Ք**

**ՌՈՔԵՐՏ ՔՈՉԱՐՑԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 35-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ ԵՎ 135-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ  
ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒՐ ♦ 3(95)2019  
86

Սույն հատուկ կարծիքը ներկայացվում է Սահմանադրական դատարանի 04.09.2019թ. ՄԴՈ-1476 որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) ինչպես պատճառաբանական, այնպես էլ եզրափակիչ մասի 1-ին կետի առնչությամբ:

Կարծում եմ, որ «Ռոբերտ Քոչարյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի և 135-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը ենթակա էր կարճման «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, հետևյալ պատճառաբանություններով.

1. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ «Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հան-

զեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը»: Սահմանադրական այս կարգավորումը գրեթե նույն բովանդակությամբ օրենսդրի կողմից վերատադրվել է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում:

Նույն սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան: Անձը Սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չի հանդիսանում, եթե անհատական դիմումում բացակայում է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայման (17.03.2009թ. ՍԴԱՌ-21 որոշում): Այդպիսի պայմաններից մեկը, ի թիվս այլոց, վիճարկվող նորմատիվ իրավական ակտը կամ դրա դրույթը տվյալ անձի նկատմամբ կիրառված լինելու և նրա համար իրավական հետևանքներ առաջացրած լինելու պայմանն է: Այն դեպքերում, երբ նշված պայմանի բացակայությունը՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտը կամ դրա դրույթը տվյալ անձի նկատմամբ կիրառված չլինելը և նրա համար իրավական հետևանքներ չառաջացնելը, բացահայտվել է անհատական դիմումի հիման վրա գործը վարույթ ընդունելուց հետո, ապա այդ գործի վարույթը ենթակա է կարճման՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժով (այս մասին ավելի մանրամասն տես՝ Սահմանադրական դատարանի 01.01.2015թ. ՍԴՌ-1238 որոշման 5-րդ կետի 3-րդ և 4-րդ պարբերություններում):

Իր մեկ այլ որոշմամբ, Սահմանադրական դատարանը, բացահայտելով «նորմատիվ-իրավական դրույթի կիրառում» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը, իր՝ 2008 թվականի ապրիլի 4-ի ՍԴՌ-747 որոշման մեջ, մասնավորապես, նշել է. «Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «...իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի...», ինչպես նաև «Սահմանադրական դատարանի

մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասում պարունակվող «...և չի կիրառվել» բառակապակցություններում «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետևանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում» (5-րդ կետ, 2-րդ պարբերություն):

Սույն գործով անհատական դիմումը Սահմանադրական դատարան ներկայացնելու համար նախադրյալներ ձևավորած դատական գործով կայացված միջանկյալ դատական ակտերի ուսումնասիրությունից ելնելով՝ նախ պետք է արձանագրել, որ դրանցում իրավունքի կամ օրենսդրության «բաց» եզրույթի վերաբերյալ դատողություններն առհասարակ բացակայում են: Թիվ ԵԴ/0743/06/18 գործով դատական ակտերից ոչ մեկում նման «բացի» մասին չի հիշատակվում՝ անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված որևէ իրավունքի, հավասարապես նաև «գործառութային» անձեռնմխելիության խախտման սպառնալիքի և այն հաղթահարելու անհրաժեշտության իմաստով: Ավելին, նույն գործի շրջանակներում 2018թ. օգոստոսի 13-ի որոշմամբ ՀՀ վերաքննիչ դատարանը, հենց անձեռնմխելիության առկայության փաստը հաստատված համարելով, չի անդրադարձել կալանավորման պայմանների և հիմքերի առկայությանը կամ բացակայությանը և իր էության մեջ հենց այդ հիմքով է բեկանել, փոփոխել առաջին ատյանի դատարանի որոշումը և մերժել կալանքի միջնորդությունը: Փաստորեն, դատարանը չի տեսել որևէ դատավարական խոչընդոտ, այդ թվում՝ «օրենսդրական բաց» անձեռնմխելիության հիմքով կալանքը մերժելու համար. հակառակ պարագայում հենց վերաքննիչ դատարանը պարտավոր կլիներ կասեցնել գործի վարույթը և համապատասխան հարցով դիմել Սահմանադրական դատարան: Ավելորդ չէ նաև ընդգծել, որ որևէ ակտում անդրադարձ չկա 35-րդ հոդվածի «բացին» որպես իր կարգավիճակից բխող գործողությունների համար անձին քրեական



հետապնդման կամ կալանքի հետ կապված հարցերը լուծելու համար խոչընդոտի: Համոզված եմ, որ սա «պատահական» բացթողում չէ, կամ, առավել ևս, որևէ սուբյեկտին ի վնաս այդ «բացն» օգտագործելու միտում չի պարունակում:

Վճռաբեկ դատարանը խնդրո առարկա հարցի վերաբերյալ իր դիրքորոշումները ներկայացնելիս, ի թիվս այլնի, առաջնորդվել է Սահմանադրության 27-րդ և 140-րդ հոդվածների պահանջներով և որպես այդպիսին դատավարական օրենսգրքում որևէ «բաց» չի արձանագրել: Սահմանադրության մեջ համապատասխան նորմերն առկա եղել են, և դրանք անմիջականորեն կիրառման խոչընդոտներ չեն եղել: Այլ կերպ՝ Վճռաբեկ դատարանը չի գնացել իրավունքի մեկնաբանման ու կիրառման ֆորմալիստական ուղիով և անմիջականորեն է կիրառել Սահմանադրության վերաբերելի նորմերը, որպիսի իրավասությամբ օժտված է եղել թե՛ Սահմանադրությամբ, թե՛ դատավարական օրենսգրքով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածը չի կիրառվել և հետևանքներ չի առաջացրել դիմողի համար, ուստի վերոհիշյալ դատական ակտերում «իրավունքի բացի» վերաբերյալ դատողություններ օբյեկտիվորեն չէին կարող լինել: Դատարանները որպես քրեական հետապնդումը բացառող հիմք քննարկման առարկա են դարձրել Սահմանադրության 140-րդ հոդվածը և մեկնաբանել ու կիրառել են այդ հոդվածը, հետևաբար դիմողի համար համապատասխան հետևանքներ առաջացրել է ոչ թե քրեական դատավարության 35-րդ, այլ Սահմանադրության 140-րդ հոդվածը: Կոնկրետ սույն գործի շրջանակներում վիճարկվող նորմատիվ իրավական ակտը կամ դրա դրույթը կամ դրանում առկա բացը դիմողի համար կառաջացներ իրավական հետևանքներ միայն այն դեպքում, եթե այդ բացով պայմանավորված իրավակիրառ մարմինը հաշվի չառներ գործառությանն անձեռնմխելիությունը՝ պատճառաբանելով, որ այն 35-րդ հոդվածում նախատեսված չէ, այսինքն՝ եթե դատարանը պնդեր, որ անձի նկատմամբ քրեական հետապնդումը չի կարող դադարեցվել գործառությանն անձեռնմխելիություն նախատեսված չլինելու պատճառով:

Մինչդեռ, վիճարկվող դրույթում գործառությանն անձեռնմխելիություն նախատեսված լինել-չլինելը որևէ նշանակություն չի ունեցել դիմողի համար իրավական հետևանքներ առաջացնելու

մասով, իսկ իրավական հետևանքներ առաջացնելը պարտադիր պայման է անհատական դիմումի հիման վրա գործը Սահմանադրական դատարանում քննության ընդունելու համար: Կրկնում եմ, որ գործառության անձեռնմխելիությանը դատարանն անդրադարձել է՝ անմիջականորեն կիրառելով Սահմանադրության 27-րդ և 140-րդ հոդվածների դրույթները: Բացի դրանից, հենց Որոշման մեջ արձանագրվել է, որ «Սահմանադրության մեկնաբանման եղանակով դատարանները փորձել են լրացնել քրեադատավարական օրենքի բացը, ընդ որում՝ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում, ինչը վկայում է, որ նրանք ընդունել և կարևորել են անձեռնմխելիության կանխորոշիչ նշանակությունը մեղադրանքի, հետևապես՝ նաև կալանքի իրավաչափության համար» (4.2-րդ կետի 6-րդ պարբերություն):

2. Բացի վերոնշյալ հիմքից անհրաժեշտ է քննարկել նաև այն հարցը, թե արդյոք վիճարկվող դրույթում առկա «օրենսդրական բացն» առաջացրել է կամ կարող էր առաջացնել սահմանադրականության խնդիր՝ մարդու հիմնական իրավունքների պաշտպանության առումով, կամ արդյոք այդ բացը հնարավոր չէր հաղթահարել և հաղթահարված չի եղել իրավակիրառ մարմինների, սույն դեպքում՝ դատարանների կողմից իրավունքի այլ աղբյուրներում առկա նորմերի, ներառյալ՝ Սահմանադրության համապատասխան դրույթների անմիջական կիրառման միջոցով, այնպես, որ մարդու հիմնական իրավունքների պաշտպանությունը երաշխավորված լինի: Այլ կերպ ասած՝ «իրավունքի բացի» վերաբերյալ սույն անհատական դիմումը բավարարել է արդյոք Սահմանադրական դատարանում դրա հիման վրա գործը քննության ընդունելու համար անհրաժեշտ և պարտադիր այն նախապայմանները, որոնց բովանդակության վերաբերյալ իր իրավական դիրքորոշումներն է արտահայտել Սահմանադրական դատարանը:

Այսպես, «իրավունքի բաց» կամ «օրենսդրական բաց» իրավական երևույթների վերաբերյալ Սահմանադրական դատարանը հետևողականորեն ձևավորել և զարգացրել է բավական որոշակի, կայուն և համապարփակ դիրքորոշումներ: Ստորև մեջբերվում են դրանցից մի քանիսը.

- «6. .... Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք» (ՄԴՈ-864, 5 փետրվարի, 2010թ.):

- «7. Օրենսդրական բացի սահմանադրականության հարց քննելիս սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե տվյալ օրենսդրական բացը հանդիսանում է իրավակարգավորման թերությունը, թե՛ իրավաստեղծ մարմինը նման իրավակարգավորում սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը...»

Զարգացնելով իր վերոհիշյալ (2010թ. փետրվարի 5-ի ՄԴՈ-864 որոշման մեջ արտահայտված (փակագծի մեջբերումը՝ հեղինակի) իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը» (ՄԴՈ-914, 14 սեպտեմբերի, 2010թ.):

- «Իր մի շարք, մասնավորապես՝ ՄԴՈ-864 և ՄԴՈ-914 որոշումներում իրավունքի բացի սահմանադրականության հարցը քննության առնելու իրավասության վերաբերյալ սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ իրավակարգավորման բացի նորմատիվ իրավական լուծումը հանդիսանում է օրենսդիր իշխանության իրավասությունը: Մասնավորապես, համաձայն հիշյալ որոշումների՝ «Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է» (ՄԴՈ-933, 25 հունվարի, 2011թ.):

- «6. ... Նման պայմաններում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում քննարկել օրենսդրական բացի և իրավական եզրույթների սահմանումների օրենսդրական ամրագրման բացակայության հարաբերակցությունը: Նշվածի կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանը նպատակահարմար է համարում արձանագրել, որ օրենսդրական բացը չի կարող մեխանիկորեն նույնացվել սոսկ այս կամ այն եզրույթի օրենսդրորեն ամրագրված սահմանման բացակայության հետ: Օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքությունն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը: ....

ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք, մասնավորապես՝ ՄԴՈ-864, ՄԴՈ-914 և ՄԴՈ-933 որոշումներում իրավունքի բացի սահմանադրականության հարցը քննության առնելու իրավասության վերաբերյալ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ իրավակարգավորման բացի նորմատիվ իրավական լուծումը հանդիսանում է օրենսդիր իշխանության իրավասությունը: Մասնավորապես, համաձայն հիշյալ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների՝ իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի

իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարել արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա հիմնախնդիրը պայմանավորված է ոչ թե վեճի առարկա նորմի տարակերպ մեկնաբանություններով, այլ պարզապես օրենսդրի կողմից օրենքում կիրառված հասկացությունները հստակեցված չեն: Առկա վիճակն իրավակարգավորման բաց է, որը պետք է հաղթահարվի ՀՀ Ազգային ժողովի իրավասության շրջանակներում» (ՄԴՈ-1143, 8 ապրիլի, 2014թ.):

- «ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2014 թվականի ապրիլի 8-ի ՄԴՈ-1143 որոշմամբ միմյանցից հստակ սահմանագատել է օրենսդրական կարգավորումների ոչ լիարժեք լինելու այն դեպքերը, որոնք կարող են քննվել սահմանադրական դատարանի կողմից, այն դեպքերից, որոնց լուծումը վերապահված է բացառապես օրենսդիր մարմնին:

Նշված որոշման 6-րդ կետում ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ սկզբունքային իրավական դիրքորոշումները, որ՝

ա) «...Օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը:»,

բ) «...իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում ... բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է» (ՄԴՈ-1154, 10 հունիսի, 2014թ.):

- «4.3. ... Սահմանադրական դատարանն օրենսդրական բացի սահմանադրականության հարցին անդրադարձել է իր մի շարք մասնավորապես՝ ՄԴՈ-864, ՄԴՈ-914, ՄԴՈ-917, ՄԴՈ-922, ՄԴՈ-933, ՄԴՈ-1020, ՄԴՈ-1056, ՄԴՈ-1143, ՄԴՈ-1154, ՄԴՈ-1255 որոշումներում: Սույն գործի շրջանակներում վերահաստատելով և զարգացնելով հիշյալ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա չէ օրենսդրական բաց բույր այն դեպքերում, երբ ենթադրյալ օրենսդրական բացին վերաբերող հարցերն ուղղակիորեն կարգավորվում են Սահմանադրությամբ» (ՄԴՈ-1434, 6 նոյեմբերի, 2018թ.):

Վերը նշված իրավական դիրքորոշումներն իրենց ամբողջության մեջ հստակ և կանխատեսելի սահմաններ են գծում «իրավունքի բացի» կամ «օրենքի բացի» նկատմամբ սահմանադրական վերահսկողության թույլատրելի շրջանակի համար, սահմանում են այդ բացերի սահմանադրականության ստուգման վերաբերյալ դիմումների թույլատրելիության որոշակի չափանիշներ:

Այսպիսով, ըստ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների՝ իրավունքի բացն իրավական կարգավորման ոլորտում գտնվող փաստական հանգամանքների վերաբերյալ կոնկրետ նորմատիվ պատվիրանի բացակայությունն է, ինչպես նաև իրավական կարգավորման անորոշությունը: Որևէ պարագայում չի կարող խոսք լինել օրենսդրական բացի մասին, երբ ենթադրյալ օրենսդրական բացին վերաբերող հարցերն ուղղակիորեն կարգավորվում են Սահմանադրությամբ: Այլ կերպ «բացի» մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ համապատասխան նորմատիվ պատվիրանը բացակայում է թե՛ սովորական օրենքում, թե՛ Սահմանադրության մեջ: Ընդ որում, այս հանգամանքը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է Սահմանադրական դատարանի կողմից «բացի» սահմանադրականության հարցը քննության առնելու և, առավել ևս, այդ մասով որևէ օրենքի դրույթ Սահմանադրությանը հակասող ճանաչելու համար: Վերոգրյալից բացի, օրենքի այս կամ այն «բացի» սահմանադրականության հարցը Սահմանադրական դատարանում քննության առարկա կարող է լինել, եթե՝

- վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք,

- առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը,

- իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը,

- օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ, կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա,

- բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում չէ:

Բացի վերոգրյալից, յուրաքանչյուր դեպքում «օրենսդրական բացի սահմանադրականության հարց քննելիս Սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե տվյալ օրենսդրական բացը հանդիսանում է իրավակարգավորման թերությունը, թե իրավաստեղծ մարմինը նման իրավակարգավորում սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը...»:

Վերոգրյալ դիրքորոշումները բխում են նաև այն տրամաբանությունից, որ «բացը» հակասահմանադրական ճանաչելը պետք է դիտարկվի որպես բացառիկ միջոց (քանի որ ամեն դեպքում նորմը հակասահմանադրական ճանաչելը անվերապահորեն որոշակի դժվարություններ կստեղծի իրավակիրառ գործունեությունում) մարդու իրավունքների պաշտպանության ընթացակարգերի համակարգում, կիրառվի միայն այն դեպքում, երբ այդ «բացը» հնարավոր չէ հաղթահարել, մասնավորապես, դատարանների կողմից Սահմանադրական դատարանի վերոհիշյալ և այլ դիրքորոշումների շրջանակներում, սահմանադրական նորմերն անմիջականորեն կիրառելու, այդ թվում՝ դրանց բովանդակությունը սահմանադրական արժեքանության (аксиология) և սկզբունքների, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների և նորմերի հետ դրանց նորմատիվ կապի մեջ բացահայտելու միջոցով (այս մասին ավելի մանրամասն տես Бондарь Н. "Правовые пробелы как

категория конституционно-правовой дефектологии: методология исследования и судебная практика преодоления"// "Альманах", издательство "Нжар", Ереван 2016 г., էջ 99):

Վճռաբեկ դատարանն իր՝ 2018թ. նոյեմբերի 15-ի որոշման մեջ վճռաբեկության կարգով վերաքննիչ դատարանի 2018թ. օգոստոսի 13-ի որոշման ստուգման շրջանակներում, վերլուծելով Սահմանադրության և այլ օրենքների վերաբերելի հոդվածները, տվել է մի շարք դիրքորոշումներ, որոնք նշանակություն ունեն ոչ միայն օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու տեսանկյունից, այլ նաև անուղղակի էական ազդեցություն պետք է ունենային սույն գործով դիմումի ընդունելիության և ըստ էության քննության հարցերի լուծման համար՝ Սահմանադրական դատարանի վերոհիշյալ և հետագայում ներկայացվելիք դիրքորոշումները հաշվի առնելով:

Կարծիքի այս մասում գրեթե ուղղակի մեջբերում եմ Վճռաբեկ դատարանի 15.11.2018թ. որոշումից առանձին հատվածներ: Որոշումն ամբողջությամբ չի մեջբերվում զուտ գործնական նկատառումով՝ առանց չմեջբերվող հատվածների նշանակությունը մեջբերվածների համեմատ նսեմացնելու մտադրության: Պարզապես կարծում եմ, որ մեջբերված հատվածներն ինքնին բավարար են սույն կարծիքով ներկայացվող դիրքորոշումները հիմնավորելու համար: Նախ ուշադրության է արժանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու Վճռաբեկ դատարանի հիմնավորումները. «11. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու պայմաններից մեկի՝ Հանրապետության նախագահի անձեռնմխելիության հատկանիշի մեկնաբանման և դրա ու կալանավորման մյուս պայմանի՝ հիմնավոր կասկածի հարաբերակցության կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում սույն գործով արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկայի ճիշտ ձևավորման համար» (էջ 23):

Բավականին խոսուն են նաև որոշման մասերի վերնագրերը՝ «I. Հանրապետության նախագահի անձեռնմխելիության ինստիտուտը և դրա հաղթահարման հնարավորությունը.» (էջ 23) և «II. Կալանավորման պայմաններից հիմնավոր կասկածի և Նախագահի անձեռնմխելիության հատկանիշի հարաբերակցությունը.» (էջ 36):



Վճռաբեկ դատարանը, հետևողականորեն վերլուծելով Հանրապետության նախագահի կարգավիճակի, գործառույթների, լիազորությունների, պետական իշխանության մարմինների համակարգում նրա դերի վերաբերյալ սահմանադրական դրույթները (ընդ որում համեմատելով թե՛ 2005թ., թե՛ 2015թ. Սահմանադրությունները), նշել է, որ «15. ... Սահմանադրությամբ երաշխավորված անձեռնմխելիության ինստիտուտը Նախագահի լիազորություններն ազատորեն կենսագործելու, վերջինիս անխոչընդոտ գործունեությունն ապահովելու, նրան անհիմն քրեական կամ վարչական հետապնդումներից պաշտպանելու հիմնարար իրավական միջոց է, ուստի պատահական չէ, որ նախագահն անձեռնմխելիությամբ է օժտված ոչ միայն իր լիազորությունների իրականացման ժամանակահատվածում, այլև դրանց ավարտից հետո՝ կարգավիճակից բխող գործողությունների համար» (կետ 15.1, էջ 28): «15.2. Պաշտոնաթող Նախագահի անձեռնմխելիության երաշխիքը բովանդակող սահմանադրական նորմերից բխում է, որ Նախագահի լիազորությունների ավարտից հետո վերջինս չի կարող հետապնդվել և ենթարկվել պատասխանատվության իր կարգավիճակից բխող գործողությունների համար: Անձեռնմխելիության սույն տեսակի հիմքում (գործառութային անձեռնմխելիություն) ընկած է ոչ թե անձի՝ ժամանակին զբաղեցրած պաշտոնը, այլ այն գործողությունների բնույթը, որոնք նա իրականացրել է իր պաշտոնավարման ընթացքում (այն է՝ կարգավիճակից բխող գործողություններ):

Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ Նախագահի կարգավիճակ ստելով՝ պետք է հասկանալ նրա ունեցած գործառնական դերը, լիազորությունների՝ իրավունքների ու պարտականությունների ամբողջությունը» (էջ 30):

Հետագայում նույն գաղափարը շարունակում է զարգանալ և մասնավորեցվել որոշման մեջ. «15.2. ... Մինևույն ժամանակ, հարկ է նկատել, որ Նախագահը Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունները Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան իրացնելու դեպքում որևէ պարագայում չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել, ինչն էլ երաշխավորվում է Նախագահի անձեռնմխելիության ինստիտուտի միջոցով:

16. Այսպիսով, ՀՀ Սահմանադրությունը Նախագահին վերապահել է իր գործառույթներից բխող մի շարք լիազորություններ, որոնց կենսագործումն առանձին դեպքերում նաև հայեցողական

բնույթ է կրում, ուստի Նախագահը չի կարող պատասխանատվություն կրել իր կողմից իրականացվող քաղաքականության, իր լիազորությունների շրջանակներում ընդունվող ակտերի և իրականացվող գործողությունների համար: Հանրապետության նախագահը պետք է երաշխավորված լինի ինչպես իր կողմից վարվող քաղաքականության, այնպես էլ իր լիազորությունների մեջ մտնող ցանկացած, այդ թվում՝ հայեցողական լիազորությունների շրջանակում ընդունված որոշման համար հետագայում պատասխանատվության ենթարկվելուց: Վերոնշյալը Նախագահի անձեռնմխելիության ինստիտուտի հիմնական բովանդակությունն է կազմում և կարևոր երաշխիք է Նախագահի կողմից իրեն սահմանադրորեն վերապահված լիազորություններն ազատորեն, առանց որևէ ազդեցության իրականացնելու և դրանց համար թե՛ պաշտոնավարման ընթացքում, թե՛ դրանից հետո հետապնդումների չենթարկվելու համար:

Պայմանավորված նաև վերոնշյալ տրամաբանությամբ՝ ՀՀ Սահմանադրությունը պաշտոնաթող Նախագահի դեպքում նրա գործառնության չենթարկվելու հատկանշանքները չենթարկվելու ընթացակարգ չի ամրագրել: Այլ կերպ վերջինս իր կարգավիճակից բխող գործողությունների կատարման համար օժտված է քրեական հետապնդման և պատասխանատվության ենթարկվելու անձեռնմխելիությամբ» (էջ 30-31):

Գործառնության անձեռնմխելիության ծավալների և բովանդակության հետ կապված դիրքորոշումներից հետո, որոշման մեջ նշվում է. «16.1. Ինչ վերաբերում է Նախագահի կարգավիճակի հետ չկապված գործողություններին, ապա պաշտոնավարման ավարտից հետո Նախագահը դրանց համար չի օգտվում անձեռնմխելիության երաշխիքից և ենթարկվում է պատասխանատվության ընդհանուր հիմունքներով» (էջ 31):

Ընդհանրացնելով Հանրապետության նախագահի գործառնության անձեռնմխելիության վերաբերյալ նույն որոշման 15-16.1-րդ կետերում կատարված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է. «17. ... անձեռնմխելիության կիրառումը չի կարող դիտվել որպես մեխանիկական գործընթաց: Պարզելու համար արդյոք կատարված գործողությունները բխել են Նախագահի կարգավիճակից, թե ոչ, չպետք է առաջնորդվել ձևական մոտեցմամբ և հիմք ընդունել միայն այն հանգամանքը, որ ենթադրյալ արարքը կատարելու ժամանակ անձը հանդես է եկել որպես նախագահ» (էջ 32):

Որոշման հաջորդ հատվածներում Վճռաբեկ դատարանն անդրադառնում է առաջադրված երկրորդ իրավական հարցին. «20. ՀՀ պաշտոնաթող նախագահ Ռ. Քոչարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն առերևույթ կատարված լինելու հիմնավոր կասկածը քննության առարկա չդարձնելով՝ Վերաքննիչ դատարանը կարող էր արդյոք վերջինիս անձեռնմխելիության հարցի կապակցությամբ հանգել հիմնավորված հետևության» (էջ 36):

Այնուհետև, նույն որոշման մեջ շարադրված իրավանորմերի և մեջբերված իրավական դիրքորոշումների հիման վրա անդրադառնալով պաշտոնաթող Նախագահի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հարցին և զարգացնելով իր նախորդ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը Հանրապետության նախագահի անձեռնմխելիության ինստիտուտը կանոնակարգող սահմանադրական նորմերի և դրանց առնչությամբ նույն որոշման 15-17-րդ կետերում կատարված վերլուծության լույսի ներքո արձանագրել է, որ «21.1. ... պաշտոնաթող Նախագահի նկատմամբ անձեռնմխելիության երաշխիքի տարածումը պայմանավորվում է նրա կատարած գործողությունների բնույթով, այն է՝ արդյոք դրանք բխել են վերջինիս կարգավիճակից, թե ոչ: Այսինքն՝ պաշտոնաթող Նախագահի նկատմամբ գործառութային անձեռնմխելիության կիրառումը մեխանիկական գործընթաց չէ. անձեռնմխելիության սույն տեսակը կիրառելու կամ չկիրառելու հարցի պարզումը սերտորեն փոխկապված է անձի կողմից ենթադրյալ հանցավոր արարքը կատարելու հիմնավոր կասկածի, մասնավորապես՝ անձի և մեղսագրվող արարքի միջև օբյեկտիվ կապի առկայության գնահատման հետ: Այլ խոսքով՝ գործառութային անձեռնմխելիության հարցի լուծումն անմիջականորեն ենթադրում է անձին մեղսագրվող գործողությունների հիմնավոր կասկածի տեսանկյունից գնահատում: Հետևաբար, հիմնավոր կասկածը գնահատման չենթարկելու պարագայում (այն, թե արդյոք անձն առնչություն ունի իրեն մեղսագրվող ենթադրյալ հանցավոր արարքի կատարմանը և արդյոք դեպքը, իրադարձությունը, որի կատարման մեջ անձը մեղադրվում է, առերևույթ համընկնում է քրեական օրենսգրքով սահմանված հանցակազմի հատկանիշներին) դատարանն իրեն փաստացի գրկում է պաշտոնաթող

Նախագահի անձեռնմխելիության, մասնավորապես՝ վերջինիս կողմից առերևույթ կատարած գործողությունները նրա կարգավիճակից բխելու կամ չբխելու հարցի կապակցությամբ հիմնավորված հետևության հանգելու հնարավորությունից» (էջ 40):

Վճռաբեկ դատարանի որոշման գրեթե ողջ պատճառաբանական մասը՝ իր եզրահանգումներով ու դիրքորոշումներով, գործառութային անձեռնմխելիությամբ օժտված անձի նկատմամբ քրեական վարույթի իրականացման ընդհանուր ընթացակարգի առկայության ապացույցն է՝ իր գործնական կիրառության մեջ:

Ի տարբերություն անձնական անձեռնմխելիության, որն անհրաժեշտ է հաղթահարել, օրինակ՝ հատուկ ընթացակարգերի միջոցով, հետո միայն քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծել, քանզի եթե նույնիսկ անձը հանցագործություն է կատարել, ապա անձնական անձեռնմխելիության ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության, քանի դեռ անձնական անձեռնմխելիությունը չի հաղթահարվել, գործառնական անձեռնմխելիությունը ենթադրում է գործողության ըստ էության գնահատում՝ պարզելու դրա՝ անձի կարգավիճակից բխել-չբխելու, իսկ հետո, ըստ դրա արդյունքների՝ որոշելու քրեական հետապնդումը դադարեցնելու կամ չդադարեցնելու հարցը: Հակառակ պարագայում տեղի է ունենում անձնական անձեռնմխելիության և գործառութային անձեռնմխելիության ինստիտուտների նույնականացում:

3. Քրեադատավարական օրենսգրքում, այո, ուղղակիորեն ամրագրված չէ պաշտոնատար անձի կարգավիճակից բխող գործողությունների համար կամ այլ կերպ՝ գործառութային անձեռնմխելիության հիմքով քրեական հետապնդումն արգելող նորմ: Մակայն, համապատասխան կարգավորումներն առկա եղել են իրավական համակարգի մաս կազմող իրավունքի այլ աղբյուրներում, և դատարանները, այդ թվում նաև՝ Վճռաբեկ դատարանը իրավասու էին մեկնաբանել և կիրառել դրանք, մասնավորապես՝ Սահմանադրության վերաբերելի դրույթները:

Այսպես, Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան»:

Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան»:

25.01.2019թ. ՄԴԱՌ-7 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշել է՝

«4.2. Այն հանգամանքը, որ սահմանադրական արդարադատության ոլորտը, Սահմանադրության 171-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, դուրս է Վճռաբեկ դատարանի գործառնությունների շրջանակից, չի նշանակում, որ Վճռաբեկ դատարանը չունի Սահմանադրությունը մեկնաբանելու և կիրառելու լիազորություն:

4.3. Սահմանադրության 164-րդ հոդվածի համաձայն արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Դատավորի և, հետևապես՝ դատարանի անկախության առանցքային կանոնն ամրագրող այս դրույթը, ի թիվս այլնի, ամրագրում է նաև Սահմանադրությանը համապատասխան գործելու դատավորի պարտադիր լիազորությունը, ինչը նշանակում է, որ Սահմանադրությունը մեկնաբանելու և կիրառելու լիազորություն Սահմանադրությամբ վերապահված է յուրաքանչյուր դատարանի, այդ թվում՝ Վճռաբեկ դատարանին: Դատարանների կողմից սահմանադրական նորմերի ճիշտ և միատեսակ ընկալմամբ, մեկնաբանմամբ և կիրառմամբ է պայմանավորվում նաև սահմանադրականության հաստատումը:

....

4.7. Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի ուժով մարդու հատկապես հիմնական իրավունքները և ազատություններն են անմիջականորեն ենթակա դատական պաշտպանության, հետևապես՝ ոչ միայն Վճռաբեկ, այլև բոլոր դատարաններն են պարտավոր առաջին հերթին պաշտպանելու մարդու հենց հիմնական իրավունքները և ազատությունները, իսկ դա հնարավոր չէ առանց այդ իրավունքները և ազատություններն ամրագրող Սահմանադրության դրույթների մեկնաբանության և կիրառման»:

Ասվածից կարող է թվալ, որ, մասնավորապես, դատարանները Սահմանադրության մեկնաբանման և կիրառման լիազորությամբ օժտված են բացառապես այն դեպքերում, երբ խոսվում է մարդու հիմնական իրավունքներն ամրագրող դրույթների մասին: Հետևաբար, նրանք չեն կարող անմիջականորեն մեկնաբանել և կիրառել Սահմանադրության 140-րդ հոդվածը, քանի որ այն հիմնական իրավունք չի ամրագրում: Մի պահ ընդունենք, որ Վճռաբեկ դատարանն անմիջականորեն չէր կարող մեկնաբանել և կիրառել Սահմանադրության 140-րդ հոդվածը: Այդուհանդերձ, նույնիսկ այդ տեսակետին հարելու պարագայում ընդունում ենք, որ Վճռաբեկ դատարանը իրավասու էր մեկնաբանել և կիրառել Սահմանադրության 27-րդ հոդվածը, որպես մարդու հիմնական իրավունք, և իրավասու էր դա անել հենց 140-րդ հոդվածի ենթատեքստում: Չպետք է մոռանանք այն կարևոր հանգամանքը, որ հենց մարդու հիմնական իրավունքների պաշտպանության նկատառումներով է Սահմանադրական դատարանը վարույթ ընդունել քննարկվող անհատական դիմումը: Այս հարցն առհասարակ վճռորոշ նշանակություն ունի ոչ միայն քննարկվող գործի, այլև ցանկացած այլ անհատական դիմումի քննության հարցը լուծելիս (Սահմանադրության 169-րդ հոդված, 1-ին մաս, 8-րդ կետ):

Այսպես, Որոշման 3-րդ կետի 5-րդ պարբերության մեջ հատուկ նշվել է, որ «... Սահմանադրական դատարանը քննում և լուծում է ոչ թե պաշտոնաթող Հանրապետության նախագահի անձեռնմխելիության սահմանադրական երաշխիքների ենթադրյալ բովանդակային խախտման տեսանկյունից, ինչը դիմումի շրջանակներում և ներկա փուլում՝ հաշվի առնելով անհատական դիմումի թույլատրելիության նախադրյալները, հնարավոր չէ, այլ Սահմանադրության ուժով անձեռնմխելիությամբ օժտված պաշտոնատար անձանց, այդ թվում՝ պաշտոնաթող Հանրապետության նախագահի գործառութային անձեռնմխելիությամբ պայմանավորված՝ մեղադրանքի իրավաչափության ապահովման տեսանկյունից՝ հաշվի առնելով որևէ պաշտոնատար անձի գործառութային անձեռնմխելիության սահմանադրական երաշխիքների ուղղակի ներազդեցությունը նրա՝ որպես մասնավոր անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված վերոգրյալ հիմնական իրավունքների և ազատության վրա ...»:

Հետևաբար, նույնիսկ այդ մոտեցմամբ առաջնորդվելու պարագայում պետք է արձանագրենք, որ Որոշման մեջբերված մասի տրամաբանությամբ ևս Վճռաբեկ դատարանն օժտված էր Հանրապետության պաշտոնաթող նախագահի գործառնության անձեռնմխելիության հետ կապված խնդիրը լուծել նույն հիմնական իրավունքների և, մասնավորապես, 27-րդ հոդվածի անմիջականորեն կիրառման միջոցով, քրեադատավարական մնացած գործիքների համալիր գործարկմամբ:

Սույն կարծիքի շրջանակներում ձեռնպահ կմնամ Սահմանադրության 27-րդ հոդվածը բովանդակային վերլուծության ենթարկելուց նկատի ունենալով դրա վերաբերյալ Սահմանադրական դատարանի դիրքորոշումների, ինչպես նաև նույն հոդվածով կանոնակարգված հարաբերությունների վերաբերյալ ՄԻԵԴ նախադեպային որոշումների հարուստ պաշարի առկայությունը: Պարզապես նշեմ, որ հենց այդ լավագույն և հարուստ պաշարի առկայությունը միանգամայն բավարար էր Սահմանադրության 140-րդ հոդվածով նախատեսված երաշխիքներից օգտվող անձի իրավունքներն ապահովելու համար:

Անդրադառնալով Որոշման 4.2-րդ կետի 7-րդ պարբերության մեջ տեղ գտած դիրքորոշմանը՝ ըստ որի՝ «Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատարանները սովորական օրենքում ամրագրված որևէ հիմք չեն ունեցել կիրառելու սահմանադրական անձեռնմխելիության քրեադատավարական հետևանքները, քանի որ Օրենսգիրքն իրենց նման լիազորությամբ չի օժտել:», կարծում եմ, որ այս դիրքորոշումը ևս էականորեն տարբերվում է Սահմանադրական դատարանի ձևավորած կայուն և մասնակի սույն կարծիքում մեջբերված և ստորև ներկայացվելիք դիրքորոշումներից:

Այսպես, արդեն հիշատակված՝ «Հայաստանի Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 8-րդ մասերի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ Սահմանադրական դատարանի դատավոր չընտրվելու հետևանքներին վերաբերող կանոնակարգումների բացակայության մասով, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով (06.11.2018թ., ՄԴՈ-1434), որն ի դեպ չէր քննարկվում հիմ-

նական իրավունքների պաշտպանության տեսակետից, Սահմանադրական դատարանը նշել էր, որ «4.3. ... Սահմանադրական դատարանն օրենսդրական բացի սահմանադրականության հարցին անդրադարձել է իր մի շարք, մասնավորապես՝ ՄԴՈ-864, ՄԴՈ-914, ՄԴՈ-917, ՄԴՈ-922, ՄԴՈ-933, ՄԴՈ-1020, ՄԴՈ-1056, ՄԴՈ-1143, ՄԴՈ-1154, ՄԴՈ-1255 որոշումներում: Սույն գործի շրջանակներում վերահաստատելով և զարգացնելով հիշյալ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա չէ օրենսդրական բաց բոլոր այն դեպքերում, երբ ենթադրյալ օրենսդրական բացին վերաբերող հարցերն ուղղակիորեն կարգավորվում են Սահմանադրությամբ»: Բնական է, որ այս դիրքորոշման մեջ հստակ ուրվագծված ցուցումն ուղղված է բոլոր իրավակիրառող մարմիններին, ներառյալ դատարաններին, և իմաստն այն է, որ որևէ վեճ կամ հարց լուծելիս համապատասխան պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք հղում չկատարեն «օրենսդրական բացին» բոլոր այն դեպքերում, երբ ճյուղային օրենսդրության մեջ որևէ փաստական հանգամանքի վերաբերյալ իրավական պատվիրանը բացակայում է, սակայն այն առկա է Սահմանադրության մեջ: Եվ եթե հաշվի առնենք, որ վերոհիշյալ գործը մարդու հիմնական իրավունքների վերաբերյալ չէր, ապա պետք է արձանագրենք, որ դա վերաբերում է Սահմանադրության բոլոր նորմերին այնքանով, որքանով դրանք կիրառելի են կոնկրետ հարց կամ վեճ լուծելու համար: Ուստի այդ մարմինները ոչ միայն իրավունք ունեն, այլև պարտավոր են կիրառել Սահմանադրության մեջ ամրագրված նորմը, եթե իհարկե համապատասխան կարգավորումը «բացակայում» է այլ նորմատիվ իրավական ակտերում:

Ասվածով որևէ կերպ փորձ չի արվում նսեմացնել Սահմանադրության կիրառման և մեկնաբանման գործում Սահմանադրական դատարանի դերը. որպես Սահմանադրության գերակայության ապահովման միջոց՝ Սահմանադրության վերջնական և համապարտադիր մեկնաբանությունն ու կիրառումը Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է: Այդուհանդերձ, «4.10. ... սահմանադրականության ստուգումը բոլոր դատարանների պարտականությունն է:

....

6. Դատարանների, այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի, կամ հանրային իշխանության այլ մարմինների լիազորությունը՝ մեկնաբանելու Սահմանադրությունը, ապահովելու դրա կիրառությունը, չի



խաթարում Սահմանադրական դատարանի լիազորության բացառիկությունը՝ որպես Սահմանադրության գերակայությունն ապահովող մարմնի՝ վերջնական լուծում տալու Սահմանադրության մեկնաբանության հարցերին, որն ունի համապարտադիր բնույթ հանրային իշխանության բոլոր մարմինների, ֆիզիկական և իրավաբանական անձանց համար» (ՄԴԱՈ-7):

Բացի դրանից, քննարկվող կոնկրետ գործով համապատասխան հիմքն ուղղակիորեն ամրագրված է քրեական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասում, ըստ որի «1. Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական գործերով վարույթի կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենսգրքով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով»:

Չեմ կարող համաձայնել նաև Որոշման 4.4-րդ կետի չորրորդ պարբերության մեջ (էջ 20) արտահայտված այն դիրքորոշման հետ, ըստ որի «Պաշտոնաթող Հանրապետության նախագահի գործառույթային անձեռնմխելիությանը վերաբերող սահմանադրական դրույթների առանձնահատկություններն Օրենսգրքում կենսագործված չեն՝ հանգեցնելով տարբեր դատարանների կողմից դրա տարբերությամբ մեկնաբանության, ինչը, ի թիվս այլնի, նույնպես վկայում է Օրենսգրքում այդ օրենսդրական բացը լրացնելու այլ իրավական հնարավորությունների բացակայության մասին», քանի որ այս դեպքում գործ ունենք միևնույն գործի, այլ ոչ թե տարբեր գործերի շրջանակներում կայացված դատական ակտերի հետ («ՀՀ Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 29, մաս 3), իսկ նույն գործի շրջանակներում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի մեկնաբանությունից տարբերվող վերաքննիչ ատյանի դատարանի մեկնաբանությունը չի կարող որակվել որպես «տարբերությամբ» հենց միայն Վճռաբեկ դատարանի տվյալ գործով որոշման առկայության ու դրա՝ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար նշանակություն ունենալու ուժով:

4. Այսպիսով, վերոգրյալի հիման վրա կարծում եմ, որ «Ռոբերտ Քոչարյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի և 135-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանու-

թյան հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը ենթակա էր կարճման «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, քանի որ վիճարկվող Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածը դիմողի նկատմամբ չի կիրառվել և իրավական հետևանքներ չի առաջացրել:

Բացի դրանից, առկա է գործի վարույթը կարճելու «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը ևս, քանի որ «իրավունքի բացի» վերաբերյալ անհատական դիմումը չի բավարարել Սահմանադրական դատարանում դրա ընդունելիության համար անհրաժեշտ հետևյալ նախապայմանները

- օրենսդրության մեջ առկա են եղել այդ «բացը» լրացնելու այլ իրավական երաշխիքներ, և ձևավորված չէ հակասական իրավակիրառական պրակտիկա (տարաբնույթ մեկնաբանություններ),
- առկա օրենսդրական «բացը» չի խոչընդոտել անձի այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը,
- իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով չի խաթարվել օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐ

Ա.ԴԻԼԱՆՅԱՆ

13 սեպտեմբերի 2019թ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԴԱՄ**

**Հ Ա Տ Ո Ւ Կ Կ Ա Ր Ծ Ի Ք**

**«ՌՈՒԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 35-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ ԵՎ 135-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ  
ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 04.09.2019Թ. ՍԴՈ-1476  
ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ կետով՝ ներկայացնում եմ հատուկ կարծիք:

Վերը նշված գործով Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1476 որոշմամբ որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածը՝ Սահմանադրության ուժով հատուկ պաշտպանությամբ օժտված պաշտոնատար անձանց գործառույթային անձեռնմխելիությունը՝ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների թվում չնախատեսելու մասով, ճանաչել Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածին հակասող և անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը»:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3(95)/2019

Ա. Քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 135-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականության առնչությամբ չունեն ոչ մի առարկություն, քանի որ այն վերաբերում է կալանավորման ընդհանուր նախադրյալներին և չէր կարող պարունակել հատուկ կարգավորումներ անձեռնմխելիությամբ օժտված անձանց վերաբերյալ, ուստի դրանում չէր կարող առկա լինել օրենսդրական բաց:

Բ. Ինչ վերաբերում է օրենսգրքի 35-րդ հոդվածի օրենսդրական բացի առկայությամբ պայմանավորված հակասահմանադրականությանը, ապա կարծում եմ՝ **առկա են բոլոր իրավական հիմքերը գործի վարույթը այդ մասով կարճելու համար**՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Նախ նշենք, որ սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարել, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրմանը՝ արդյո՞ք օրենսգրքում առկա են Սահմանադրության ուժով անձեռնմխելիությամբ օժտված պաշտոնատար անձանց իրենց լիազորությունների ժամկետում և դրանից հետո իրենց **կարգավիճակից կամ գործունեությունից բխող գործողությունների համար** հետապնդելուց և պատասխանատվության ենթարկելուց արդյունավետ պաշտպանելու համար անհրաժեշտ օրենսդրական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Այստեղ տեղին է նշել, որ ինքնին այս ուղեցույցային հարցադրումը այնքան էլ կոռեկտ չէ Սահմանադրության տեքստի տեսակետից, քանի որ Հանրապետության նախագահի անձեռնմխելիությունը սահմանող Սահմանադրության 140-րդ հոդվածի կարգավորումներում նշված են «իր կարգավիճակից բխող գործողություններ» և «իր կարգավիճակի հետ չկապված գործողություններ» սահմանադրական տերմինները, և այստեղ որևէ նշում չկա իրենց **«գործունեությունից բխող»** գործողությունների մասին:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ սույն գործով մեղադրանքի, ուստի կալանքի իրավաչափության հարցի լուծումը պայմանավորված է պաշտոնաթող Հանրապետության նախագահի անձեռնմխելիության սահմանադրական երաշխիքներով: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դիմողը նաև այս տեսանկյունից է բարձրացնում Օրենսգրքի 35-րդ հոդվածում **առկա օրենսդրական բացի հարցը**, Սահմանադրական դատարանը

գտնում է, որ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների շարքում պաշտոնաթող Հանրապետության նախագահի անձեռնմխելիության սահմանադրական երաշխիքների օրենսդրական կենսագործման ենթադրյալ բացակայությունն ուղղակիորեն կարող է հանգեցնել նրա անձնական ազատության, ինչպես նաև դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների՝ Սահմանադրության տեսանկյունից չարդարացված սահմանափակման: Հետևաբար, մեղադրանքի, ուստիև կալանքի իրավաչափության գնահատման համար էական նշանակություն ունի ոչ միայն մեղադրանքի հիմքում դրված քրեական օրենքի, այլև **քրեական հետապնդումը կանոնակարգող քրեադատավարական օրենքի դրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը, ինչը ներառում է նաև քրեադատավարական օրենքում Սահմանադրությանը հակասող օրենսդրական բացեր չլինելը:**

Նախ պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետության 2015 թվականի Սահմանադրության կարգավորումներում բացահայտ (էքսպլիցիտ) կերպով չեն նախատեսվում օրենքներում և մյուս իրավական ակտերում թույլ տրված օրենսդրական բացերը հետագոտելու և գնահատելու՝ Սահմանադրական դատարանի ինքնուրույն լիազորությունները: Սահմանադրական դատարանն իր հարուստ պրակտիկայով և «Եվրոպական սահմանադրական դատարանների կոնֆերանս» միջազգային կազմակերպության դեռևս 2008 թվականի հունիսի 14-ի վեհաժողովին ներկայացրած ազգային զեկույցում իր արտահայտած դիրքորոշմամբ արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության մի շարք դրույթներ հիմք են տալիս ենթադրելու, որ Սահմանադրական դատարանն ունի օրենսդրական բացերի սահմանադրականության հետազոտման և գնահատման իմպլիցիտ իրավունք:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը եզրակացրել է, որ պետության մեջ սահմանադրական օրինականության, ինչպես նաև ՀՀ իրավական համակարգում Սահմանադրության գերակայության և անմիջական գործողության ապահովման հարցերում Սահմանադրական դատարանի դերի և տեղի նման ընկալումն իմպլիցիտ կերպով հաստատում է օրենսդրական բացերի սահմանադրականությունը հետազոտելու և գնահատելու իր լիազորությունը:

Կարող ենք ավելացնել, որ Սահմանադրական դատարանի որոշումներին բնորոշ առանձնահատուկ իրավական բնույթն ու իրավաբանական ուժը (համապարտադիր և վերջնական բնույթը, ուղղակի գործողությունը և այլն), ի թիվս այլնի, հնարավորություն են տալիս խոսելու Սահմանադրական դատարանի՝ օրենսդրական բացերի սահմանադրականության հետազոտման և գնահատման իմպլիցիտ լիազորության մասին:

Այստեղ անհրաժեշտ է անդրադառնալ օրենքի բացի հաղթահարման բավական բարդ տեսական և պրակտիկ հիմնախնդրի վերաբերյալ Սահմանադրական դատարանի իրավական դերին և վերջինիս արտահայտած իրավական մի շարք դիրքորոշումներին:

Իր բազմաթիվ որոշումներում Սահմանադրական դատարանն անդրադարձել է օրենսդրական բացի հիմնահարցերին (մասնավորապես՝ ՍԴՈ-864, ՍԴՈ-914, ՍԴՈ-922, ՍԴՈ-1020, ՍԴՈ-1056, ՍԴՈ-1143):

Վերահաստատելով և զարգացնելով օրենսդրական բացի վերաբերյալ իր իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1476 որոշմամբ եզրակացրել է.

«1) օրենսդրական բացը Սահմանադրական դատարանի քննության առարկա կարող է դառնալ այն ժամանակ, երբ այն *իրավակարգավորման թերությունն է*, այլ ոչ թե իրավաստեղծ մարմնի, տվյալ դեպքում՝ օրենսդրի կամքը՝ ձեռնպահ մնալու որպես օրենսդրական բաց ընկալվող իրավական կարգավորումից.

2) ցանկացած թերի օրենսդրական կարգավորում չէ, որը որպես օրենսդրական բաց կարող է Սահմանադրական դատարանի քննության առարկա դառնալ, այլ միայն *այնպիսի օրենսդրական բացը, որը հնարավոր չէ հաղթահարել այլ վերաբերելի իրավակարգավորումները մեկնաբանելու և կիրառելու միջոցով*.

3) օրենսդրական բացը պետք է հանգեցրած լինի հակասական իրավակիրառ պրակտիկայի, որը հնարավոր չէ հաղթահարել կամ որը փաստացի չի հաղթահարվել սովորական դատարանների կողմից.

4) օրենսդրական բաց առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է **օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը**.

5) այն դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

Ջարմանալի է, որ Սահմանադրական դատարանն այս կարևոր չափանիշների շարքում չի նշել այն իրավական դիրքորոշումները, որոնք 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՄԴՈ-914 որոշմամբ արձանագրել է, այն է. «... օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը»: Այսինքն, Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-914 որոշմամբ սահմանել է այն չափանիշները, որոնցից որևէ մեկի առկայության պարագայում օրենսդրական բացը հանդիսանում է սահմանադրական վերահսկողության օբյեկտ:

Դեռևս 2016 թվականի հոկտեմբերին Սահմանադրական դատարանի կողմից և Եվրոպական միության, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի հայտնի Վենետիկի հանձնաժողովի աջակցությամբ կազմակերպված երևանյան միջազգային կոնֆերանսին, որը նվիրված էր իրավական անորոշության և օրենքի բացի հաղթահարման Սահմանադրական դատարանի դերին, մեր ներկայացրած զեկույցում, որտեղ վերլուծվում էր Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի հարուստ փորձը օրենսդրական բացերի հաղթահարման գործում, նշել էինք, որ օրենսդրական բացի առկայությունն ամեննին չի վկայում, որ ցանկացած դիմում Սահմանադրական դատարանի կողմից ընդունելի է քննության: Սկզբունքային

նշանակություն ունի Սահմանադրական դատարանի այն իրավական դիրքորոշումը, որ իրավական կարգավորման բացերի **լրացումը** չի մտնում Սահմանադրական դատարանի իրավասությունների մեջ. այն օրենսդրական մարմնի բացառիկ լիազորությունն է, իսկ Սահմանադրական դատարանը կոչված է օրենսդրական բացեր **հաղթահարելուն**<sup>1</sup> իր սահմանադրական վերահսկողական հատուկ միջոցներով: Բացերի «լրացում» և «հաղթահարում» հասկացություններն իմաստով շատ մոտ և փոխկապակցված են, բայց ոչ նույնական (իդենտիկ):

Սահմանադրական դատարանի սույն գործով ՍԴՈ-1476 որոշմամբ արձանագրվել է. «Պաշտոնաթող Հանրապետության նախագահի գործառույթային անձեռնմխելիությանը վերաբերող սահմանադրական դրույթների առանձնահատկություններն Օրենսգրքում կենսագործված չեն՝ հանգեցնելով **տարբեր դատարանների կողմից դրա տարաբնույթ մեկնաբանության**, ինչը, ի թիվս այլնի, նույնպես վկայում է Օրենսգրքում այդ օրենսդրական բացը լրացնելու այլ իրավական հնարավորությունների բացակայության մասին:

Նման իրավիճակը կարող է հանգեցնել նրան, որ գործառույթային անձեռնմխելիությամբ օժտված անձանց (ներառյալ պաշտոնաթող Հանրապետության նախագահի) նկատմամբ կարող է հարուցվել և իրականացվել քրեական հետապնդում, ինչպես նաև նրանք կարող են ենթարկվել քրեական պատասխանատվության այնպիսի գործողությունների համար, որոնք բխել են նրանց կարգավիճակից կամ գործունեությունից: Այսինքն՝ այդ անձանց կարող է առաջադրվել ոչ օրինական և չհիմնավորված մեղադրանք, որի դեմ նրանք օժտված չեն լինի նաև գործառույթային անձեռնմխելիությամբ պայմանավորված արդյունավետ դատական պաշտպանության հնարավորությամբ»:

Մեր կարծիքով սույն գործի դատաբնության ժամանակ Սահմանադրական դատարանը պարտավոր էր հաշվի առնել իր կողմից ընդունված երկու կարևոր աշխատակարգային որոշումներում արտահայտված մի շարք հիմնարար (ֆունդամենտալ) իրավական դիրքորոշումներ<sup>1</sup>: Մասնավորապես, խոսքը 25.01.2019թ. ՍԴԱՈ-7

<sup>1</sup> Տեղին է նշել, որ նմանատիպ գործով Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանը իր 2016 թվականի հուլիսի 20-ի N 17-Ո որոշմամբ անդրադարձել է Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսդրության մեջ հատուկ կարգավիճակ ունեցող անձանց վերաբերյալ դրույթների բացակայության խնդրին և նշել, որ նորմի բացակայությունը ինքնին բավարար հիմք չէ քրեական դատավարության այդ իրավակարգավորումը Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությանը հակասող ճանաչելու համար, մանավանդ, եթե սահմանադրաիրավական մեկնաբանության միջոցով հնարավոր է սահմանել համապատասխան երաշխիքներ ինչպես տվյալ անձի, այնպես էլ տվյալ իրավահարաբերությունների այլ սուբյեկտների համար:



«Ռոբերտ Քոչարյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 414<sup>2</sup>-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը **մերժելու** մասին», և հատկապես, 22.02.2019թ. ՄԴԱՈ-17 «Ռոբերտ Քոչարյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը **մերժելու** մասին» աշխատակարգային որոշումների մասին է:

Քննվող դիմումում շարադրված հիմնավորումների ուսումնասիրության արդյունքում կարող ենք արձանագրել, որ դիմողն, ըստ էության, բարձրացրել է.

ա) տվյալ գործով Վճռաբեկ դատարանի կայացրած որոշման օրինականության, այդ որոշմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթների իրավաչափության հարց,

բ) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի առանձին դրույթների իրավական բովանդակության բացահայտման, դրանց միակերպ և ամբողջական ընկալման և մեկնաբանության հարցեր:

Սահմանադրական դատարանը նշում է նաև, որ դիմումով բարձրացվում են իրավունքի ենթադրյալ բացի հարցեր, որոնց հիմքում առավելապես դրվել են ընդհանուր վերացական հիմնավորումներ, որոնք կարող են քննության առարկա լինել ոչ թե անհատական դիմումների հիման վրա իրականացվող, այլ վերացական սահմանադրական վերահսկողության շրջանակներում («Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդված): Այլ կերպ՝ դիմումում բերված իրավական հիմնավորումներով բարձրացվում են դատական ակտով դիմողի նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթների մեկնաբանման և կիրառման իրավաչափության հարց՝ ըստ էության հանգեցնելով տվյալ գործով հենց Վճռաբեկ դատարանի կայացրած որոշման սահմանադրականության խնդրին, ինչը Սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակից դուրս է:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ դիմումում բարձրացված հարցերի և դրանց հիմքում դրված հիմնավորումների շրջանակներում առաջնային խնդիրը

վիճարկվող դրույթների միատեսակ կիրառության ապահովումն է, որը, Սահմանադրությանը համապատասխան, Վճռաբեկ դատարանի գործառույթն է: Սահմանադրական դատարանն իրավասու չէ գնահատել դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտի դրույթների **կիրառման իրավաչափությունը**:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ անհատական դիմումների հիման վրա իրականացվող վերահսկողության նպատակը թեև Սահմանադրության դրույթների անմիջական գործողության երաշխավորումն ու վերջինիս միջոցով անձի հիմնական իրավունքների պաշտպանությունն է, այնուհանդերձ, այդ գործառույթի իրականացումը հնարավոր է բացառապես Սահմանադրության 168 և 169-րդ հոդվածների և վերջիններիս հիման վրա «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում նախատեսված իրավակարգավորումների շրջանակներում և պայմանով, որ դիմողը բավարար չափով հիմնավորի տվյալ կոնկրետ գործով իր սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության անհրաժեշտությունը, այլ ոչ օբյեկտիվ իրավունքի որևէ հիմնահարցի առկայությունն ընդհանրապես, ինչը տվյալ դեպքում շրջանցվել է դիմողի կողմից:

Անդրադառնալով դիմողի բարձրացրած «իրավական բացի» խնդրին՝ անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ իրավական բացը (իրավակարգավորման բացը), երբ այն պայմանավորված է ոչ թե այս կամ այն գործով վիճարկվող նորմատիվ դրույթներով, այլ ինքնին **իրավական տվյալ կառուցակարգի ամբողջական իրավակարգավորմամբ և դրա հաղթահարմամբ**, ինչը և փորձել է հիմնավորել դիմողը, պետք է դիտարկել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքի (Սահմանադրության 4-րդ հոդված) համատեքստում, և բոլոր այն դեպքերում, երբ այն պայմանավորված է իրավակարգավորման բնագավառում կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանների ենթադրյալ բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասությունն է: Սակայն Սահմանադրական դատարանն անհատական դիմումներով գործերի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականության խնդրին, եթե վիճարկվող նորմի (նորմերի) բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ

նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որի արդյունքում խախտվում է կամ կարող է խախտվել կոնկրետ հիմնական իրավունք: Մինչդեռ քննության առարկա դիմումում առկա չեն կոնկրետ հիմնական իրավունքին **ուղղակի առնչվող իրավական այնպիսի հիմնավորումներ**, որոնք հիմք կհանդիսանային դրանք Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված այս կամ այն իրավունքի խախտման համատեքստում դիտարկելու համար, հետևաբար, նաև Սահմանադրական դատարանում՝ անհատական դիմումի շրջանակներում գնահատման ենթակա լինել չեն կարող: **Դա է անհատական դիմումների ընդունելիության առանցքային չափանիշներից մեկը:**

Դիմողի հիմնավորումներն իրենց բովանդակությամբ, ըստ էության, կապված են ոչ թե նորմատիվ դրույթների սահմանադրականությունն անհատական դիմումին ներկայացվող պահանջներին համապատասխան վիճարկելու, այլ սուսկ այդ դրույթների մեկնաբանության և կիրառման իրավաչափության հարցերի հետ: Դիմողը, Սահմանադրական դատարանին ըստ ձևի ներկայացնելով վիճարկվող դրույթները՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ Սահմանադրությանը հակասող ճանաչելու խնդրանք, ըստ էության բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց, ինչը, Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՄԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ արտահայտված և բազմիցս վերահաստատված իրավական դիրքորոշման, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, Սահմանադրական դատարանում քննության ենթակա հարց չէ:

Հիշյալ դրույթը, ըստ էության, **վերարտադրում է** Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ամրագրված դրույթը, համաձայն որի՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:

Սահմանադրական հիշյալ դրույթով ամրագրվում է Վճռաբեկ դատարանի գործառույթը՝ ապահովել նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը: Նորմատիվ իրավական ակտերի

միատեսակ կիրառությունը, դրանց ճիշտ մեկնաբանությունն ապահովելը՝ որպես նաև իրավունքի զարգացմանը նպաստելու միջոցներ, կառուցակարգային առումով փոխկապակցված գործառույթներ են: Վճռաբեկ դատարանի՝ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական գործառույթից անմիջականորեն բխում է դատարանների կողմից կիրառված նորմատիվ իրավական ակտերի միասնական ընկալման վերաբերյալ իրավական դիրքորոշում արտահայտելը:

Այն հանգամանքը, որ սահմանադրական արդարադատության ոլորտը, Սահմանադրության 171-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, դուրս է Վճռաբեկ դատարանի գործառույթների շրջանակից, չի նշանակում, որ Վճռաբեկ դատարանը չունի Սահմանադրությունը մեկնաբանելու և կիրառելու լիազորություն:

Սահմանադրության 164-րդ հոդվածի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է **միայն Սահմանադրությանը**, և օրենքներին համապատասխան: Դատավորի և, հետևապես՝ դատարանի անկախության առանցքային կանոնն ամրագրող այս դրույթը, ի թիվս այլնի, ամրագրում է նաև **Սահմանադրությանը համապատասխան գործելու**՝ դատավորի պարտադիր լիազորությունը, ինչը նշանակում է, որ Սահմանադրությունը մեկնաբանելու և կիրառելու լիազորություն Սահմանադրությամբ վերապահված է յուրաքանչյուր դատարանի, այդ թվում՝ Վճռաբեկ դատարանին: Դատարանների կողմից սահմանադրական նորմերի ճիշտ և միատեսակ ընկալմամբ, մեկնաբանմամբ և կիրառմամբ է պայմանավորվում նաև սահմանադրականության հաստատումը:

Վճռաբեկ դատարանի գործառույթների սահմանման միջոցով սահմանադիրը նպատակ է ունեցել ընդգծելու, որ Վճռաբեկ դատարանը տարբերվում է առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններից հատկապես նրանով, որ վարույթ չի ընդունում և չի քննում ցանկացած գործ: Բացի դրանից, Վճռաբեկ դատարանին վերաբերող սահմանադրական դրույթներից ակնհայտ է, որ սահմանադիրը Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի ձևակերպմամբ նպատակ չի ունեցել Վճռաբեկ դատարանի իրավասության շրջանակից դուրս թողնել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների կողմից Սահմանադրության միատեսակ մեկնաբանումը և կիրառումն ապահովելու խնդիրը:

Որպես Սահմանադրության գերակայության ապահովման միջոց՝ **Սահմանադրության վերջնական և համապարտադիր մեկնաբանությունն ու կիրառումն է** Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունը, իսկ հանրային իշխանության բոլոր մարմինները՝ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրենց լիազորությունների շրջանակներում մեկնաբանում և կիրառում են Սահմանադրությունը:

Հատուկ շեշտենք, որ թեև սահմանադրական արդարադատության իրականացումը, հատկապես օրենքի և Սահմանադրության մեջ նշված այլ նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելը Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է, այնուամենայնիվ, սահմանադրականության ստուգումը բոլոր դատարանների պարտականությունն է:

Այսպես, Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով հանգում են կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության խնդրի, այսինքն՝ այդ կապակցությամբ առաջանում են հիմնավոր կասկածներ, և եթե տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով, ապա դատարանները **պարտավոր են** դիմել Սահմանադրական դատարան այդ ակտի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով, ինչը նշանակում է, որ **բոլոր դատարանները, այլ ոչ միայն Վճռաբեկ դատարանը, պետք է ինցիդենտ կերպով ստուգեն կիրառվելիք նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը** և պարտավոր են դիմել Սահմանադրական դատարան՝ նշված նախադրյալների առկայության դեպքում:

Անհրաժեշտ ենք համարում պնդել, որ ոչ միայն դատարանները, այլև առանձին սահմանադրական այլ մարմիններ, որոնց գործառույթները և լիազորությունների շրջանակը սահմանվում են բացառապես Սահմանադրությամբ, օրինակ՝ Ազգային ժողովը, անկախ նրանց գործունեությունը կանոնակարգող սահմանադրական կամ այլ օրենքների առկայության փաստից, պարտավոր են իրենց գործունեության մեջ մեկնաբանել և կիրառել Սահմանադրությունը:

«Դատարանների, այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի, կամ հանրային իշխանության այլ մարմինների լիազորությունը մեկնաբանելու Սահմանադրությունը, ապահովելու դրա կիրառությունը, չի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3(95)/2019

խաթարում Սահմանադրական դատարանի լիազորության բացառիկությունը՝ որպես Սահմանադրության գերակայությունն ապահովող մարմնի՝ վերջնական լուծում տալու Սահմանադրության մեկնաբանության հարցերին, որն ունի համապարտադիր բնույթ՝ հանրային իշխանության բոլոր մարմինների, ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Սահմանադրական դատարանն ինքն է վերջնադրյունքում ապահովում Սահմանադրության միատեսակ կիրառությունը՝ իր լիազորությունների շրջանակներում լուծում տալով Սահմանադրության մեկնաբանության առնչությամբ առաջացած բոլոր վեճերին: Սահմանադրական արդարադատության էությունը կարող էր նենգափոխվել կամ այդ արդարադատության արդյունավետությունը կարող էր նվազել, եթե Սահմանադրության մեկնաբանության և կիրառման հետ կապված վեճերի **վերջնական** լուծումը վերապահված լիներ հանրային իշխանության մեկ այլ մարմնի» (25.01.2019թ. ՍԴԱՌ-7):

Ամփոփելով նշենք, որ.

1. Սույն գործով ենթադրյալ օրենսդրական բաց գոյություն չունեք, քանի որ դատական պրակտիկայի կողմից, մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանի 2018 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ բովանդակային կերպով տրվել էր Սահմանադրության 140-րդ հոդվածի 3-րդ կետի մեկնաբանությունը: Այս գործով Սահմանադրական դատարանն անելիք չունեք: Խնդրի լուծումն ամբողջովին օրենսդիր մարմնի տիրույթում է:

2. Վերահաստատում ենք դեռևս 26.06.2008թ. «Քաղաքացի Էմիլիյա Մելիքյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 4-րդ մասի (նոր խմբագրությամբ 233 հոդվածի 4-րդ մաս)՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ՍԴՌ-754 որոշման առնչությամբ հատուկ կարծիքում արտահայտված դիրքորոշումն առ այն, որ «Սահմանադրական դատարանն օրենքները սահմանադրական վերահսկողության ենթարկելիս, առաջին հերթին պետք է տա ոչ միայն վիճարկվող օրենքի դրույթների մեկնաբանումը, այլ Սահ-

մանադրության համապատասխան դրույթների իր մեկնաբանումը, որոնց ենթադրաբար հակասում են վիճարկվող օրենքի դրույթները: Հիմնավոր չէ այն մոտեցումը, երբ միայն օրենքի դրույթները մեկնաբանելով, դրանք ճանաչվում են Սահմանադրությանը հակասող» և անվավեր, այն էլ՝ օրենքի բացով պայմանավորված:

3. Համոզված եմ, որ սույն գործով Բարձր դատարանը կգար այլ եզրահանգման, եթե չցուցաբերվեր որոշակի շտապողականություն այս բարդ և մեծ հանրային հնչեղություն ունեցող խնդրի հետ կապված:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐ

Ֆ.ԹՈՒՅԱՆ

13 սեպտեմբերի 2019թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՄԵՎԱԿ ՀԱՃԻ ՀԱԿՈՔՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԲԱՐ՝ 368-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝  
«ԲՈՂՈՔԸ ԳՈՐԾԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՆՁԱՆՑ.... ՈՒՂԱՐԿԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ» ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ 371-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝ «ԿՐԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՎԵՐԱՔՆՆԻՉ  
ԲՈՂՈՔՈՒՄ ԱՌԿԱ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ....» ԴՐՈՒՅԹԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

24 սեպտեմբերի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի ներկայացուցիչ՝ փաստաբան Ա. Խաչատրյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ Ա. Քոչարյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,



դոնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Սևակ Հաճի Հակոբյանի դիմումի հիման վրա՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխանաբար՝ 368-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «բողոքը գործին մասնակցող անձանց... ուղարկելու մասին ապացույցները» բառակապակցության և 371-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «Կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները...» դրույթի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 9-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի փետրվարի 27-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ից:

Օրենսգրքի՝ «**Վերաքննիչ բողոքի ձևը և բովանդակությունը**» վերտառությամբ 368-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է.

«5. Բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, բողոքը գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարման գծով արտոնություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը, եթե բողոք բերողն ազատված չէ պետական տուրք վճարելու պարտականությունից: Բողոքին կարող են կցվել բողոք բերող անձի այլ միջնորդությունները: Ներկայացուցչի ստորագրած բողոքին կցվում է նրա լիազորությունը հավաստող փաստաթուղթը, եթե գործում բացակայում է լիազորագիրը»:

Օրենսգրքի՝ «**Վերաքննիչ բողոքը վերադարձնելը**» վերտառությամբ 371-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է.

«5. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու ու որոշումն ստանալուց հետո՝ վճռի դեմ ներկայացված բողոքով 15-օրյա ժամկետում, իսկ վճարման կարգադրության կամ որոշման դեմ ներկայացված բողոքով եռօրյա ժամկետում սահմանված կարգով կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում այն համարվում է վերաքննիչ դատարան ներկայացված սկզբնական ներկայացման օրը: Կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում»:

Օրենսգրքի վիճարկվող դրույթներում փոփոխություններ և լրացումներ չեն կատարվել:

Գործի քննության առիթը Սևակ Հաճի Հակոբյանի՝ 2019 թվականի մայիսի 17-ին Սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև հետազոտելով Օրենսգրքի վերաբերելի դրույթները, Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

**1. Դիմողի դիրքորոշումները**

Դիմողը նշում է, որ Օրենսգրքի համապատասխանաբար՝ 368-րդ հոդվածի 5-րդ մասի «բողոքը գործին մասնակցող անձանց .... ուղարկելու մասին ապացույցները» բառակապակցությունը և 371-րդ հոդվածի 5-րդ մասի «Կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները....» դրույթը խախտում են Սահմանադրությամբ ամրագրված արդար դատաքննության իրավունքը, քանի որ «...օրենսգրքի ոչ 368-րդ հոդվածի 5-րդ մասը, ոչ 371-րդ հոդվածի 5-րդ մասը (ոչ անգամ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի «հուշումը») չեն նախատեսում որևէ ձևակերպում, որը հնարավորություն կտար եզրակացնել, որ վերաքննիչ դատարանի բողոքը կրկին ներկայացնելու դեպքում պետք էր երկրորդ անգամ բողոքը ուղարկել կողմերին և կցել երկրորդ անգամ ուղարկելու վերաբերյալ փոստային անդորրագրերը»:

Ըստ դիմողի ստացվում է, որ վերաքննիչ բողոքը չի քննվել դատարանի կողմից, քանի որ բողոքը ներկայացնող կողմը նույն վերաքննիչ բողոքը (որին միայն պետական տուրքի լրացուցիչ անդորրագիր է կցվել) կրկին չի ուղարկել կողմին, ընդ որում, այն պարագայում, երբ Օրենսգրքը նման պահանջ տառացի չի նախատեսում:

Դիմողի կարծիքով տվյալ պարագայում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 368-րդ հոդվածի 5-րդ մասին տալիս է յուրովի մեկնաբանություն և կիրառում է այն այնպիսի եղանակով, որն առաջացնում է Սահմանադրությամբ նախատեսված արդար դատաքննության իրավունքի խախտում:

Դիմողը գտնում է, որ «...վերոնշյալ իրավիճակը .... ոչ այլ ինչ է, քան հակասություն Սահմանադրությամբ նախատեսված արդար դատաքննության իրավունքի .... հետ»:

Ելնելով վերոգրյալից՝ դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթներն իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ չեն համապատասխանում Սահմանադրության 63-րդ հոդվածի պահանջներին:

**2. Պատասխանողի դիրքորոշումները**

Պատասխանողը նշում է, որ Օրենսգիրքը հստակ սահմանել է առաջին աստիճանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների կողմից բողոքի ձևի, բովանդակության, վերջինիս վերադարձման կարգի ու իրավական գործիքակազմի այնպիսի մեխանիզմներ, որոնք ապահովում են արդարադատության մատչելիության սահմանադրական պահանջը, ուստի սույն գործով վիճարկվող դրույթները պայմանավորված չեն տվյալ նորմերի սահմանադրականությամբ: Պատասխանողի կարծիքով դիմողը բարձրացնում է վիճարկվող նորմերի կիրառման իրավաչափության հարց:

Վկայակոչելով Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում արտահայտված արդարադատության մատչելիությանը, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորմանը վերաբերող դիրքորոշումները՝ պատասխանողը նշում է, որ անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրացումը երաշխավորելու տեսանկյունից առաջնահերթ կարևորություն ունի այն հարցի պատասխանը, թե որքանով է հասանելի արդարադատությունը, որքան արդյունավետ են անձի խախտված իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի իրացման պայմանները և գործիքակազմը:

Միաժամանակ, անդրադարձ կատարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արտահայտված մի շարք դիրքորոշումներին՝ պատասխանողն արձանագրում է, որ սույն սահմանադրաիրավական վեճի առարկա հանդիսացող Օրենսգրքի դրույթներն ապահովում են համապատասխան գործիքակազմ երաշխավորելու արդարադատության հասանելիությունը:

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի համապատասխան դրույթները, ինչպես նաև հղում կատարելով Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 որոշմանը՝ պատասխանողը գտնում է, որ դիմումը ենթակա է մերժման:

Ըստ պատասխանողի՝ դիմողի կողմից մատնանշված իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված չէ վիճարկվող նորմի սահմանադրականությամբ: Բացի դրանից, պատասխանողի գնահատմամբ դիմողը համապատասխան հիմնավորումներ չի ներկայացրել Օրենսգրքի վիճարկվող դրույթների և վերջիններիս հակասահմանադրականության վերաբերյալ:

Ամփոփելով վերոգրյալը պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի վիճարկվող դրույթները համապատասխանում են Սահմանադրությանը և միջնորդում է կարճել գործի վարույթը:

### **3. Գործի շրջանակներում պարզաբանման ենթակա հարցադրումները**

Սույն գործով վիճարկվող նորմերի սահմանադրականությունը որոշելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

-արդյո՞ք վիճարկվող դրույթները միջամտում են անձի որևէ հիմնական իրավունքի, ներառյալ արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի իրականացմանը,

-արդյո՞ք, առկայության դեպքում, միջամտությունը համապատասխանում է հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման որոշակիության և համաչափության սահմանադրաիրավական սկզբունքներին և չի խախտում արդարադատության մատչելիության բուն էությունը:

### **4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1.** Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

Սահմանադրական դատարանը Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածները բազմիցս դիտարկել է որպես մեկ միասնական իրա-

վական երևույթ: Դա, մասնավորապես, վերաբերում է արդարադատության մատչելիության իրավունքին՝ որպես արդար դատաքննության իրավունքի տարրի:

Այնուհանդերձ, Սահմանադրության 63-րդ հոդվածի իրավակարգավորումը կազմում է արդար դատաքննության իրավունքի առանցքը, քանի որ այդ իրավունքի կիրառության շրջանակն ամրագրելուց բացի սահմանում է նաև դրա առավել ընդհանրական երաշխիքները:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների իրավակարգավորման հիմքում դրված են անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման սահմանադրաիրավական այն սկզբունքները, որոնց համատեքստում Սահմանադրական դատարանն իր որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ: Այդ դիրքորոշումներն արտացոլում են նաև միջազգային իրավական փորձի համալիր ուսումնասիրության արդյունքները:

Սահմանադրական դատարանը կարևորել է իրավակարգավորման սկզբունքներ (չափանիշներ), որոնք սույն գործով վեճի առարկա նորմի սահմանադրականության գնահատման տեսանկյունից ունեն սկզբունքային նշանակություն, մասնավորապես.

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես Սահմանադրության 63-րդ հոդվածով երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- դատական ակտի դեմ ներկայացված բողոքի ընդունելիության պայմաններ. բողոքարկման ժամկետ սահմանելիս պետք է գերակայեն դատարանի մատչելիության իրավունքի ապահովման երաշխիքները,

- դատական ակտի պատճառաբանվածությունը, ըստ որի ընդունվում կամ մերժվում է անձի դիմումը, ինչպես նաև դատական ակտի բողոքարկման իրավունքը մատչելիության իրավունքի իրացման երաշխիքներ են,

- օրենսդրական կանոնակարգումը չի կարող սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն առաջացնել անձանց համար՝ կախված նրանց ֆինանսական հնարավորություններից, արդյունքում չապահովելով դատարանի մատչելիության իրավունքը:

4.2. Վերոնշյալի համատեքստում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև դատական բողոքարկման ինստիտուտի արդյունավետ կիրառման օրենսդրական կարգավորումներին՝ խնդիրը դիտարկելով ինչպես սահմանադրական կարգի սկզբունքներին, արդարադատության նպատակներին, այնպես էլ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային իրավական պարտավորություններին դրա համապատասխանությունը գնահատելու և ապահովելու տեսանկյունից:

Սահմանադրական դատարանն իր բազմաթիվ որոշումներում վերոնշյալի առնչությամբ արտահայտել է, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումները.

ա) «Բողոքարկման ինստիտուտի ողջ տրամաբանությունը՝ ընդհանրապես, և արդարադատության համակարգի ներսում՝ մասնավորապես, հանգում է նրան, որ մի օղակի ապօրինի վարքագծի վիճարկումը հասցեագրված լինի բացառապես վերադաս ատյանին: Այս տրամաբանությամբ է կառուցված ՀՀ արդարադատական համակարգի ներսում բողոքարկման ողջ մեխանիզմը» (ՄԴՈ-719),

բ) «... սահմանադրորեն նախատեսված է խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության (դրա արդյունավետության) երաշխավորման առանձնահատուկ այնպիսի ինստիտուտ, ինչպիսին վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման անձի իրավունքն է (դատական բողոքարկումը (ՀՀ Սահմ. 20-րդ հոդվածի 3-րդ մաս): Վերջինս նաև անձի իրավունքների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրականացման խնդրում պետության առաջնային պարտականություն է՝ որոշակի ընթացակարգի, այդ թվում՝ դատական հնարավոր սխալների ուղղման միջոցով արդարադատության նպատակների իրագործումը» (ՄԴՈ-936),

գ) «Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական բողոքարկման ինստիտուտի կարգավորման և գործադրման հիմքում պետք է իրացվեն հետևյալ առաջնահերթ իրավապայմանները, մասնավորապես.

- անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն արժեք, դատարանների կողմից ենթակա են անվերապահ պաշտպանության կոնկրետ գործի ինչպես ըստ էության քննության, այնպես էլ հնարավոր հետագա վերաքննության շրջանակներում,

- դատական բողոքարկումը, որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները (մասնավորապես՝ ՀՀ Սահմ. 18, 19-րդ հոդվածներ),

- դատական բողոքարկման ինստիտուտը, առանց բացառության, պետք է միջոց հանդիսանա հավասարության պայմաններում, օբյեկտիվ, բազմակողմանի, արդար և հրապարակային դատաքննության արդյունքում, ողջամիտ ժամկետներում բացահայտելու և շտկելու դատական բոլոր այն սխալները, որոնք թույլ են տրվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի խախտման արդյունքում, հետևաբար հանգեցրել են դատական գործի սխալ լուծմանը,

- դատական ակտերի վերանայումը (վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքի հիման վրա) որպես արդարադատական գործառույթ կարող է ծառայել վերոհիշյալ սահմանադրաիրավական խնդիրների իրագործմանը, եթե իրականացվի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից» (ՄԴՈ-936),

դ) «Դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է: Այս ինստիտուտն այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին աստիճանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին, չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից» (ՄԴՈ-1190):

Դիմողի՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան ներկայացրած թիվ ԵԿԴ/2634/02/17 քաղաքացիական գործով վերաքննիչ բողոքը չի քննվել դատարանի կողմից, քանի որ 12.11.2018 թ. վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումն ստանալուց հետո դիմողը, շտկելով թույլ տված սխալները (բավարար չափով պետական տուրքի վճարումը), կրկին ներկայացնելիս նույն վերաքննիչ բողոքը կրկին չի ուղարկել պատասխանող կողմին, որը վերաքննիչ դատարանը համարել է Օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին չբավարարող և 371-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրամադրել վերաքննիչ բողոք ներկայացնող կողմին, որպիսի պարագայում դիմողը զրկվել է դատական պաշտպանության իրավունքից:

Այս առումով Սահմանադրական դատարանը հարկ է համարում շեշտել, որ Օրենսդրի նպատակը ոչ թե բողոք բերած անձին ծանրաբեռնելն է որևէ չարդարացված պարտականությամբ, այլ երաշխավորելը, որ գործին մասնակցող անձանց հասանելի լինի բողոքի բովանդակությունը, որը վերջիններիս հնարավորություն կտա արդյունավետորեն պաշտպանվել բողոքում ներկայացված պահանջներից, այսինքն՝ գործին մասնակցող անձինք հնարավորություն կունենան արդյունավետորեն իրականացնելու դատական պաշտպանության իրենց հիմնական իրավունքը:

**4.3.** Վերաքննիչ բողոք բերող անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների ապահովման համատեքստում դիմողի կողմից վիճարկվող իրավակարգավորումներին սահմանադրաիրավական պատշաճ գնահատական տալու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև վերաքննիչ բողոքների վերադարձման ինստիտուտի դերին և բովանդակությանը:

Օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասը սպառնիչ կերպով նախատեսում է վերաքննիչ բողոքի վերադարձման դեպքերը: Ըստ այդմ, «...վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե՝

- 1) չեն պահպանվել սույն օրենսգրքի 368-րդ հոդվածի պահանջները.
- 2) վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին.



3) մինչև վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը բողոք բերած անձից դիմում է ստացվել այն հետ վերցնելու մասին.

4) բողոք բերող անձի կողմից ներկայացվել է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ դրա չափը նվազեցնելու միջնորդություն, որը մերժվել է.

5) վերաքննիչ բողոք է բերվել մեկից ավելի դատական ակտերի դեմ»:

Ընդ որում, վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշվում են բողոքում թույլ տրված խախտումները, որպեսզի վերաքննիչ բողոք բերած անձը դրանք շտկելու հնարավորություն ունենա:

Բացառությամբ վերոհիշյալ կարգավորումների 3-րդ կետով նախատեսված դեպքի՝ այն է՝ բողոք բերած անձը դիմում է ներկայացնում այն հետ վերցնելու մասին, բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և որոշումն ստանալուց հետո՝ վճռի դեմ ներկայացված բողոքով 15-օրյա ժամկետում, իսկ վճարման կարգադրության կամ որոշման դեմ ներկայացված բողոքով եռօրյա ժամկետում սահմանված կարգով կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում այն համարվում է վերաքննիչ դատարան ներկայացված սկզբնական ներկայացման օրը:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքը վերադարձնելու ինստիտուտն ուղղված է բողոք բերող անձի՝ դատական ակտը բողոքարկելու միջոցով դատական պաշտպանության իրավունքի իրականացման համար արդյունավետ կառուցակարգի սահմանմանը և որևէ պարագայում ձևական բնույթի թերությունները չպետք է խոչընդոտեն դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրականացմանը:

Մյուս կողմից, կարևորելով դատավարական ընթացակարգերին հետևելու անհրաժեշտությունը, ինչպես նաև ողջամիտ ժամկետում դատաքննության իրականացման սահմանադրաիրավական պահանջը՝ օրենսդիրը սահմանել է դրույթ, համաձայն որի՝ վերադարձնելուց հետո կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում: Այսինքն՝ վերաքննիչ բողոքի վերադարձման ինստիտուտն ընդհանուր

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3(95)/2019

առմամբ ապահովում է բողոքի հետ կապված թերությունների վերացման և այդ ինստիտուտի չարաշահման անթույլատրելիության միջև պատշաճ հավասարակշռությունը:

Վերադարձնելուց հետո կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա թերությունների վերացման համար ժամկետ չնախատեսելը պայմանավորված է հետևյալ իրավական երաշխիքներով.

նախ, վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշվում են բողոքում թույլ տրված խախտումները (Օրենսգրքի 371-րդ հոդված, 3-րդ մաս): Այսինքն՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ պետք է նշվեն բողոք բերող անձի կողմից թույլ տրված **բոլոր խախտումները**,

երկրորդ, վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու համար Օրենսգրքը նախատեսում է ռոջամիտ ժամկետներ՝ վճռի դեմ ներկայացված բողոքով 15-օրյա ժամկետ, իսկ վճարման կարգադրության կամ որոշման դեմ ներկայացված բողոքով՝ եռօրյա ժամկետ (Օրենսգրքի 371-րդ հոդված, 5-րդ մաս),

երրորդ, վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումն օրենսգրքով սահմանված կարգով կարող է բողոքարկվել Վճռաբեկ դատարան (Օրենսգրքի 371-րդ հոդված, 6-րդ մաս): Ընդ որում, վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը Վճռաբեկ դատարանի կողմից վերացվելու դեպքում վերաքննիչ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե բացակայում են վերաքննիչ բողոքը վերադարձնելու այլ հիմքեր կամ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքեր (Օրենսգրքի 371-րդ հոդված, 7-րդ մաս):

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքը վերադարձնելու ինստիտուտն անհրաժեշտ երաշխիքներ է նախատեսում դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու համար՝ միաժամանակ ապահովելով արդար դատաքննության բաղադրատարր հանդիսացող ռոջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը: Այս համատեքստում Սահմանադրական դատարանը գտնում է, որ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չտրամադրելը հանդիսանում է անհրաժեշտ և պիտանի միջոց այն պարագայում, երբ դատարանի կողմից մատնանշված բոլոր խախտումները սահմանված ժամկետում չեն վերացվում բողոքաբերի կողմից:

4.4. Օրենսգրքի 367-րդ հոդվածը նախատեսում է վերաքննիչ բողոք ներկայացնելու կարգը: Ըստ համապատասխան հոդվածի՝ վերաքննիչ բողոքը և դրան կից փաստաթղթերն ուղարկվում կամ հանձնվում են վերաքննիչ դատարան: Միաժամանակ, հոդվածով նախատեսված իրավակարգավորումների համաձայն՝ բողոք ներկայացնողը վերաքննիչ բողոքը և դրան կից փաստաթղթերի պատճեններն ուղարկում է գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ հոդվածով սահմանված՝ վերաքննիչ բողոքը և դրան կից փաստաթղթերի պատճենները գործին մասնակցող անձանց ուղարկելու պահանջն ինքնանպատակ չէ: Այն բխում է մրցակցային դատավարության սկզբունքից և ապահովում է գործին մասնակցող անձանց դատավարական պաշտպանությունն առավել արդյունավետ կազմակերպելու հնարավորությունը:

Մյուս կողմից, Օրենսգրքի 368-րդ հոդվածով սահմանվում են վերաքննիչ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Մասնավորապես՝ ըստ ձևի վերաքննիչ բողոքը պետք է ներկայացվի գրավոր, ընթեռնելի, հայերեն կամ այլ լեզվով՝ հայերեն պատշաճ թարգմանությամբ:

Բացի դրանից, վերաքննիչ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, բողոքը գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույցները:

Հաշվի առնելով Օրենսգրքի 367-րդ հոդվածով նախատեսված՝ վերաքննիչ բողոքը և դրան կից փաստաթղթերի պատճենները գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան պարտադիր ուղարկելու պահանջը՝ 368-րդ հոդվածով վերաքննիչ բողոքի ձևին նվիրված հոդվածով սահմանվում է, որ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, ինչպես նաև բողոքը գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույցները:

Այսինքն՝ վերաքննիչ բողոքին ընթացք տալու համար կարևորվում են պետական տուրքի վճարումը (եթե բողոք բերողն ազատված չէ պետական տուրք վճարելու պարտականությունից), բողոքը

գործին մասնակցող անձանց ուղարկելը, ինչպես նաև բողոքի պատճենը դատական ակտը կայացրած դատարան ուղարկելը:

Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարման գծով արտոնություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ սույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է»:

Այլ կերպ ասած՝ պետական տուրքի վճարումը հիմք է հանդիսանում դատարանի կողմից վերաքննիչ բողոքը քննության ընդունելու, գործը քննելու և համապատասխան որոշում կայացնելու համար: Այդ առումով պետական տուրքը վճարված լինելու կամ չլինելու հանգամանքն անմիջականորեն չի առնչվում գործին մասնակցող անձանց իրավաչափ շահերի հետ:

Մյուս կողմից, Օրենսգրքի 101 և 109-րդ հոդվածների համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից, որոնք բաշխվում են գործին մասնակցող անձանց միջև՝ բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Սակայն, Սահմանադրական դատարանը գտնում է, որ պետական տուրքի չափը որոշելը և այն դատական ծախսերում ներառելը գործող իրավակարգավորումների համաձայն հստակ կանխատեսելի գործընթաց է:

Վերաքննիչ բողոք բերող անձի կողմից պետական տուրքի վճարված չափի մասին գործին մասնակցող անձանց տեղեկացնելու և տեղեկացնելը հավաստող ապացույցները բողոքին կցելու պահանջը չի կարող վերադասվել անձի՝ դատական պաշտպանության իրավունքից, հետևաբար, Օրենսգրքի վիճարկվող 368-րդ հոդվածի 5-րդ մասում «բողոքը գործին մասնակցող անձանց .... ուղարկելու մասին ապացույցները» բառակապակցությունը չպետք է մեկնաբանվի այնպես, որ կրկին ներկայացված բողոքին գործով մասնակցող անձանց պետական տուրքի վճարման վերաբերյալ ապացույցներ չներկայացնելը խոչընդոտ հանդիսանա վերաքննիչ բողոք բերելու իրավունքի իրականացման համար:

4.5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողի նկատմամբ կիրառվել է Օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքը, այն է չեն պահպանվել օրենսգրքի 368-րդ հոդվածի պահանջները, Մահմանադրական դատարանը հարկ է համարում շեշտել, որ վերոհիշյալ հիմքով վերաքննիչ բողոքի վերադարձման նախապայմաններն ըստ էության դասակարգվում են երկու խմբի.

առաջինն այն պայմաններն են, որոնք վերաբերում են բողոքի բովանդակությանը ներկայացվող պահանջներին: Օրենսգրքի համաձայն՝ բողոքը պետք է ներառի, մասնավորապես, վերաքննիչ դատարանի անվանումը, բողոքը բերող անձի և գործին մասնակցող անձանց անունները (անվանումները) և հասցեները, այն դատարանի անվանումը, որի կայացրած դատական ակտի դեմ բերվում է վերաքննիչ բողոքը, գործի համարը և դատական ակտի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, վերաքննիչ բողոքի հիմքերը՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի այն խախտումները, որոնք կարող են ազդել գործի ելքի վրա, վերաքննիչ բողոքի հիմնավորումները՝ վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումների, գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները, բողոք բերող անձի պահանջը, ինչպես նաև բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը,

երկրորդը վերաքննիչ բողոքի ձևին ներկայացվող պայմաններն են, որոնց շարքին են դասվում, ի թիվս այլնի, բողոքին կցվող փաստաթղթերը:

Օրենսգրքի 368-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ բողոքին կցվում են

1) պետական տուրքի վճարումը հավաստող ապացույցը, եթե բողոք բերողն ազատված չէ պետական տուրք վճարելու պարտականությունից: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարման գծով արտոնություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը,

2) բողոքը գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցները,

3) բողոքի պատճենը դատական ակտը կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույցը,

4) ներկայացուցչի ստորագրած բողոքին նրա լիազորությունը հավաստող փաստաթուղթը, եթե գործում բացակայում է լիազորագիրը,

5) բողոք բերող անձի այլ միջնորդությունները:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոհիշյալ իրավակարգավորումներով պետական տուրքի վճարումը հավաստող ապացույցը գործին մասնակցող անձանց ուղարկելու ուղղակի պահանջ նախատեսված չէ:

Որպես բողոքին կցվող փաստաթուղթ՝ պետական տուրքի վճարումը հավաստող ապացույցը գործին մասնակցող անձանց ուղարկելու պարտականությունը բխում է Օրենսգրքի 367-րդ հոդվածի (Վերաքննիչ բողոք ներկայացնելու կարգը) 1-ին մասով սահմանված դրույթից, համաձայն որի՝ «Բողոք ներկայացնողը վերաքննիչ բողոքը և դրան կից փաստաթղթերի պատճեններն ուղարկում է գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերադարձված վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու դեպքում սույն գործով վիճարկվող դրույթները չպետք է մեկնաբանվեն տառացի՝ զրկելով անձին վերաքննիչ բողոք բերելու իրավունքի իրականացման հնարավորությունից:

**4.6.** Վիճարկվող դրույթների կապակցությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ կրկին ներկայացվող վերաքննիչ բողոքի հետ կապված կառուցակարգերը չպետք է անհարկի ծանրաբեռնեն անձանց: Այս առումով սույն գործի շրջանակներում կիրառելի է նաև Սահմանադրական դատարանի 2017 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-1363 որոշմամբ արտահայտած այն դիքորոշումը, համաձայն որի. «...երբ Վճռաբեկ դատարանի մատնանշած թերությունները չեն առնչվի վճռաբեկ բողոքի տեքստին, նույն բողոքի պատճենն օրենսգրքի 231-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան գործը քննող դատարան և գործին մասնակցող անձանց կրկին ուղարկելու մասին ապացույցներ ներկայացնելու պահանջն անհարկի ծանրաբեռնում է ոչ միայն բողոքաբերին, այլ նաև համապատասխան կողմերին, որոնք ստիպված են լինելու կրկին ուսումնասիրել նույնաբովանդակ բողոքը: Այդ տեսանկյունից վերադարձնելուց հետո կրկին ներկայացված նույն տեքստն ունեցող բողոքի պատճենը կողմերին կրկին ուղարկելը չի բխում ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից և չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ»:

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒՄ ♦ 3(95)2019

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 170-րդ հոդվածը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**։

1. Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ ձևին և բովանդակությանը չհամապատասխանելու հիմքով վերադարձված վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու դեպքում պետական տուրքի վճարումը հավաստող ապացույցը, ինչպես նաև բողոքի պատճենը գործին մասնակցող անձանց և գործը քննող դատարան կրկին ուղարկելու անհրաժեշտությունը բացակայում է, եթե վերաքննիչ բողոքը փոփոխության չի ենթարկվել։

2. Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասը «Կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները...» դրույթի մասով, համապատասխանում է Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ կրկին ներկայացված բողոքում առկա խախտումները վերաբերում են դատարանի կողմից մատնանշված և չվերացված խախտումներին։

3. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի հիման վրա՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման, քանի որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ և 371-րդ հոդվածի 5-րդ մասերը դիմողի նկատմամբ կիրառվել են սույն որոշման եզրափակիչ մասի առաջին և երկրորդ կետերում բացահայտված սահմանադրախրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ։

4. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

24 սեպտեմբերի 2019 թվականի  
ՄԴՈ-1477



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՄԻՋԵՎ ՎԻՋԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԴՅՈՒՐԱՑՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

24 սեպտեմբերի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Ա. Ադոնցի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի մարտի 14-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կա-



ռավարության և Դանիայի Թագավորության կառավարության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի հուլիսի 2-ին Սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Դանիայի Թագավորության կառավարության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի մարտի 14-ին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին 180 օրվա յուրաքանչյուր ժամանակահատվածի ընթացքում 90 օրից ոչ ավել տևողությամբ ծրագրված այցի համար Դանիայի Թագավորության տարածքում և Շենգենյան գոտու այլ անդամ պետության տարածքում գտնվելու համար վիզաների տրամադրումը դյուրացնելու նպատակով:

2. Համաձայնագիրը կնքվել է նկատի ունենալով, որ 2013 թվականի հունվարի 10-ից Եվրոպական միության (այսուհետ՝ ԵՄ) բոլոր քաղաքացիները՝ 90 օրը չգերազանցող ժամանակահատվածով, Հայաստանի Հանրապետություն ուղևորվելիս կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցմամբ անցնելիս ազատվում են վիզայի պահանջից: Այնուամենայնիվ, եթե Հայաստանի Հանրապետությունը վերականգնի վիզայի պահանջները ԵՄ քաղաքացիների կամ նրանց որոշ կատեգորիաների համար, ապա Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է նույն դյուրացումները, որոնք քննության առարկա Համաձայնագրով տրամադրված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, ինքնաբերաբար, փոխադարձության հիման վրա կիրառել Դանիայի Թագավորության քաղաքացիների նկատմամբ (հոդված 1, կետ 2):

3. Համաձայնագրի 6-րդ հոդվածի համաձայն՝ վիզայի դիմումների հետ կապված ձևակերպումների համար վճարը կազմում է 35 եվրո, որը կարող է վերանայվել՝ Համաձայնագրի 13-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ընթացակարգին համապատասխան (հոդված 6, կետ 1):

4. Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության սկզբունքի հիման վրա երաշխավորում է, որ Դանիայի Թագավորության այն քաղաքացիները, որոնք Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու ընթացքում կորցրել են իրենց անձը հաստատող փաստաթղթերը, կամ որոնցից այդ փաստաթղթերը գողացել են, կարող են դուրս գալ Հայաստանի Հանրապետության տարածքից Դանիայի Թագավորության դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների կողմից տրված՝ անձը հաստատող սահմանը հատելու իրավունք տվող վավեր փաստաթղթերի հիման վրա՝ առանց որևէ վիզայի կամ այլ թույլտվության (հոդված 8):

5. Հայաստանի Հանրապետությունը և Դանիայի Թագավորությունը հանդես են եկել համատեղ հայտարարությամբ դիվանագիտական անձնագրերին առնչվող Համաձայնագրի 10-րդ հոդվածի վերաբերյալ, որում նշվում է, որ Հայաստանի Հանրապետությունը կամ Դանիայի Թագավորությունը կարող են մասնակիորեն կասեցնել Համաձայնագրի գործողությունը, մասնավորապես՝ դրա 10-րդ հոդվածը, Համաձայնագրի 13-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված ընթացակարգին համապատասխան, եթե 10-րդ հոդվածի իրականացման մասով չարաշահումներ են տեղի ունենում մյուս Կողմի կողմից, կամ դրա իրականացումը հանգեցնում է սպառնալիքի՝ ուղղված հանրային անվտանգությանը և Համաձայնագրի 10-րդ հոդվածի իրականացումը կասեցնելու դեպքում, Համաձայնագրի 12-րդ հոդվածի համաձայն երկու Կողմերը պետք է նախաձեռնեն խորհրդակցություններ՝ նպատակ ունենալով լուծելու այն խնդիրները, որոնք հանգեցրել են կասեցման և որպես առաջնահերթություն երկու Կողմերը հռչակում են իրենց հանձնառությունն ապահովել դիվանագիտական անձնագրերի բարձր մակարդակի փաստաթղթային անվտանգություն, մասնավորապես, դրանցում կենսաչափական տվյալների ներդրմամբ:

6. Համաձայնագրում հղում է կատարվում հետևյալ միջազգային պայմանագրերին.

- 2012 թվականի դեկտեմբերի 17-ին Բրյուսելում ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին» համաձայնագրին (ՀՀ կողմից վավերացվել է Ազգային ժողովի 2013 թվականի նոյեմբերի 11-ի ԱԺՈ-090-Ն որոշմամբ (ՄԴՈ-1110),

- 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրին (ՀՀ կողմից վավերացվել է Ազգային ժողովի 2013 թվականի նոյեմբերի 11-ի ԱԺՈ-091-Ն որոշմամբ (ՄԴՈ-1113):

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2018 թվականի մարտի 14-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Դանիայի Թագավորության կառավարության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

24 սեպտեմբերի 2019 թվականի  
ՄԴՈ-1478

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3(95)/2019  
139

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԵՎ «ԿՈՆՐԱԴ ԱՂԵՆԱՈՒԵՐ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒԴԻ ՄԻՋԵՎ  
ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՓՈԽԸՄԲՈՒՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ**

2019 թվականի հուլիսի 4-ին Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանը և «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղի «Քաղաքական երկխոսություն» տարածաշրջանային ծրագրի ղեկավար Թոմաս Շրայելը ստորագրել են փոխըմբռնման հուշագիր երեք տարի ժամկետով: Փոխըմբռնման հուշագրի նպատակն է ապահովել համագործակցության շրջանակ, իրականացնել փորձի փոխանակում սահմանադրական իրավունքի հարցերի շուրջ և խթանել իրավական երկխոսությունը:



Իր ողջույնի խոսքում Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանը կարևորել է տարբեր մակարդակներում հայգերմանական իրավական համագործակցության նշանակությունը և հույս հայտնել, որ այս հուշագիրը ամուր հիմք կհանդիսանա հայգերմանական կապերի հետագա ամրապնդման համար: Հուշագիրը ստորագրող Կոդմերը երկուստեք կարևորել են նման համագործակցության նշանակությունը ժողովրդավարության, իրավունքի գերակայության և հիմնարար ազատությունների պաշտպանության հարցերում:

Հուշագրի ստորագրման արարողությանը մասնակցել են ՀՀ սահմանադրական դատարանի դատավորներ, աշխատակազմի պատասխանատու աշխատակիցներ, ինչպես նաև «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի ներկայացուցիչներ:

Հուշագրի ստորագրման արարողությանը մասնակցել են ՀՀ սահմանադրական դատարանի դատավորներ, աշխատակազմի պատասխանատու աշխատակիցներ, ինչպես նաև «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի ներկայացուցիչներ:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ  
ԱՅՑԸ ԳՈՇԱՎԱՆՔ**

2019 թվականի հուլիսի 5-ին, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և պետական խորհրդանիշների օրվա առթիվ Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանի

գլխավորությամբ Սահմանադրական դատարանի պատվիրակությունն այցելել է Գոշավանք վանական համալիր և հարգանքի տուրք մատուցել հայ իրավական մտքի երևելիներից մեկի՝ միջնադարյան նշանավոր հոգևորական և փիլիսոփա Մխիթար Գոշի հիշատակին:



Հրայր Թովմասյանը և Սահմանադրական դատարանի դատավորները ծաղիկներ են խոնարհել Մխիթար Գոշի հուշարձանին և գերեզմանին, շրջայց կատարել վանական համալիրի տարածքում՝ առավել խորությամբ ծանոթանալով Սրբավայրի պատմությանն ու Մխիթար Գոշի գործունեությանը:

Այցի շրջանակներում պատվիրակության անդամները եղել են նաև Հաղարծին վանական համալիրում, հանդիպում են ունեցել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Տավուշի Թեմի առաջնորդ Տեր Բագրատ Եպիսկոպոս Գալստյանի հետ: Թեմի առաջնորդը հանգամանալից ներկայացրել է ներկայումս Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Տավուշի թեմի կողմից իրագործվող ընթացիկ ծրագրերը: Քննարկվել են Գոշավանք վանական համալիրում իրավական, գիտական, կրթական և մշակութային ծրագրերի իրականացման հնարավորությունները և դրանցում Սահմանադրական դատարանի հնարավոր ներգրավվածությունը ու համագործակցության ձևաչափերը:

**ՀԱՆՐԻՊՈՒՄ ՄԱԿ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ  
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ**

2019 թվականի հուլիսի 24-ին Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանն ընդունել է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի արդարադատության ոլորտի բարեփոխումներին նվիրված Տեխնիկական շրջանակային առաքելության ներկայացուցիչներին . ՄԱԶԾ քաղաքականության ձևավորման, քաղաքական երկխոսության և սահմանադրական գործընթացների մասնագետ **Ջեյսոն Գլուքին**, ՄԱԶԾ մարդու իրավունքների և իրավունքի գերակայության մասնագետ **Այնուրա Բեկլոնեևովային**, Իրավունքի գերակայության Բինգհամ կենտրոնի ներկայացուցիչ **Յան Վան Զիլ Սմիթին**, հանցագործությունների կանխարգելման և քրեական արդարադատության փորձագետ **Կոնստանտին Պալիկարսկուն**, ՄԱԶԾ Հակառոտույցի ծրագրի մասնագետ **Աիդա Արությունովային** և



ՄԱԶԾ Արդարադատության ոլորտի ծրագրի ղեկավար **Մարինե Մալխասյանին**:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել Հայաստանի Հանրապետությունում դատախիրավական բարեփոխումներին: Հրայր Թովմասյանը ներկայացրել է Սահմանադրական դատարանի դերը դատական իշխանության համակարգում, գործող Սահմանադրությամբ Սահմանադրական դատարանին վերապահված հիմնական գործառույթները և դրանց կիրառական պրակտիկան: Սահմանադրական դատարանի նախագահը պատասխանել է հյուրերին հուզող հարցերին կապված դատական համակարգում քննարկվող փոփոխությունների հետ, և այլ հարցերի:

ՍԱՐՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3(95)2019

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒՄ «ԿՈՆՐԱԴ ԱՂԵՆԱՈՒԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԵՏ**

2019 թվականի օգոստոսի 1-ին Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանն ընդունել է «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի տարածաշրջանային ծրագրի ղեկավար Թոմաս Շրապելին և հիմնադրամի երևանյան գրասենյակի նախագծի ղեկավար Լիանա Մարուքյանին:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են 2019 թվականի հուլիսի 4-ին Սահմանադրական դատարանի և հիմնադրամի միջև ստորագրված Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում իրականացվելիք կոնկրետ ծրագրերին և միջոցառումներին առնչվող հարցեր:

Սահմանադրական դատարանի նախագահ Հ. Թովմասյանը գոհունակություն է հայտնել «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի հետ ձեռք բերված պայմանավորվածությունները համատեղ ջանքերով կյանքի կոչելու պատրաստակամության համար և հույս հայտնել, որ դրանց արդյունքները տեսանելի կլինեն արդեն ոչ հեռու ապա-



գայում: Մասնավորապես՝ կոնկրետ պայմանավորվածություններ են ձեռք բերվել 2019 թվականի հոկտեմբերին գերմանական փորձի ուսումնասիրության վրա հիմնված համատեղ գիտագործնական քննարկում կազմակերպելու, իսկ 2020 թվականի հուլիսի 5-ին ՀՀ Սահմանադրության օրվա շրջանակներում համատեղ գիտաժողով անցկացնելու վերաբերյալ:

Կողմերը քննարկել են այս և եկող տարվա ընթացքում ուսանողների, երիտասարդ դասախոսների շրջանում հայաստանյան առաջատար բուհերի իրավաբանական ֆակուլտետների մասնակցությամբ սահմանադրական իրավունքին նվիրված գիտագործնական հոդվածների մրցույթ անցկացնելու, լավագույն հոդվածների հեղինակներին կրթաթոշակ տրամադրելու և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

«Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամը պատրաստակամություն է հայտնել անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել Սահմանադրական դատարանի կողմից իրականացվելիք այլ ծրագրերին և նախաձեռնություններին:

**ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ՓԱՐԻԶՈՒՄ**

**2019 թ. սեպտեմբերի 12-ից 13-ը** ՀՀ սահմանադրական դատարանի դատավոր տիկին Ալվինա Գյուլումյանը մասնակցեց Ֆրանսիայի Հանրապետության Սահմանադրական խորհրդի, Պետական խորհրդի և Վճռաբեկ դատարանի կողմից կազմակերպված «Եվրոպայի



**խորհրդի անդամ երկրների գերագույն դատարանների խորհրդաժողովին»:** Այս բարձր մակարդակի խորհրդաժողովը կազմակերպվել էր Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեում Ֆրանսիայի Հանրապետության նախագահության շրջանակներում, որի առանցքում են մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական համակարգի ամրապնդումը, իրավահավասարության և միասնական համակեցության խթանումը, իրավունքի գերակայությանը և մարդու իրավունքների ոլորտում նոր մարտահրավերների դիմագրավումը:

ՍԱՐՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 3(95)/2019



Ի լրումն խորհրդաժողովի երկու լիազումար նիստերին՝ միջոցառման ընթացքում կազմակերպվել են նաև թեմատիկ սեմինարներ-քննարկումներ՝ նվիրված ներպետական դատական ատյանների և ՄԻԵԴ-ի փոխհարաբերություններին, արդյունավետ դատական պաշտպանության միջոցներին և խոսքի ու արտահայտվելու ազատությանը:

Միջոցառման աշխատանքներին մասնակցում էին Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների 100-ից ավել բարձր դատարանների ներկայացուցիչներ, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և այլ եվրոպական վերապետական մարմինների ներկայացուցիչներ: Խորհրդաժողովի մասնակիցներին Ելիսեյան Պալատում ընդունել է նաև Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ն.Գ. Էմանուել Մակրոնը:

**ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ**

2019 թվականի սեպտեմբերի 17-ին Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանն ընդունել է ՀՀ արդարադատության նախարարության հրավերով Հայաստանում գտնվող Եվրոպայի Խորհրդի «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) փորձագիտական խմբի անդամներին:



Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձ են կատարել դատաիրավական և հակակոռուպցիոն ոլորտի բարեփոխումների բովանդակությանն ու ընթացքին: Երկուստեք կարևորվել է միջազգային գործընկերների աջակցությունն ու խորհրդատվությունը այդ բարեփոխումների իրականացման գործում:

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության  
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝  
Երևան, Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 011-58-81-81(189)  
E-mail: armlaw@concourt.am.  
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 18.11.2019թ.  
Դասիչ՝ 77754  
Գրաչափը՝ 70X100 1/16  
Տպաքանակը՝ 100

ՀՀ ՍԴ տեղեկագիրը  
ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի  
որոշմամբ ընդգրկված է ՀՀ ԲՈԿ-ի  
ատենախոսությունների հիմնական արդյունքների  
և դրույթների հրապարակման համար ընդունելի  
հրատարակությունների ցուցակում

---

Вестник Конституционного Суда Республики Армения N 3(95)2019  
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 3(95)2019  
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 3(95)2019